

Ն. ՌԻԲԿԻՆ

ՅԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀԱՐԹԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ

ՀԻՍՏ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1937

05 FEB 2010

Բնագիրը հաստատված է ՌեհՅՄՀ Լուսժողկոմատի կողմից

Ն. ՌԻԲԿԻՆ

ՅԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ


ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀԱՐԹԱԶԱՓՈՒԹՅՈՒՆ

ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴԳՐՈՑԻ
6-ՐԴ, 7-ՐԴ, 8-ՐԴ ՅԵՎ 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՅԵՐՐՈՐԴ ԲԱՐԵՓՈՆՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Թարգմանեց՝ Մ. ԱԼԵԿՍԱՆՅԱՆ




ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

§ 1. Ուղիղ Գիծ

Հասկանալի չափումն ու նրանց հետ գործողություններ կատարելը

1. 1-ին դժագրում տրված է հաստոցի մասը: Ոգտվելով տվյալ մասշտաբից, չափեցեք դժագրում նշված հատվածները և ստացած թվերը գրեցեք տետրում:

2. Կցել են 3 փայտե հեծան, վորոնցից առաջինի յերկարութունն է 3,4 մ, յերկրորդինը՝ 4,8 մ, իսկ յերրորդինը՝ 5,8 մ: Վորոշեցեք նրանց ընդհանուր յերկարութունը՝ թվաբանորեն և կառուցելով, մասշտաբ ընդունել 1 սմ=1 մ:



Գծ. 1

3. Յեղևնու յերկարութունը 20,25 մ էր. նրանից ներքևի կողմից առաջին անգամ սղոցեցին 3,75 մ յերկարությամբ մի հատված, ապա 7,40 մ յերկարություն ունեցող գերան: Յեղևնու մնացած մասն ինչքան յերկարություն ունի: (Լուծել թվաբանորեն և յերկրաչափորեն):

4. AB հատվածի յերկարությունն է 20 մ: Այդ հատվածի A ծայրից անջատել են AC=5,1 մ մասը, իսկ B ծայրից՝ BD=7,9 մ մասը: Վորոշեցեք CD հատվածի յերկարությունը:

5. Լուծեցեք 4-րդ խնդիրը, փոխելով թվերն այսպես՝ AB=4,8 մ, AC=2,8 մ և BD=3 մ:

6. Գծագրեցեք մի հատված, վորը հավասար լինի $3a+2b$, վորտեղ a-ն և b-ն տվյալ հատվածների յերկարություններն են:




11-288879

7. Գծագրեցեք մի հատված, վորը հավասար լինի $4m-3n$, վորտեղ m -ն ու n -ը ավելի հատվածների յերկարություններն են ($m > n$):

8. Վորեւ ուղիղի վրա գտնվող M կետից մինչև AB ուղղությամբ վերցրել են 2 հատված $MN=100$ սմ և $MP=160$ սմ: Գտեք այդ հատվածների միջնակետերի հեռավորությունը:

9. AB հատվածը բաժանված է յերկու անհավասար մասերի: Այդ մասերի միջնակետերի հեռավորությունն է $2,75$ մ: Գտեք AB հատվածի յերկարությունը:



Գծ. 2

10. Գծագրով (գծ. 2) բացատրեցեք, թե ինչպես պետք է յերկու հատվածների ավելի S գումարով և d տարբերությունով գտնել այդ հատվածները (կառուցելով):

Համեմատական բաժանման կիրառումը հասվածների նկատմամբ

11. AB հատվածը հավասար է $2,8$ մ-ի: Գտեք այդ հատվածի միջնակետի և այն կետի հեռավորությունը, վորը ավելի AB հատվածը բաժանում է $\frac{2}{3} : \frac{4}{15}$ հարաբե-

րությամբ:


12. AB հատվածը շարունակել են BC -ի չափ այնպես, վոր AC -ն m անգամ մեծ է AB -ից: Գտեք $AB:BC$ հարաբերությունը:

13. AB հատվածը բաժանված է 3 մասերի, վորոնք հարաբերում են իրար այնպես, ինչպես $2:3:4$: Վորոշեցեք AB -ի յերկարությունը, յեթե ծայրի մասերի միջնակետերի հեռավորությունը հավասար է $5,4$ մ-ի:

14. AB հատվածը C կետով բաժանվում է $5:7$ հարաբերությամբ, իսկ D կետով $5:11$ հարաբերությամբ: Վորոշեցեք AB հատվածի յերկարությունը, յեթե C և D կետերի հեռավորությունը հավասար է 10 մ-ի:


Ռեկյալի յերկարությունը

15. Տրված է $ABCDE$ բեկյալը (գծ. 3): Չափելով բեկյալի յուրաքանչյուր հատվածը, գտեք այդ հատվածների գումարը: Ուղղելով բեկյալը (կառուցելով) չափեցեք ստացված հատվածի յերկարությունը: Ինչպե՞ս պետք է ստացած յերկու պատասխանները:



Գծ. 3

16. 4-րդ գծագրում տրված է Բերլին-Սուխում ողային հաղորդակցության քարտեզը: Ուղղելով այդ բեկյալը, բաղդատեցեք Մոսկվա-Բերլին և Մոսկվա-Սուխում հեռավորությունները: Ոգտվելով մասշտաբով՝ գտեք այդ հեռավորություններից յուրաքանչյուրը:



Գծ. 4.

Վեճեր յեվ ուղիղներ, նրանց փոխադարձ դիրքը

17. Իմանալ՝ A, B և C կետերը կգտնվեն մի ուղիղի վրա, յեթե նրանց հեռավորություններն են՝

- 1) $AB=20$ մ, $AC=13$ մ, $BC=7$ մ
- 2) $AB=4$ մ, $AC=7$ մ, $BC=3$ մ
- 3) $AB=1,8$ մ, $AC=1,3$ մ, $BC=3$ մ

18. 1) Տրված է 3 կետ, վորոնք չեն գտնվում մի ուղիղի վրա: Այդ կետերից քանի՞ տարբեր ուղիղ կարելի է տանել, վերցնելով այդ կետերը զույգ առ զույգ:

2) Գտնել ուղիղներով կարելի չե 4 կետ դուրս առ դուրս միացնել, յեթե այդ կետերից վոչ մի յերեքը չեն գտնվում մի ուղղի վրա: Նույն հարցը լուծեցեք 5, 20 և n կետերի վերաբերյալ:

§ 2. ԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Անկյունների կառուցումը, չափումը և նրանց հետ կապված խնդիրները

1. Կառուցեք սովյալ անկյան հավասար մի անկյուն և անկյունաչափով չափեցեք նրա մեծությունը:

2. Անկյունաչափի միջոցով կառուցեք 60°, 75°, 125°, 150° անկյուններ:

3. Այժմ չափով կառուցեք 30°, 45°, 120° անկյուններ: Անկյունաչափով ստուգեցեք կառուցված անկյունները:

4. Կառուցեք սովյալ յերկու անկյունների գումարին հավասար անկյունը:

5. Գտեք սովյալ յերեք անկյունների գումարը:

6. Գտեք հետևյալ անկյունների գումարը՝ 1) 45°36' և 78°57' 2) 26°16'45" և 117°52'30" 3) 15°40', 37°50'30", 80°0'45" և 20°30'40":

7. Կառուցեք սովյալ յերկու անկյունների տարբերություն հավասար անկյունը:

8. Գտեք հետևյալ անկյունների տարբերությունը՝ 1) 9°35'15" և 48°45'45", 2) 71°10' և 29°52'30", 3) 153°17'42" և 68°29':

9. Գտեք հետևյալ սուր անկյունները մինչև ուղիղ անկյուն լրացնող անկյունները՝ 1) 70°, 2) 34°23', 3) 22°42'38":

10. Տված ե յերկու անկյունների գումարն ու տարբերությունը: Կառուցեք այդ անկյունները:

11. Տված սուր անկյունը մեծացրեք 3 անգամ:

12. Գտեք հետևյալ արտադրյալները՝ 1) 35°42'. 5, 2) 17°23'45". 4, 3) 55°32'30". 3:

13. Տված անկյունը բաժանեցեք 2, 4, 8, 16 հավասար մասերի:

14. Գտեք հետևյալ քանորդները՝ 1) 95°15' : 2, 2) 147°45' : 2, 3) 98°21'50" : 4, 4) 161°0'40" : 8:

15. Գծագրեք մի սուր և մի բութ անկյուն. իմանալ՝ քանի անգամ սուր անկյունը պարունակվում է բութ անկյան մեջ:

16. Գտեք հետևյալ քանորդները՝ 1) 105° : 30°, 2) 66°55' : 24°20', 3) 28°35' : 40°50':

Առաջին անկյուններ

17. Բութ անկյան ներսը, նրա գագաթից, իր կողմերին տարված ե յերկու ուղղահայաց: Այդ ուղղահայացներով կազմված անկյունը հավասար է $\frac{4}{7}$ Ժ: Վորոշեցեք բութ անկյունը:

Անկյունաչափի ոգնություններ կատարեցեք ճշգրիտ գծագիր:

18. Տրված ե յերկու առընթեր անկյուն՝ սուր և բութ: Այդ անկյունների գագաթից նրանց ընդհանուր կողմին տարած ուղղահայացը սուր անկյան մյուս կողմի հետ կազմում է $\frac{5}{7}$ d ան-

կյուն, իսկ բութ անկյան մյուս կողմի հետ՝ $\frac{3}{7}$ d անկյուն: Գտեք տված անկյունների գումարը և կատարեցեք ճշգրիտ գծագիր:

19. Յերկաթուղային կայարանի պահեստի դիժը հիմնական գծից հեռանում է 20° անկյան տակ: Գծագրեցեք գծերի դիրքը:

20. Գծագրեցեք մի անկյուն, վորը սովյալ ABC անկյան հետ կազմի 2 ուղիղ անկյուն:

21. AB ուղղի վրա վերցված է C կետն ու նրանից տարված է CD ճառագայթն այնպես, վոր ACD անկյունը 4 անգամ մեծ է BCD անկյունից: Վորոշեցեք այդ անկյունների մեծությունը:

22. Կից անկյուններից մեկը մյուսից $\frac{2}{9}$ Ժ-ով մեծ է: Վորոշեցեք այդ անկյունները:

23. Վորոշեցեք այն անկյունը, վորը հավասար է իր կից անկյան $\frac{3}{7}$ -ին:

24. ABC և DBC առընթեր անկյուններից առաջինը հավասար է 108°-ին, իսկ յերկրորդն առաջինից $1\frac{1}{2}$ անգամ փոքր է: AB և BD կողմերը մի ուղիղ գիծ կազմում են, թե վոչ:

25. Յերկու առընթեր անկյունների հարաբերությունը հավասար է 7 : 3, իսկ տարբերությունը՝ 70°: Այդ անկյունները կից են, թե վոչ:

26. ABC և CBD անկյունները կից են: CBD անկյունը հավասար է 0,375 Ժ: Վորոշեցեք B գագաթից AB կողմին տարած ուղղահայացով և ABC անկյան կիսողով կազմված անկյան մեծությունը: Կատարեցեք գծագիր:

27. Ապացուցեք, Վոր յերկու կից անկյունների կիսողները փոխադարձ ուղղահայաց են:

28. Վորոշեցեք AOB և BOC առընթեր անկյունները, յեթե նրանց գումարը հավասար է 216°-ի, իսկ AO կողմի շարունակուելունը (գագաթից) BOC անկյունը բաժանում է յերկու հավասար մասերի: Կատարեցեք ճշգրիտ գծագիրը:


Անկյուններ, վորոնք ունեն մի բնութագուր գագաթ յեվ դասավորված են ուղղի մի կողմի վրա

29. 4 առընթեր անկյուններից, վորոնց ծայրի կողմերը կազմում են մի ուղիղ գիծ, յուրաքանչյուրը հաջորդից $\frac{1}{9}$ Ժ-ով մեծ է:

Հաշվեցեք և կառուցեք այդ անկյունները:

30. Պատուհանի վերևի մասը 5-րդ գծագրի վրա պատկերված տեսքն ունի: Վորոշեցեք քանի՞ աստիճան է պարունակում յերկու հարևան ճառագայթներով կազմված անկյան մեծությունը:

31. Քանի՞ աստիճան է պարունակում անիվի յերկու հարևան ճաղերի միջև գտնվող ան-



Գծ. 5

կյունը, յեթե ճաղերի թիվն է՝ 1) 18, 2) 16:

32. ABC անկյունը հավասար է

6

11

Ժ-ի: Այդ անկյան գագաթից՝ անկյունից դուրս, տարված է BD ճառագայթը, վորը հավասար թեքություն ունի BA և BC կողմերից: Հաշվեցեք այդ թեքության մեծությունը:

33. Մի կետից դուրս յերևող 4 ճառագայթներով կազմված անկյուններից յուրաքանչյուրը նախորդից 2 անգամ մեծ է: Գտեք այդ անկյունների մեծությունը և կառուցեք այդ անկյունները:

Անկյուններ, վորոնք ունեն մի բնութագուր գագաթ յեվ դասավորված են ուղղի յերկու կողմերում

Հավագիր անկյուններ

34. Յերկու հատող ուղիղներով կազմված չորս անկյուններից մեկը հավասար է $\frac{3}{5}$ Ժ-ի: Վորոշեցեք մյուս անկյունների մե-

ծությունները:

35. Միևնույն քանոնի միջոցով գծագրեցեք մի անկյուն, վորը հավասար լինի ալյալ անկյան և ունենա նրա հետ մի ընդհանուր գագաթ:

36. AB և CD հատվածները հատվում են O կետում: AOD և COB անկյունների գումարը հավասար է 230°-ի: Վորոշեցեք AOC անկյունը:

37. Տված անկյան և նրան կից յերկու անկյունների գումարը հավասար է $2\frac{3}{8}$ Ժ-ի: Վորոշեցեք տված անկյունը:

§ 3. Յեռանկյուններ Յեվ ԲԱԶՄԱԿՅՈՒՆՆԵՐ, ՈՒՂԱԿՅՈՒՆՆԵՐ, ՅԱՅՆԵՐ ՅԵՎ ԹԵՔԵՐ, ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԿԱՄԱԶՄՓՈՒԹՅՈՒՆ

Հավասարասուն յեռանկյուն

1. Կառուցեք հավասարասուն յեռանկյուն յերբ արված են՝

- 1) հիմքն ու սրունքը.
- 2) հիմքն ու նրա առընթեր անկ ունը.
- 3) սրունքն ու գագաթի անկյունը.
- 4) սրունքն ու հիմքին առընթեր անկյունը:

2. Հավասարասուն յեռանկյան սրունքներից մեկի վրա կառուցված է հավասարակողմ յեռանկյուն, վորի պարագիծը հավասար է 45 մ-ի, իսկ հավասարասուն յեռանկյան պարագիծը՝ 40 մ-ի: Վորոշեցեք տված յեռանկյան հիմքը:


Յեռանկյունների կառուցումն ու նրանց հավասարությունը

3. Կառուցեք յեռանկյունը, յերբ տված են՝


- 1) մի կողմն ու նրան առընթեր յերկու անկյունները.
- 2) յերկու կողմերն ու նրանցով կազմված անկյունը.
- 3) յերեք կողմերը:
- 4. Ապացուցեք, վոր հավասարասուն յեռանկյան հիմքի անկյունների կիսորդները հավասար են:

5. Ապացուցեք, վոր հավասարասրուն յեռանկյան սրունքներին տարած միջնագծերը հախասար են:

6. Յերկու անանցանելի կետերի՝ A և B հեռավորությունը չափելու համար (դժ. 6) ընտրում են մի այնպիսի C կետ, զորից յերևան, թե A և թե B կետերը: Ապա անց են կացնում AC և BC ուղիղները, վորոնց շարունակությունները վրա վերցնում են CD=AC և EC=CB: Այդ դեպքում ED հատվածը հավասար է վորոնած AB հեռավորությանը: Ինչո՞ւ:



Գժ. 6



Գժ. 7

7. A և B կետերի հեռավորությունը չափելու համար (A կետն անմատչելի չե) անց են կացնում AB հատվածը (դժ. 7) և նրա շարունակության վրա չափում են BE կամայորեն վերցրած հատվածը: Հետո տեղանքում ընտրում են մի D կետ, վորից յերևա A կետը և հնարավոր լինի անցնել դեպի B և E կետերը: Անց են կացնում BDG և EDF ուղիղները և չափում $FD=DE$ և $DG=BD$: Ապա նայելով A կետին գնում են FG ուղղով, մինչև վոր գտնում են մի H կետ, վորը գտնվի AD ուղղի վրա: Այդ դեպքում CH-ը հավասար է լինի վորոնած հեռավորությանը: Ապացուցեք այդ:

8. ABC հավասարակողմ յեռանկյան կողմերի վրա վերցված են հավասար հատվածներ՝ $AB_1=BC_1=CA_1$ և A_1, B_1 և C_1 կետերն ուղիղներով միացված են: Ապացուցեք, վոր $A_1B_1C_1$ յեռանկյունը հավասարակողմ է:

9. ABC հավասարակողմ յեռանկյան կողմերը շարունակված են՝ AB կողմը B գագաթից, BC կողմը C գագաթից և CA կողմը A գագաթից: Շարունակությունների վրա վերցված են հավասար հատվածներ: Այդ հատվածների ծայրերը միացված են իրար հետ: Վորոշեցեք ստացված յեռանկյան ձևը:

10. 1) Կառուցեք յեռանկյունը, յերբ տված են յերկու կողմերը և այդ կողմերից մեկի դիմաց գտնվող անկյունը:

2) Յեթե մի յեռանկյան յերկու կողմերը և նրանցից մեկի դիմաց գտնվող անկյունը համապատասխանաբար հավասար են մյուս յեռանկյան յերկու կողմերին և նրանց մեկի դիմաց գտնվող անկյանն, ապա այդ յեռանկյունները հավասար են: Ապացուցեք այս թեորեմը:

11. 1) Կառուցեք յեռանկյունը, յերբ տված են յերկու կողմերը և նրանցից փոքրի դիմաց գտնվող անկյունը:

2) Յեթե մի յեռանկյան յերկու կողմերը և նրանցից փոքրի դիմաց գտնվող անկյունը համապատասխանաբար հավասար են մյուս յեռանկյան յերկու կողմերին և նրանցից փոքրի դիմաց գտնվող անկյանն, ապա այդ յեռանկյունները կարող են լինել ինչպես հավասար, այնպես և անհավասար: Ապացուցեք այդ:

12. Ապացուցեք հետևյալ թեորեմը.—Յեթե մի յեռանկյան յերկու կողմերը և միջնագիծը համապատասխանաբար հավասար են մյուս յեռանկյան յերկու կողմերին և միջնագծին, ապա յեռանկյունները հավասար են: 1-ին դեպք՝ յեթե միջնագիծը տարված է տվյալ կողմերից մեկին: 2-րդ դեպք՝ յերբ միջնագիծը տարված է տվյալ կողմերի միջով:

Յեռանկյան կողմերի միջով յեղած կայք

13. Յեռանկյունը կարող է արդյոք լինել հետևյալ կողմերով՝ 1) 5 մ, 10 մ, 12 մ, 2) 1 մ, 2 մ, 3,3 մ, 3) 1,2 մ, 1 մ, 2,2 մ:

14. Յեռանկյան կողմերը կարող են հարաբերվել այնպես, ինչպես՝ 1) 1:2:3, 2) 2:3:4:

15. Յեռանկյան կողմերից մեկը հավասար է 1,9 մ-ի, մյուսը՝ 0,7 մ-ի: Վորոշեցեք յերրորդ կողմը, ի կանալով, վոր նա արտահայտվում է ամբողջ մետրերով:

16. Հավասարասրուն յեռանկյան պարագիծը հավասար է 1 մ-ի, իսկ հիմքը՝ 0,4 մ-ի: Վորոշեցեք սրունքի յերկարությունը:

17. Հավասարասրուն յեռանկյան կողմերից մեկը հավասար է 25 մ-ի, իսկ մյուսը՝ 10 մ-ի: Այդ կողմերից վերն է հանդիսանում հիմքը:

18. Հավասարասրուն յեռանկյան սրունքներից մեկին տարած միջնագիծը յեռանկյան պարագիծը բաժանում է յերկու

մասերի, վորոնց յերկարություններն են՝ 15 սմ և 6 սմ: Վորոշեցեք յեռանկյան կողմերը:

19. Ապացուցեք, վոր յեռանկյան մեջ մի կողմը պարագծի կիսից փոքր է:

20. Ապացուցեք, վոր յեռանկյան ներսը գտնվող վորևեկետի և յեռանկյան գաղաթնների հեռավորությունների գումարը մեծ է պարագծի կիսից:

21. ABC յեռանկյան ներսում BC կողմին տարված է AD ուղիղն այնպես, վոր CAD անկյունը հավասար է ACD անկյանը: ABC յեռանկյան պարագիծը հավասար է 37 մ-ի, իսկ ABD յեռանկյան պարագիծը՝ 24 մ-ի: Վորոշեցեք AC-ի յերկարությունը:

22. ABC հավասարասրուն յեռանկյան մեջ տարված է BD բարձրությունը: ABC յեռանկյան պարագիծը հավասար է 50 մ-ի, իսկ ABD յեռանկյան պարագիծը՝ 40 մ-ի: Վորոշեցեք BD բարձրությունը:

23. ABC հավասարասրուն յեռանկյան AB սրունքը հավասար է 14 սմ-ի. այդ սրունքի D միջնակետից նրան տարված ուղղահայացը BC կողմը հատում է E կետում, իսկ E կետը միացված է A կետի հետ: Վորոշեցեք AC-ի յերկարությունը, յեթե ABC յեռանկյան պարագիծը հավասար է 24 սմ-ի:

24. Տվյալ ուղղից դուրս գտնվող մի կետից տարված են 2 հավասար թեքեր, վորոնց հիմքերի հեռավորությունը հավասար է 16 մ-ի: Վորոշեցեք թեքերի սրտեկցիաները (առաջաձգվելով):

25. Կառուցեք ուղղանկյուն յեռանկյունը, յերբ հայտնի յեն՝

- 1) յերկու եջերը.
- 2) եջն ու ներքնաձիղը.
- 3) եջն ու սուր անկյուններից մեկը.
- 4) ներքնաձիղն ու սուր անկյուններից մեկը:

26. Գետի տարբեր ափերում գտնվող յերկու կետերի հեռավորությունը վորոշելու համար եկկերի միջոցով անց են կացնում AB-ին ուղղահայաց վորոշ յերկարությամբ BD հատվածը (գծ. 8): BD հատվածը E կետով կիսում են: Ապա D կետից BD-ին կանգնեցնում են DC ուղղահայացը և նայելով A-ի վրա

Ուղղահայաց յեվ թեք գծեր

Ուղղանկյուն յեռանկյունների կառուցումն ու հավասարությունը

գնում են DC-ով, մինչև այն C կետը, վորը գտնվում է AE ուղղի վրա: DC յերկարությունը հավասար է AB-ին: Ապացուցեք այդ:

27. 1) Ապացուցեք, վոր անկյան կիսորդին ուղղահայաց ուղիղը նրա կողմերից հատում է հավասար հատվածներ:

2) Անկյան ներսը և կամ դուրսը գտնվող վորևեկետից տարեք մի այնպիսի ուղիղ, վորն անկյան կողմերից հատի հավասար մասեր:

28. 1) Ապացուցեք, վոր հավասարասրուն յեռանկյան սրունքներին տարած բարձրությունները հավասար են:

2) Կազմեք հակադարձ թևերին ու ապացուցեք այն: 29. A, B, C յերեք գյուղեր չեն գտնվում մի ուղիղի վրա: Գծազրի վրա ցույց տվեք, թե ինչպես պետք է անցկացնել A գյուղից մի ուղիղ ճանապարհ, վորը B և C գյուղերից հավասար հեռավորության վրա գտնվի:

30. AB ուղիղի մի կողմում տրված է յերկու կետ՝ M և N: Գտեք AB ուղղի վրա մի այնպիսի C կետ, վոր AB ուղիղը MCN բեկյալի կողմերի հետ կազմի հավասար անկյուններ:


31. Տված է ABC յեռանկյունը: A անկյան կիսորդի վրա գտեք մի այնպիսի կետ, վոր հավասարապես հեռացված լինի B և C գաղաթններից:

32. Գտեք մի կետ, վորը հավասարապես հեռացված լինի յեռանկյան գաղաթներից: Այդ կետը միշտ յեռանկյան ներսը կլինի:

33. Տված է անկյունը և նրա ներսը գտնվող M կետը: Գտեք մի այնպիսի կետ, վորը հավասարապես հեռացված լինի անկյան կողմերից և M կետից գտնվի տված a հեռավորության վրա:

34. Յեռանկյան կողմի վրա գտեք մի այնպիսի կետ, վորը մյուս կողմերից հավասար հեռավորություններ ունենա:

35. Յեռանկյան ներսը գտեք մի կետ, վոր կողմերից հավասարապես հեռացված լինի:



Գծ. 8

36. Տված է A անկյունն ու B և C կետերը, վորոնցից մեկը գտնվում է անկյան մի կողմի, իսկ մյուսը՝ մյուս կողմի վրա: Գտեք՝

1) M կետը, վորը հավասարապես է հեռացված անկյան կողմերից և բավարարում է $MC=MB$ պայմանին:

2) N կետը, վորը գտնվում է յեռանկյան մի կողմի վրա, ընդվորում այնպես, վոր $NC=CB$:

3) P կետն այնպես, վոր B և C կետերից յուրաքանչյուրն A և P կետերից հավասար հեռավորություն ունենան:

37. Տված է A անկյունն ու նրա կողմերից մեկի վրա՝ B կետը: Գտեք մյուս կողմի վրա մի այնպիսի C կետ, վոր $CA+CB$ գումարը հավասար լինի տվյալ l յերկարությանը:

38. Վորոշեցեք քառանկյան կողմերը, յեթե նրանք հարաբերում են իրար այնպես, ինչպես 2:5:4:8, իսկ պարագիծը հավասար է 76 մ-ի:

39. Քառանկյան կողմերը կարող են իրար հարաբերել այնպես, ինչպես 2:3:4:10:

40. 1) Կառուցեք քառանկյուն, վորի կողմերն են 1 սմ, 2 սմ, 3 սմ և 4 սմ, իսկ առաջին և չորրորդ կողմերի միջև տարած անկյունագիծը հավասար է 2,6 սմ-ի:

2) Նույնը, յեթե կողմերը հավասար են 1,2 սմ, 1,8 սմ, 2,4 սմ և 3,0 սմ, իսկ յերկրորդ և յերրորդ կողմերով կազմված անկյունը՝ 102° -ի:

41. Քառանկյունն անկյունագծով բաժանված է յերկու յեռանկյունների, վորոնց պարագծերը հավասար են 25 մ և 27 մ. քառանկյան պարագիծը 32 մ: Գտեք այդ անկյունագծի յերկարությունը:

42. Քանի՞ անկյունագիծ կարելի յէ տանել 1) հնգանկյան, 2) տասնանկյան, 3) n-անկյան յուրաքանչյուր գագաթից:

43. Քանի՞ յեռանկյուն կստացվի, յեթե 1) վեցանկյան, 2) ութանկյան, 3) n-անկյան մի գագաթից տանենք բոլոր անկյունագծերը:

44. Ընդամենը քանի՞ անկյունագիծ կարելի յէ տանել 1) հնգանկյան, 2) տասնանկյան, 3) n-անկյան մեջ:

Քառանկյուններ

Բազմանկյուններ

ՆԻՑՑՑՑ

45. Բազմանկյունը քանի՞ կողմեր ունի, յեթե նրանց թիվը մի գագաթից տարված անկյունագծերի թվից m անգամ մեծ է ($m=2, 4, 5$):

46. Բազմանկյունը քանի՞ կողմ ունի, յեթե նրա բոլոր անկյունագծերի թիվն m անգամ մեծ է կողմերի թվից ($m=\frac{1}{2}, 1, 2, \frac{5}{2}$):

Ստացնալիս համաչափություն

47. Կառուցեք տված հատվածին համաչափ հատվածը՝ համաչափության տված առանցքի նկատմամբ:

48. Ուղղանկյուն յեռանկյունը դարձրեք մի այնպիսի պատկեր, վորը համաչափ է տված յեռանկյան 1) մի եջի նկատմամբ, 2) մյուս եջի նկատմամբ, 3) ներքնաձիգի նկատմամբ:

49. Տված են համաչափության առանցքն ու շրջանագիծը: Գծագրեցեք նրան համաչափ շրջանագիծը:

50. Տված են համաչափության առանցքն ու բեկյալը: Գծագրեցեք մի ուրիշ բեկյալ վորը համաչափ լինի տված բեկյալին:

§ 4. ԶՈՒԳԱՀԵՌ ՈՒՂԻՂՆԵՐ. ՅԵՌԱՆԿՅԱՆ ՅԵՎ ԲԱԶՄԱՆԿՅԱՆ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ

Զուգահեռ ուղիղներով յեղ հասոցներով կազմված անկյուններ

1. Յերկու զուգահեռ ուղիղներ հատված են մի յերրորդով: Տված է, վոր ստացած ութ անկյուններից մեկը հավասար է 72° -ի: Մնացած անկյուններից յուրաքանչյուրն ինչի՞ յէ հավասար:

2. Յերկու զուգահեռ ուղիղներ հատված են մի յերրորդով: Ներսի անկյուններից մեկը հավասար է $1\frac{3}{8}$ d-ի: Այդ անկյան կիսորդն ինչպիսի՞ անկյունով է հատում մյուս զուգահեռը:

3. Յերկու զուգահեռ ուղիղներ հատված են մի յերրորդ ուղղով: Ներսի անկյուններից մեկը, նրան հատմամբ ներսի միակողմանի անկյան և իւրազգիտ անկյան գումարը հավասար է $3\frac{2}{7}$ d-ի: Վորոշեցեք առաջին ներսի անկյան համապատասխան անկյունը:



ՀԱՍՏՈՒՄ

4. $\triangle AMB$ և $\triangle CND$ ուղիղները հասված են $\triangle EMNF$ ուղիղով:
 $\angle CNF = \frac{3}{16} d$ և $\angle NMB = \frac{3}{4} d$: Տվյալ ուղիղները զուգահե՞ն են: Ինչպե՞ս սկսաք և փոխել $\triangle NMB$ անկյան մեծությունը, վոր սվյալ ուղիղները օգուղահեա լինեն:

5. $\triangle AMNB$ և $\triangle CRSD$ ուղիղները հասված են $\triangle EMRF$ և $\triangle GNSH$ ուղիղներով: Տված է, վոր $\angle AME = 1\frac{5}{24} d$, $\angle ANS = 1\frac{3}{8} d$ և $\angle MRS = \frac{19}{24} d$: Վորոշեցեք $\angle DSH$ -ը:

Ջուգահեա չեվ ուղիղահայաց կողմերով անկյուններ

6. Տրված է $\angle ABC = 43^\circ$: Սյդ անկյան ներսը զանժող P կետից նրա կողմերին տարված է 2 զուգահեա ուղիղ՝ մինչև անկյան կողմերի հեա հասվելը: Վորոշեցեք առաջացած քառանկյան անկյունները:

7. Տված է յերկու անկյուն, վորոնց կողմերը զուգահեա են: Մի անկյունը մյուսից 90° -ով մեծ է: Վորոշեցեք այդ անկյունները:

8. Տված է յերկու անկյուն ուղղահայաց կողմերով: Նրանցից մեկը մյուսից 4 անգամ փոքր է: Գտեք յուրաքանչյուր անկյան մեծությունը:

9. Յեռանկյան հիմքի անկյունների գագաթներից մյուս կողմերին տարած ուղղահայացներով կազմված անկյունը հավասար է 130° -ի: Հաշվեցեք յեռանկյան գագաթի անկյունը:

Յեռանկյան անկյունների գումարը

10. Յեռանկյան անկյուններից մեկը հավասար է $1\frac{1}{6} d$ -ի, խկ մյուսը՝ $\frac{3}{8} d$ -ի:

Յերրորդ անկյունն ինչի՞ յե հավասար:

11. Վորոշեցեք յեռանկյան անկյունները, յեթե նրանք հարաբերում են այնպես, ինչպես 1:2:3:

12. Յեռանկյան յերկու անկյունները հարաբերում են այնպես, ինչպես 5:7, խկ յերրորդ անկյունն առաջին անկյունից $\frac{4}{19} d$ -ով մեծ է: Վորոշեցեք յերրորդ անկյունը:

13. Յեռանկյան յերկու անկյունները հավասար են $110^\circ 23' 50''$ և $24^\circ 36' 40''$: Վորոշեցեք յերրորդ անկյունը:

14. Ուղղանկյուն յեռանկյան սուր անկյուններից մեկը հավասար է $58^\circ 20'$: Վորոշեցեք մյուս սուր անկյունը:


Հավասարասրուն յեռանկյուն

15. $\triangle ABC$ -ի միջին շերտերում ընդունված են AC և AB ձգեղաարունքի անկյան հեա կալ չափերը (դժ. 9)

Թիթեղի տանիքի համար	120°	(մոտավ)
Նալաքարտի »	140°	»
Կղմինարի »	160°	»
Տախտակի »	90°	»
Ծղոտի »	60°	»

Վորոշեցեք յուրաքանչյուր տանիքի համար այն անկյունը, վոր կազմում են ձգեղաարունքները CB հորիզոնական գծի հեա:

16. Հավասարասրուն յեռանկյան գագաթի անկյունը հավասար է $105^\circ 0' 27''$: Վորոշեցեք հիմքի անկյունը:



Գժ. 9

17. Հավասարասրուն յեռանկյան հիմքի անկյունը հավասար է $70^\circ 43'$: Վորոշեցեք գագաթի անկյունը:

18. Հավասարասրուն յեռանկյան գագաթի անկյունը հավասար է $1\frac{2}{7} d$ -ի: Վորոշեցեք հիմքի անկյունը:

19. Հավասարասրուն յեռանկյան հիմքի անկյունը հավասար է $\frac{5}{9} d$ -ի: Վորոշեցեք գագաթի անկյունը:

20. Հավասարասրուն յեռանկյան գագաթի անկյունը հավասար է 36° -ի: Վորոշեցեք սրունքներից մեկին տարած բարձրության և հիմքի միջև կազմված անկյան մեծությունը:

21. Հավասարասրուն յեռանկյան հիմքի անկյունը հավասար է 30° -ի: Վորոշեցեք այն անկյունը, վոր կազմված է մի սրունքով և մյուս սրունքի տարած բարձրությունով:


22. Հավասարասրուն յնունկյան սրունքով և բարձրությունով կազմված անկյունը հիմքի անկյունից $\frac{1}{7}$ Ժ-ով փոքր ե:

Վորոշեցեք այդ յնունկյան անկյունները:

Յուղղանկյուն յնունկյուն

23. Ծառի BD բարձրությունը Հափելու համար պատրաստեցին AB_1C_1 ուղղանկյուն յնունկյունը, վորի մեջ $\angle A = 45^\circ$

(դժ. 10) և պահելով այն ուղղաձիգ, AB_1 անկյունագծով նայելով ծառին հեռացան մինչև B գագաթը տեսնելը: Ինչքան է ծառի բարձրությունը, յեթե AC հեռավորությունը հավասար է 5,6 մ-ի, իսկ մարդու բարձրությունը՝ 1,7 մ-ի:



Գժ. 10

$\frac{1}{2}$ Ժ-ի: Վորոշեցեք ներքնաձիգը, յեթե նրա և համապատասխան բարձրության գումարը հավասար է 12 մ-ի:

30° անկյան դիմաց գտնվող եջը

25. Ապացուցեք հետևյալ թեորեմը.— Յեթե ուղղանկյուն յնունկյան սուր անկյուններից մեկը հավասար է 30° -ի, ապա նրա դիմաց գտնվող եջը հավասար է ներքնաձիգի կեսին:

26. Հակադարձ թեորեմ (տես 25-րդ խնդիրը).— Յեթե եջը ներքնաձիգից 2 անգամ փոքր է, ապա նրա դիմացի անկյունը հավասար է 30° -ի: Ապացուցեք այդ:

27. Կարկինի և քանոնի ուղնությամբ ուղիղ անկյունը բաժանեցեք 3 հավասար մասերի:

28. Ուղղանկյուն յնունկյան սուր անկյուններից մեկը

հավասար է $\frac{2}{3}$ Ժ-ի, իսկ ներքնաձիգի և փոքր եջի գումարը հավասար է 1,8 մ-ի: Վորոշեցեք ներքնաձիգը:

Յնունկյան արտաքին անկյունը

29. ABC յնունկյան B գագաթի մոտի արտաքին անկյունը 3 անգամ մեծ է A անկյունից և $\frac{4}{9}$ Ժ-ով մեծ է C անկյունից:

Վորոշեցեք յնունկյան անկյունները:
30. Հավասարակողմ յնունկյան մեջ տարված է յերկու միջնագիծ: Գտեք միջնագծերով կազմված սուր անկյունը:

31. Ուղղանկյուն յնունկյան սուր անկյուններից մեկը հավասար է $\frac{d}{3}$ Ժ-ի: Գտեք ներքնաձիգով և ուղիղ անկյան կիսորդով կազմված անկյունը:

32. Հավասարասրուն յնունկյան ներսի անկյունների և արտաքին անկյուններից մեկի գումարը հավասար է $\frac{21}{8}$ Ժ-ի: Վորոշեցեք այդ յնունկյան անկյունները:

33. Ապացուցեք, վոր հավասարասրուն յնունկյան գագաթի մոտի արտաքին անկյան կիսորդը զուգահեռ է հիմքին:

Յնունկյան ներսի անկյունների գումարի քննարկի կիրառումը յնունկյան վերաբերյալ զանազան խնդիրներ լուծելիս

34. Յնունկյան անկյուններից մեկը հավասար է $\frac{2}{3}$ Ժ-ի: Ինչքան է մյուս յերկու անկյունների կիսորդներով կազմված սուր անկյունը:

35. Տրված է A անկյունը, վորի A գագաթից կողմերից մեկի վրա վերցված է AB հատվածը: B կետից անկյան մյուս կողմին տարված է զուգահեռ ուղիղ, վորի վրա վերցված BD հատվածը հավասար է AB հատվածին և D կետը միացված է A գագաթի հետ: Ապացուցեք, վոր AD ուղիղը ավյալ անկյունը բաժանում է յերկու հավասար մասերի:

36. Զուգահեռ ուղիղների մոտ ներքին միակողմանի անկյունների կիսորդներն ինչպիսիք անկյունով են հատվում:

37. ABC յնունկյան B անկյունն ուղիղ է, M կետը A և C անկյունների կիսորդների հատման կետն է: Վորոշեցեք AMC անկյունը:

33. ABC յեռանկյան A և C անկյունների կիսորդները հատվում են M կետում: Վերջնային ABC անկյունը, յեթե նա հավասար է AMC անկյան կեսին:

39. ABC յեռանկյան B անկյունն ուղիղ է. AD-ն և CE-ն AC ներքնաձիգի շարունակություններն են: Վերջնային AMC անկյունը, յեթե BAD և BCE անկյունների կիսորդները հատվում են M կետում:

40. Հավասարասրուն յեռանկյան հիմքով և սրունքի բարձրությունով կազմված անկյունը հավասար է $\frac{8}{15}$ d-ի: Վերջնային այդ յեռանկյան անկյունները:

41. ABC հավասարասրուն յեռանկյան սրունքին իջեցրած AD բարձրությունը AB սրունքի հետ կազմում է BAD անկյունը, վորը հավասար է $\frac{1}{5}$ d-ի: Վերջնային այդ յեռանկյան անկյունները, ընդունելով, վոր 1) AD բարձրությունն անցնում է յեռանկյան ներսով, 2) AD բարձրությունը զանվում է յեռանկյունից դուրս:

42. Ապացուցեք, վոր ուղղանկյուն յեռանկյան ներքնաձիգին տարած միջնագիծը հավասար է նրա կեսին:

43. Ապացուցեք հակադարձ թեորեմը (տես խնդիր 42): Յեթե միջնագիծը հավասար է այն կողմի կեսին, վորին տարված է, ապա յեռանկյունն ուղղանկյուն յեռանկյուն է:

44. Յեթե ABC ուղղանկյուն հավասարասրուն յեռանկյան BC ներքնաձիգի վրա նշանակենք 2 կետ՝ E և D այնպես, վոր BE=BA և CD=CA, ապա $\angle DAE = \frac{1}{2}$ d: Ապացուցեք այդ:

45. ABC հավասարասրուն յեռանկյան հիմքն է AC: C անկյան կիսորդն է CD. $\angle ADC = \frac{5}{3}$ d: Վերջնային B անկյունը:

46. Հավասարասրուն յեռանկյան գագաթի անկյունը հավասար է 36° -ի: Ապացուցեք, վոր հիմքի անկյուններից մեկի կիսորդը ավելի հավասարասրուն յեռանկյունը բաժանում է յերկու նոր հավասարասրուն յեռանկյունների:

47. ABC յեռանկյան AC կողմը C կետից շարունակված է CE=CB յերկարությունով, իսկ A կետից AD=AB յերկարու-

թյամբ E և D կետերը միացված են B կետի հետ: Վերջնային DBE յեռանկյան անկյունները ABC յեռանկյան համապատասխան անկյունների միջոցով:

48. ABC յեռանկյան մեջ տարված են AD և CE բարձրությունները, վորոնք հատվում են M կետում: Վերջնային AMC անկյունը, յեթե տրված է, վոր $\angle BAC = \frac{1}{4}$ d և $\angle BCA = \frac{5}{6}$ d:

49. ABC հավասարասրուն յեռանկյան AD և CE կողմնային բարձրությունները կազմում են AMC անկյունը, վորը հավասար է $\frac{8}{15}$ d-ի: Վերջնային ABC յեռանկյան անկյունները:

50. ABC յեռանկյան C գագաթից տարված են յեռանկյան ներքին և արտաքին անկյունների կիսորդները. առաջին կիսորդը AB կողմի հետ կազմում է մի անկյուն, վոր հավասար է $\frac{6}{17}$ d-ի: Յերկրորդ կիսորդը AB-ի շարունակության հետ ինչպիսի անկյուն է կազմում:

51. Ներքնաձիգի միջնակետից տարված ուղղահայացը շարունակվելով հատվում է մի եջի հետ: Յեթե վերջինիս համասնակետը միացնենք մյուս եջի ծայրի հետ, ապա այդ անկյունը բաժանվում է 2:5 հարաբերությամբ (փոքր մասը գտնվում է ներքնաձիգի մոտ): Վերջնային այդ անկյունը:

52. Վերջնային 1) յոթանկյան, 2) տասնանկյան, 3) քսանանկյան ներսի անկյունների գումարը:

53. Վերջնային հնգանկյան անկյունները, յեթե նրանք հարբերում են իրար այնպես, ինչպես 1:1,5:2:2,5:3:

54. Ինչպե՞ս կփոխվի բազմանկյան անկյունների գումարը, յեթե կողմերի թիվը ավելացնենք 5-ով:

55. Քանի՞ կողմ ունի բազմանկյունը, յեթե նրա ներքին անկյունների գումարը հավասար է 1) 30 d, 2) 48 d, 3) 57 d:

56. Վոր բազմանկյան մեջ ներքին անկյունների գումարը հավասար է արտաքին անկյունների գումարին:

57. Բազմանկյունը քանի՞ կողմ ունի, յեթե նրա ներքին անկյունների և մի արտաքին անկյան գումարը հավասար է 23 d-ի:

Բազմանկյան անկյունների գումարը

58. Վորոշեցեք բազմանկյան կողմերի թիվը, յեթե նրա ներքին անկյունների գումարն m անգամ մեծ է արտաքին անկյունների գումարից (վերջնել ամեն մի գազաթից մի անկյուն):

59. Վորոշեցեք քառանկյան անկյունները, յեթե նրանցից առաջին յերկուսը հարաբերում են այնպես, ինչպես $6 : 7$, յերրորդ անկյունը հավասար է նրանց տարբերությանը, իսկ չորրորդը յերրորդից $\frac{4}{11}$ Ժող փոքր է:

§ 5. ԶՈՒԳԱՀԵՌԱԳԾԵՐ ՅԵՎ ՍԵՂԱՆՆԵՐ

Զուգահեռագծի անկյուններն ու կողմերը

1. Զուգահեռագծի անկյուններից մեկը


հավասար է $\frac{3}{7}$ Ժի: Վորոշեցեք մյուս անկյունները:

2. Վորոշեցեք զուգահեռագծի անկյունները, յեթե նրանցից մեկը մյուսից $\frac{3}{11}$ Ժող մեծ է:

3. ABCD զուգահեռագծի AB կողմը հավասար է 9 սմ-ի և կազմում է ամբողջ պարագծի $\frac{3}{10}$ մասը: Վորոշեցեք այդ զուգահեռագծի մյուս կողմերը:

4. Զուգահեռագծի յերկու կողմերը հարաբերում են այնպես, ինչպես $3 : 4$, իսկ պարագիծը հավասար է 2,8 մ-ի: Վորոշեցեք այդ զուգահեռագծի կողմերը:

5. ABCD զուգահեռագծի A անկյան կիսորդը BC կողմը հատում է E կետում: Վորոշեցեք BE և EC հատվածները, յեթե $AB=9$ սմ և $AD=15$ սմ:



Գծ. 11

6. Ինչի՞ վրա յե հիմնված «զուգահեռ քանոն» կոչվող գծադրական գործիքների կառուցվածքը (գծ. 11):

7. Զուգահեռագծի կողմերը հավասար են 8 սմ և 3 սմ: Մեծ կողմի վրա գտնվող յերկու անկյունների կիսորդները դիմացի կողմը բաժանում են յերեք մասերի: Վորոշեցեք այդ մասերից յուրաքանչյուրը:

Զուգահեռագծի անկյունագծերը

8. Զուգահեռագծի կողմերից մեկը հավասար է 5 մ-ի: Կարճը են նրա անկյունագծերն արտահայտվել հետևյալ թվերով 1) 4 սմ և 6 սմ, 2) 4 սմ և 3 սմ, 3) 6 սմ և 7 սմ:

9. Ապացուցեք, վոր այն բոլոր քառանկյունները, վորոնց անկյունագծերն իրար կիսում են, զուգահեռագծեր են:

10. Զուգահեռագծի անկյունագիծը կարճը և նրա կողմին հավասար լինել:

11. Զուգահեռագծի անկյունագծերի հատման կետից տարված է մի ուղիղ: Ապացուցեք, վոր այդ ուղիղի զուգահեռ կողմերի մեջ ընկած հատվածն այդ կետում կիսվում է:

12. ABCD զուգահեռագծի անկյունագծերի հատման կետից տարված է մի ուղիղ, վորը BC և AD կողմերից հատում է $BE=2$ սմ և $AF=2,8$ սմ հատվածները: Վորոշեցեք BC և AD կողմերը:

13. ABCD զուգահեռագծի B գագաթից իջեցրած ուղղահայացը AD հիմքը բաժանում է յերկու հավասար մասերի: Վորոշեցեք զուգահեռագծի BD անկյունագիծն ու կողմերը, յեթե նրա պարագիծը հավասար է 3,8 մ-ի և ABD յեռանկյան պարագծից 1 մ-ով մեծ է:

Զուգահեռագծի կառուցումը

14. Կառուցեք մի զուգահեռագիծ, վորի բուլթ անկյան գագաթից իջեցրած բարձրությունը դիմացի կողմը բաժանի յերկու հավասար մասերի:

15. Կառուցեք զուգահեռագիծը, յերը հայտնի յեն՝

1) յերկու կողմերը՝ 2 սմ, 3 սմ և նրանցով կազմված անկյունը՝ 110° ,

2) յերկու կողմերը՝ 2,1 սմ, 3,2 սմ և անկյունագծերից մեկը՝ 4,0 սմ:

3) յերկու անկյունագծերը՝ 6,0 սմ, 5,0 սմ և կողմերից մեկը՝ 4,5 սմ:

4) յերկու անկյունագծերը՝ 5 սմ, 4 սմ և նրանցով կազմված անկյունը՝ 135° ,

5) հիմքը, վոր հավասար է 2,0 սմ, բարձրությունը՝ 1,5 սմ և մի անկյունագիծը՝ 3,2 սմ:

2) անկյունագիծը՝ 4,2 սմ, անկյունագծերով կազմված անկյունը՝ 135°:

3) հիմքը՝ 3,2 սմ և անկյունագծերով կազմված անկյունը՝ 120°:

Ձեռքից համասարապետ հեռացած կետերի յերկուսից փակում ենք

31. Տվյալ AB ուղիղի վրա գտեք մի այնպիսի կետ, վոր մի ուրիշ տված CD ուղիղից գտնվի $m(=2$ սմ) հեռավորության վրա:

32. Գտեք մի կետ, վոր հավասարապետ հեռացված լինի տվյալ յերկու կետերից և տվյալ ուղիղից գտնվի $a(=6$ սմ) հեռավորության վրա:

33. Տվյալ անկյան ներսը գտեք մի կետ, վորը կողմերից $m(=1$ սմ) և $n(=2$ սմ) հեռավորություններն ունենա:

34. 1) Տված անկյան ներսում կառուցված է մի ուրիշ անկյուն, վորի կողմերը զուգահեռ են տված անկյան կողմերին և նրանցից հավասարապետ են հեռացված: Ապացուցեք, վոր այս անկյունների կիսորդները համընկնում են:

2) Անկյունը, վորի գագաթը չի գտնվում գծագրի վրա, բաժանեցեք յերկու հավասար մասերի:

35. Տված սուր անկյան կողմերի միջև տեղավորել մի ուղիղ (տված յերկարության) այնպես, վոր նա ուղղահայաց լինի անկյան կողմերից մեկին:

Շեղանկյուն

36. Շեղանկյան անկյունագծերից մեկը հավասար է նրա կողմին: Վորոշեցեք շեղանկյան անկյունները:

37. Ապացուցեք, վոր՝

1) Այն զուգահեռագիծը, վորի անկյունագծերը փոխուղղահայաց են, շեղանկյուն է:

2) Այն զուգահեռագիծը, վորի անկյունագիծը բաժանում է անկյունը յերկու հավասար մասերի, շեղանկյուն է:

38. Շեղանկյան կողմերով և անկյունագծերով կազմված անկյունների տարբերությունը հավասար է $\frac{3}{17}d$ -ի: Վորոշեցեք շեղանկյան անկյունները:

39. Շեղանկյան կողմերով և անկյունագծերով կազմված

անկյունները հարաբերում են այնպես, ինչպես 5 : 4: Վորոշեցեք շեղանկյան անկյունները:

40. Վորոշեցեք շեղանկյան անկյունները, յեթե բուլթ անկյան գագաթից իջեցրած բարձրությունը նրա դիմացի կողմը կիսում է:

41. Շեղանկյան պարագիծը հավասար է 8 սմ-ի, բարձրությունը՝ 1 սմ-ի: Գտեք շեղանկյան բուլթ անկյունը:

42. Կառուցեք շեղանկյունը, յերբ տված են՝

1) մի կողմը՝ 2,7 սմ և անկյունագիծը՝ 6,0 սմ.

2) յերկու անկյունագծերը՝ 4 սմ և 3 սմ.

3) բարձրությունը՝ 2,2 սմ և անկյունագիծը՝ 4,2 սմ.

4) մի անկյունը՝ 70° և այդ անկյունից անցնող անկյունագիծը՝ 3,7 սմ.

5) մի անկյունագիծը՝ 5 սմ և նրա դիմացի անկյունը՝ 120°:

Քառակուսի

43. Կառուցել այն քառակուսին, վորի անկյունագիծը հավասար է 3,8 սմ-ի:

44. Տված է ABCD քառակուսին: Նրա բոլոր կողմերից կտրել են հավասար մասեր՝ $AA_1=BB_1=CC_1=DD_1$: A_1, B_1, C_1 և D_1 կետերը հաջորդաբար միացված են ուղիղներով: Ապացուցեք, վոր $A_1B_1C_1D_1$ պատկերը նույնպես քառակուսի յէ:

45. Հավասարասրուն ուղղանկյուն յեռանկյան ներգծված է մի քառակուսի, վորը յեռանկյան հետ ունի մի ընդհանուր անկյուն: Վորոշեցեք քառակուսու պարագիծը, յեթե յեռանկյան եջը հավասար է 2 մ-ի:

46. Ուղղանկյուն յեռանկյան ուղիղ անկյունը կիսված է ներքնաձիգի և կիսորդի հատման կետից եջերին տարված են յերկու զուգահեռներ: Ապացուցեք, վոր այդ ուղիղներով և եջերով կազմված քառանկյունին քառակուսի յէ:


47. Հավասարասրուն ուղղանկյուն յեռանկյան ներգծված է քառակուսի այնպես, վոր յերկու գագաթները գտնվում են ներքնաձիգի վրա, իսկ մյուսները՝ եջերի վրա: Վորոշեցեք քառակուսու կողմերը, յեթե ներքնաձիգը հավասար է 3 մ-ի:

48. Տված քառակուսու կողմը հավասար է 1 մ-ի: Այդ քառակուսու անկյունագիծը հանդիսանում է մի ուրիշ քառակուսու կողմը: Վորոշեցեք վերջին քառակուսու անկյունագիծը:

49. Քառակուսու անկյունագիծը հավասար է 4 մ-ի: Այդ քառակուսու կողմը մի ուրիշ քառակուսու անկյունագիծն է: Վորոշեցեք վերջին քառակուսու կողմը:

50. 1) Ապացուցեք, Վոր ուղղանկյան անկյունների կիսորդները հատվելով կազմում են քառակուսի:

2) Ուղղանկյան կողմերը հավասար են 1 սմ-ի և 3 սմ-ի: Վորոշեցեք ներսի անկյունների կիսորդներով կազմված քառակուսու անկյունագծերը:



Գծ. 13

51. Քառակուսուն ներգծված է ուղղանկյուն այնպես, Վոր քառակուսու յուրաքանչյուր կողմի վրա գտնվում է ուղղանկյան մի գագաթը, և ուղղանկյան կողմերը զուգահեռ են քառակուսու անկյունագծերին: Վորոշեցեք այդ ուղղանկյան կողմերը, յեթե մեկ կողմը մյուսից 2 անգամ մեծ է, և քառակուսու անկյունագիծը հավասար է 12 մ-ի:

52. ABC ուղղանկյուն յեռանկյան եջերի վրա կառուցված է յերկու քառակուսի (գծ. 13): Այդ քառակուսիների D և H գագաթներից ներքնաձիգի շարունակությանը տարված է յերկու ուղղահայաց՝ HM և DK: Ապացուցեք, Վոր՝

1) Տված ABC յեռանկյունը կարելի յե կազմել գծիկներով ծածկված յերկու յեռանկյուններից:

2) HM և DK ուղղահայացների գումարը հավասար է ներքնաձիգին:

Յեռանկյան միջնագիծը

53. Ծպեղատրունքի կեսից, Վորի ծպերերի բացվածքն է 5 մ, տարված է պրկան: Վորոշեցեք այդ պրկանի յերկարությունը:

54. Յեռանկյան կողմերը հավասար են 8 սմ, 10 սմ, 12 սմ:

Գտեք այն յեռանկյան կողմերը, Վորի գագաթները հանդիսանում են առաջին յեռանկյան կողմերի միջնակետերը:

55. Յեռանկյան պարագիծը հավասար է 12 սմ-ի: Գտեք այդ յեռանկյան միջնակետերի հաջորդական միացումից առաջացած յեռանկյան պարագիծը:

56. Յեռանկյան կողմերը հարաբերում են այնպես, ինչպես 3 : 4 : 6: Այդ կողմերի միջնակետերը հաջորդաբար միացնելով ստացվում է մի պարագիծ, Վորը հավասար է 5,2 մ-ի: Վորոշեցեք տված յեռանկյան կողմերը:

57. Տված MN ուղիղի տարբեր կողմերում տված է յերկու կետ՝ A և B, Վորոնց հեռավորությունն ուղիղից, հավասար է 10 դմ և 4 դմ, Գտեք AB հատվածի O միջնակետի հեռավորությունը տված ուղիղից:

58. Հավասարակողմ յեռանկյան բարձրությունը հավասար է 6 դմ-ի: Գտեք տված բարձրության պրոեկցիան մյուս բարձրության վրա:

59. Բութանկյուն յեռանկյան բութանկյան գագաթից դեպի դուրս տարված է մի ուղիղ. բութ անկյան կողմերի պրոեկցիաներն այդ ուղիղի վրա հավասար են 4 սմ և 2 սմ: Վորոշեցեք բոլոր միջնագծերի պրոեկցիաները նույն ուղիղի վրա:

60. Անկյան ներքը վերցված է մի կամայական M կետ: Այդ կետից տարեք մի ուղիղ այնպես, Վոր նրա անկյան կողմերի միջև գտնվող հատվածը M կետում կիսվի:

Սեղան

61. ABCD սեղանի B գագաթից CD կողմին տարված է զուգահեռ, Վորը AD մեծ հիմքը հատում է E կետում: ABE յեռանկյան պարագիծը հավասար է 1 մ-ի, իսկ ED-ի յերկարությունը 3 դմ: Վորոշեցեք սեղանի պարագիծը:

62. Սեղանի կողմնալին կողմը բաժանված է 6 հավասար մասերի և բաժանման կետերից մյուս կողմնալին կողմին տարված են հիմքերին զուգահեռ հատվածներ: Վորոշեցեք այդ հատվածների յերկարությունները, յեթե սեղանի հիմքերը հավասար են 10 սմ և 28 սմ:

63. AD-ն ABCD սեղանի մեծ հիմքն է: Տրված է AC ⊥ CD: AB = BC, ∠CAD = 2/7 π: Վորոշեցեք այդ սեղանի անկյունները:

64. ABCD սեղանի (AD-ն մեծ հիմքն է) AC անկյունագիծը, վորն ուղղահայաց է CD կողմին, BAD անկյունը կիսում է: Վորոշեցեք AD հիմքը, յեթե $\angle CDA = 10^\circ$, իսկ սեղանի պարագիծը հավասար է 2 մ-ի:

65. Դիցուք AD-ն ABCD սեղանի մեծ հիմքն է: Նրա A, B, C և D անկյունները կարճը են իրար հարաբերվել այնպես, ինչպես 2 : 5 : 6 : 3:

Սեղանի միջին գիծը

66. Սեղանի հիմքերը հարաբերում են այնպես, ինչպես 7 : 3, իսկ նրանց տարբերությունը հավասար է 3,2 մ-ի: Գտեք այդ սեղանի միջին գծի յերկարությունը:

67. Սեղանի հիմքերը հավասար են 2,4 մ և 3 մ: Այդ սեղանի ներսում, յերկու կողմնային կողմերի միջև տարված է մի ուղիղ, վորը զուգահեռ է սեղանի հիմքերին և վորի յերկարությունը հավասար է 2,8 մ-ի: Այդ ուղիղը սեղանի հիմքերից հավասարապես է հեռացած, թե վոչ: Յեթե վոչ, ապա վո՞ր հիմքին է ավելի մոտ:

68. ABCD սեղանի AB կողմի E միջնակետից տարված է հիմքերին զուգահեռ ուղիղ, վորը CD կողմին հատում է F կետում: B զաղաթից CD կողմին տարված է զուգահեռ, վորը AD մեծ հիմքը հատում է G կետում: Վորոշեցեք հիմքերի յերկարությունները, յեթե $EF = 12$ սմ և $AG = 1$ սմ:

69. ABCD սեղանի AB կողմի E միջնակետից տարված է զուգահեռ CD կողմին, մինչև AD մեծ հիմքի հատվելը G կետում: Վորոշեցեք սեղանի հիմքերը, յեթե $AG = 5$ դմ և $GD = 2,5$ մ:

70. Սեղանի միջին գիծն անկյունագծով բաժանվում է յերկու հատվածների, վորոնց տարբերությունը հավասար է 2 դմ-ի: Վորոշեցեք սեղանի հիմքերը, յեթե միջին գծի յերկարությունը հավասար է 8 դմ-ի:

71. Գտեք սեղանի հիմքերի հարաբերությունը, յեթե նրա միջին գիծը յերկու անկյունագծերով բաժանվում է յերեք հավասար մասերի:

Հավասարասրուն սեղանի

72. Ապացուցեք, վոր հավասարասրուն սեղանի հիմքին առընթեր անկյունները հավասար են:

73. Հավասարասրուն սեղանի սրունքը հավասար է միջին գծին, իսկ պարագիծը 24 մ-ի: Վորոշեցեք սրունքը:

74. Վորոշեցեք հավասարասրուն սեղանի անկյունները, յեթե հայանի յե, վոր հանդիպակաց անկյունների տարբերությունը հավասար է $\frac{8}{13} d$ է:

75. Հավասարասրուն սեղանի փոքր հիմքը հավասար է սրունքին, իսկ անկյունագիծը ուղղահայաց է սրունքին: Վորոշեցեք սեղանի անկյունները:

76. ABCD հավասարասրուն սեղանի մեծ հիմքը AD-ն է: ACD և BAC յեռանկյունների պարագծերի տարբերությունը հավասար է 6 դմ-ի, իսկ սեղանի միջին գիծը հավասար է 12 դմ-ի: Վորոշեցեք հիմքերը:

77. Հավասարասրուն սեղանի անկյունագիծը սուր անկյունը բաժանում է 2 հավասար մասերի: Վորոշեցեք փոքր հիմքը, յեթե սեղանի պարագիծը հավասար է 4,5 մ-ի, իսկ մեծ հիմքը՝ 1,5 մ-ի:

78. Հավասարասրուն սեղանի ըութ անկյան գագաթից իջեցրած բարձրությունը մեծ հիմքը բաժանում է յերկու հավասարների՝ 6 սմ և 30 սմ: Վորոշեցեք այդ սեղանի հիմքերը:

79. ABCD հավասարասրուն սեղանի մեծ հիմքը AD-ն է, իսկ այդ հիմքին տարած բարձրությունը CE-ն է: Իմանալով, վոր DE-ն հավասար է 1,25 մ-ի և սեղանի միջին գծի յերկարությունը 2,75 մ-ի: Վորոշեցեք սեղանի հիմքերը:

80. Հավասարասրուն սեղանի մեծ հիմքը հավասար է 2,7 մ-ի, սրունքը՝ 1 մ-ի, իսկ նրանցով կազմված անկյունը՝ 60° -ի: Վորոշեցեք փոքր հիմքը:

81. Հավասարասրուն սեղանի սուր անկյունը հավասար է 45° -ի, բարձրությունը՝ h մ-ի, իսկ միջին գիծը՝ m մ-ի: Վորոշեցեք սեղանի հիմքերը:

82. Հավասարասրուն սեղանի բարձրությունը հավասար է 10 սմ-ի, իսկ անկյունագծերը փոխուղղահայաց են: Գտեք միջին գիծը:

83. Ուղղանկյուն սեղանը անկյունագծով բաժանվում է յերկու յեռանկյունների՝ հավասարակողմ յեռանկյունի, վորի կողմը հավասար է a-ի և ուղղանկյուն յեռանկյունի: Վորոշեցեք սեղանի միջին գիծը:

84. ABCD ուղղանկյուն սեղանի ADC սուր անկյունը հանրաձայնությունը 1 մաս—2

վասար ե $\frac{1}{2}$ d ի, իսկ AD կողմը հավասար ե a-ի: CD կողմի E միջնակետից տարված ե նրան ուղղահայաց, վորը BA կողմի շարունակությունը հատում ե F կետում: Վորոշեցեք BF հաս-վածի յերկարությունը:

Մեկամի կառու-ցումը

85. Կառուցեք սեղանը, յերբ արված են՝
1) յերկու կողմնային կողմերը՝ 1,5 սմ,
2 սմ ե հիմքերը 5 սմ, 2,3 սմ:

2) հիմքերից մեկը՝ 4,8 սմ, բարձրությունը՝ 3,2 սմ ե յերկու անկյունագծերը՝ 4,2 սմ ե 5 սմ:

3) հիմքը, վոր հավասար ե 4 սմ, կողմնային կողմերից մեկը՝ 2,4 սմ, նրանց միջև կազմված անկյունը 72° ե մյուս կողմնային կողմը՝ 3 սմ:

86. Կառուցեք սեղանը, յերբ արված են՝

1) չորս կողմերը (խնդիրը բոլոր դեպքերում հնարավոր ե):

2) յերկու հիմքերն ու յերկու անկյունագծերը (վճր դեպքում ե խնդիրը հնարավոր):

Ջուզանեռագծերի յեվ սեղանների վերաբերյալ յուտոր խնդիրներ

87. Վորոշեցեք այն քառանկյան ձևը,

վորի զաթաթները հանդիսանում են ավյալ

1) կամայական քառանկյան, 2) զուգահեռագծի, 3) ուղղանկյան, 4) շեղանկյան, 5) քառակուսու, 6) սեղանի, 7) դելտոիտի կողմերի միջնակետերը:

88. Քառանկյան անկյունագծերը հավասար են 1 սմ ե 8 դմ. նրանք հատվում են $56^\circ 25'$ անկյունով: Վորոշեցեք այն քառանկյան կողմերն ու անկյունները, վորն ստացվում ե ավյալ քառանկյան կողմերի միջնակետերի միացումից:

89. ABC յեռանկյան A անկյան կիսորդը BC կողմը հատում ե D կետում: Այդ կետից CA կողմին տարված զուգահեռ ուղիղը AB կողմը հատում ե E կետում, E կետից BC-ին տարված զուգահեռ ուղիղը AC կողմը հատում ե F կետում: Ապացուցեք, վոր EA=FC:

90. 1) Հավասարասրուն յեռանկյան հիմքի վրա վերցված ե մի կետ: Ապացուցեք, վոր այդ կետի՝ յերկու սրունքներից ունեցած հեռավորությունների գումարը հավասար ե սրունքի վրա իջեցրած բարձրությանը:


2) Հավասարասրուն յեռանկյան հիմքի շարունակության վրա վերցված ե մի կետ: Ապացուցեք, վոր այդ կետի սրունք-

ներից ունեցած հեռավորությունների տարրերությունը հավասար ե սրունքի վրա իջեցրած բարձրությանը:


Կենտրոնական համաչափություն

91. Յույց ավիք պտտման այն փոքրագույն անկյունը, վորի ժամանակ համատեղվում ե ինքն իր հետ՝ 1) քառակուսին, 2) շեղանկյունը, 3) ուղղանկյունը ե 4) խորհրդային աստղը:

92: Ապացուցեք, վոր ուղղանկյան անկյունագծերի հատման կետով անցնող ուղիղը (զժ. 14) բաժանում ե ուղղանկյունը յերկու կենտրոնական-համաչափ քառանկյունների:



Գժ. 14.



Գժ. 15

93. Նայեցեք գծապրին (զժ. 15) ե ապացուցեք, վոր M ե N, K ե L կետերը համաչափ են կենտրոնի նկատմամբ, այսինքն, կետերը գտնվում են կենտրոնից հավասար հեռավորության վրա: Չուգահեռագծի մեջ ինչպիսի կառուցումով են ստացվում կենտրոնական-համաչափ կետեր:

§ 6. ՇՐՋԱՆԱԳԻԾ

Շրջանագիծ, նրա դիրքը: Տրամագիծ, յար, սրա հեռավորությունը կենտրոնից: Հասող

1. ABC անկյունը հավասար ե 120° : Այդ անկյան կողմերի վրա վերցված ե յերկու հատված՝ AB=C=4 սմ: A, B ե C կետերից տարեք շրջանագիծ ե գտեք շառափղի յերկարությունը:

2. Գտեք ավյալ շառափղն ունեցող ե ավյալ կետով անցնող շրջանագծերի կենտրոնների յերկրաչափական տեղը:

3. Տված յերկու կետերով տարեք մի շրջանագիծ, վորի կենտրոնը գտնվի աված ուղիղի վրա:

4. Կառուցեք շրջանագիծն այնպես, վոր այդ շրջանագիծն անցնի աված A ե B կետերով ու նրա գեղի A կետը տարված շառափղով ու AB յարով կազմված անկյունը հավասար լինի 30° -ի:

5. 1) Շրջանագծի շառավիղը հավասար է 10 սմ-ի: Տված կետը նրա կենտրոնից 15 սմ հեռավորության վրա չի գտնվում: Գտեք այդ կետի ամենափոքր և ամենամեծ հեռավորությունը շրջանագծից:

2) Շրջանագծի շառավիղը հավասար է 10 սմ-ի: Տված կետը նրա կենտրոնից 3 սմ հեռավորության վրա չի գտնվում: Գտեք այդ կետի ամենափոքր և ամենամեծ հեռավորությունը շրջանագծից:

6. Տվյալ կետի ամենափոքր հեռավորությունը շրջանագծից հավասար է 2-ի, իսկ ամենամեծ հեռավորությունը՝ 6-ի: Վորոշեցեք շառավիղը (յերկու դեպք)։

7. Ապացուցեք, Վոր իրարից դուրս գտնվող յերկու շրջանագծերի ամենակարճ հեռավորությունը այդ շրջանագծերի կենտրոնները մի ցնող ուղիղի այն հատվածն է, վորը գտնվում է յերկու շրջանագծերի միջև:

8. Շրջանագծի տվյալ կետից տարված են տրամագիծ և լար, վորն հավասար է շրջանի շառավղին: Վորոշեցեք նրանցով կազմված անկյունը:

9. Շրջանագծի տվյալ կետից տարված է 2 լար, վորոնցից յուրաքանչյուրը հավասար է շառավղին: Վորոշեցեք նրանցով կազմված անկյունը:

10. Շրջանի մեջ տրված են 2 փոխուղղահայաց լարեր, վորոնցից յուրաքանչյուրը մյուսով բաժանվում է 2 հատվածներին՝ 3 սմ և 7 սմ: Գտեք լարերից յուրաքանչյուրի հեռավորությունը կենտրոնից:

11. Տրված են 2 փոխուղղահայաց լարեր, վորոնց հեռավորությունը շրջանի կենտրոնից 1 սմ է, և յուրաքանչյուր լարի յերկարությունը հավասար է 6 սմ-ի: Գտեք, թե մի լարը մյուսով ինչպիսի մասերի յի բաժանվում:

12. Շրջանի մեջ տրված են յերկու փոխուղղահայաց արամագծեր: Շրջանագծի վորեե կետ պրոեկտված է այդ ուղղահայացների վրա: Գտեք կետի պրոեկցիաների հեռավորությունները, յեթե շրջանի շառավիղը հավասար է R-ի:

13. Լարը հատում է տրամագիծը 30° անկյան տակ և բաժանում այն յերկու հատվածներին՝ 2 սմ և 6 սմ: Գտեք լարի հեռավորությունը կենտրոնից:

14. Շրջանագծի վորեե կետից տարված են 2 փոխուղղահայաց լարեր, վորոնց հեռավորությունները կենտրոնից հավասար են 6 սմ և 10 սմ: Վորոշեցեք լարերի յերկարությունները:

15. Տրամագծի ծայրերը գտնվում են շոշափողից 1,6 սմ և 0,6 սմ հեռավորության վրա: Վորոշեցեք տրամագծի յերկարությունը:

16. Շրջանի AB լարի BC շարունակությունը հավասար է շառավղին: C կետից տարված CD հատողն անցնում է շրջանի O կենտրոնով (D-ն շրջանագծի հստաման կետն է և չի գտնվում CO հատվածի վրա): Ապացուցեք, վոր AOD անկյունը յերեք անգամ մեծ է ACD անկյունից:

17. 1) Շրջանի շառավիղը հավասար է 2 սմ-ի: Այդ շրջանի մեջ տարեք 1,5 սմ յերկարության մի լար: Այս լինիլը վորոշեք: Խնդիրը քանի լուծում կունենա, յեթե տված յերկարության լարը պետք է անցնի շրջանագծի տված կետով:

2) Ցույց տվեք, վոր շրջանագծին տարված, միևնույն յերկարությունն ունեցող լարերի միջնակետերը գտնվում են մի ուրիշ շրջանագծի վրա:

18. 1) Ապացուցեք, վոր շրջանի ներսը գտնվող A կետից տարված լարերից ամենափոքրն այն լարն է, վորն ուղղահայաց է նույն A կետով անցնող արամագծին:

2) Շրջանի ներսը գտնվող կետից տարեք մի լար, վորն այդ կետով բաժանվի յերկու հավասար մասերի:

19. Անկյան կողմի վրա գտնվող կետից գծեք մի շրջանագիծ, վորն անկյան մյուս կողմից հատի տվյալ յերկարությամբ մի լար:

20. Տվյալ շրջանի մեջ տարված են յրար գուգահեռ և հավասար յերկու լար, վորոնց հեռավորությունը յրարից հավասար է տվյալ շրջանի շառավղին: Գտեք այդ լարերի ծայրերը միացնող ուղիղներով կազմված սուր անկյունը:

21. 1) Շրջանից դուրս գտնվող կետից շրջանին տարված են յերկու փոխուղղահայաց շոշափողներ: Գտեք յուրաքանչյուր շոշափողի յերկարությունը, յեթե շրջանի շառավիղը հավասար է 10 սմ-ի:

2) Տված շրջանի շառավիղը հավասար է R=1 դմ: Այդ

Շոշափող ուղիղների յեվ օրջանագծերի կցորդումը

5. 1) Շրջանագծի շառավիղը հավասար է 10 սմ-ի: Տված կետը նրա կենտրոնից 15 սմ հեռավորությունից վրա յե գտնվում: Գտեք այդ կետի ամենափոքր և ամենամեծ հեռավորությունը շրջանագծից:

2) Շրջանագծի շառավիղը հավասար է 10 սմ-ի: Տված կետը նրա կենտրոնից 3 սմ հեռավորությունից վրա յե գտնվում: Գտեք այդ կետի ամենափոքր և ամենամեծ հեռավորությունը շրջանագծից:

6. Տվյալ կետի ամենափոքր հեռավորությունը շրջանագծից հավասար է 2-ի, իսկ ամենամեծ հեռավորությունը՝ 5-ի: Վորոշեցեք շառավիղը (յերկու զեպք):

7. Ապացուցեք, վոր իրարից դուրս գտնվող յերկու շրջանագծերի ամենակարճ հեռավորությունը այց շրջանագծերի կենտրոնները մի գնող ուղիղի աջն հատվածն է, վորը գտնվում է յերկու շրջանագծերի միջև:

8. Շրջանագծի տվյալ կետից տարված են տրամագիծ և լար, վորո հավասար է շրջանի շառավիղին: Վորոշեցեք նրանցով կազմված անկյունը:

9. Շրջանագծի տվյալ կետից տարված է 2 լար, վորոնցից յուրաքանչյուրը հավասար է շառավիղին: Վորոշեցեք նրանցով կազմված անկյունը:

10. Շրջանի մեջ տրված են 2 փոխուղղահայաց լարեր, վորոնցից յուրաքանչյուրը մյուսով բաժանվում է 2 հատվածների՝ 3 սմ և 7 սմ: Գտեք լարերից յուրաքանչյուրի հեռավորությունը կենտրոնից:

11. Տրված են 2 փոխուղղահայաց լարեր, վորոնց հեռավորությունը շրջանի կենտրոնից 1 սմ է, և յուրաքանչյուր լարի յերկարությունը հավասար է 6 սմ-ի: Գտեք, թե մի լարը մյուսով ինչպիսի մասերի յե բաժանվում:

12. Շրջանի մեջ տրված են յերկու փոխուղղահայաց տրամագծեր: Շրջանագծի վորեե կետ պրոեկտված է այդ ուղղահայացների վրա: Գտեք կետի պրոեկցիաների հեռավորությունները, յեթե շրջանի շառավիղը հավասար է R-ի:

13. Լարը հատում է տրամագիծը 30° անկյան տակ և բաժանում այն յերկու հատվածների՝ 2 սմ և 6 սմ: Գտեք լարի հեռավորությունը կենտրոնից:

14. Շրջանագծի վորեե կետից տարված են 2 փոխուղղահայաց լարեր, վորոնց հեռավորությունները կենտրոնից հավասար են 6 սմ և 10 սմ: Վորոշեցեք լարերի յերկարությունները:

15. Տրամագծի ծայրերը գտնվում են շոշափողից 1,6 սմ և 0,6 սմ հեռավորությունից վրա: Վորոշեցեք տրամագծի յերկարությունը:

16. Շրջանի AB լարի BC շարունակությունը հավասար է շառավիղին: C կետից տարված CD հատուղն անցնում է շրջանի O կենտրոնով (D-ն շրջանագծի համաման կետն է և չի գտնվում CO հատվածի վրա): Ապացուցեք, վոր AOD անկյունը յերեք անգամ մեծ է ACD անկյունից:

17. 1) Շրջանի շառավիղը հավասար է 2 սմ-ի: Այդ շրջանի մեջ տարեք 1,5 սմ յերկարություն մի լար: Այս յինդիքը վորոշեք: Խնդիրը քանի լուծում կունենա, յեթե տված յերկարություն լարը պետք է անցնի շրջանագծի տված կետով:

2) Ցուցյ տվեք, վոր շրջանագծին տարված, միևնույն յերկարություն ունեցող լարերի միջնահեռերը գտնվում են մի ուրիշ շրջանագծի վրա:

18. 1) Ապացուցեք, վոր շրջանի ներսը գտնվող A կետից տարված լարերից ամենափոքրն այն լարն է, վորն ուղղահայաց է նույն A կետով անցնող տրամագծին:

2) Շրջանի ներսը գտնվող կետից տարեք մի լար, վորն այդ կետով բաժանվի յերկու հավասար մասերի:

19. Անկյան կողմի վրա գտնվող կետից գծեք մի շրջանագիծ, վորն անկյան մյուս կողմից հատի տվյալ յերկարությամբ մի լար:


20. Տվյալ շրջանի մեջ տարված են իրար զուգահեռ և հավասար յերկու լար, վորոնց հեռավորությունը իրարից հավասար է տվյալ շրջանի շառավիղին: Գտեք այդ լարերի ծայրերը միացնող ուղիղներով կազմված սուր անկյունը:

21. 1) Շրջանից դուրս գտնվող կետից շրջանին տարված են յերկու փոխուղղահայաց շոշափողներ: Գտեք յուրաքանչյուր շոշափողի յերկարությունը, յեթե շրջանի շառավիղը հավասար է 10 սմ-ի:

2) Տված շրջանի շառավիղը հավասար է R=1 դմ: Այդ


Շուտփող ուղիղների յեվ շրջանագծերի կցուղումը

շրջանից դուրս գտնվող M կետից տարված են յերկու փոխուղղահասայաց շոշափողներ՝ MA և MB (գծ. 16): AB աղեղի վրա վերցված կամայական C կետից նույն շրջանին տարված է մի յերրորդ շոշափող՝ KL , վորը հատելով MA և MB շոշափողները, կազմում է KLM յեռանկյունը: Գտեք այդ յեռանկյան պարագծը:



Գծ. 16.

24. AB -ն և AC -ն միևնույն շրջանագծի յերկու շոշափողներն են: $\angle BAC$ հավասար է 60° -ի, իսկ $\angle BAC$ բեկյալը՝ 1 մ-ի: Վորոշեցեք B և C շոշափման կետերի հեռավորությունը:




Գծ. 17.

25. Շրջանի շրջանագծի յերկարությունն է $18,84$ սմ: Այդ շրջանը գլորվում է AB ուղիղի վրայով, Ինչքան տարածութուն կանցնի շրջանի կենտրոնը, յեթե շրջանն I -ին գերբեց անցնի II -րդ գերբեին (գծ. 17): I գերբում CD լարը զուգահեռ է AB

ուղիղին, իսկ II գերբում C_1D_1 լարն ուղղահայաց է AB ուղիղին:

26. Շրջանի շրջանագիծը հավասար է $18,84$ սմ-ի: Այդ շրջանը գլորվում է AB ուղիղով: Ինչքան տարածութուն կանցնի շրջանի O կենտրոնը, յեթե նրա լարը $CD \parallel AB$ սկզբնական գերբեց անցնում է $C_1D_1 \parallel AB$ գերբին (գծ. 18):




Գծ. 18.

27. Յերկու շրջանների շառավիղները հավասար են 2 սմ-ի և 4 սմ-ի: Նրանց ներքին ընդհանուր շոշափողները փոխադարձ ուղղահայաց են: Գտեք նրանցից յուրաքանչյուրի յերկարությունը:

28. Տված է յերկու շրջան, վորոնց ներքին ընդհանուր շոշափողները փոխադարձ ուղղահայաց են: Շոշափման կետերը միացնող լարերը հավասար են 3 սմ և 5 սմ: Վորոշեցեք շրջանների կենտրոնների հեռավորությունը:

29. Մեկը մյուսից դուրս գտնվող յերկու շրջանների շառավիղները հավասար են R -ի և r -ի: Այդ շրջաններին տարված են յերկու ընդհանուր արտաքին շոշափողներ: Գտեք նրանց յերկարությունը (շոշափման կետերի միջև), յեթե նրանց շարունակությունները կազմում են ուղիղ անկյուն ($R > r$):



Գծ. 19.

30. Տրված է 30° անկյուն: $2,5$ սմ շառավղով կառուցեք մի շրջանագիծ, վորը շոշափի սովյալ անկյան մի կողմը և կենտրոնը գտնվի անկյան մյուս կողմի վրա: Գտեք շրջանագծի կենտրոնի հեռավորությունը անկյան գագաթից:

31. Կիսաշրջանագծով միացված յերկու զուգահեռ ուղիղներից

դժադրեք ուսուցիչ պատկերը: Այդպիսի պատկերը, յերբ նա հորիզոնական է, ճարտարապետության մեջ կոչվում է «գլանիկ»: Իսկ յերբ ուղղաձիգ է՝ «աղեղնաշարք» (գծ. 19):

32. Վոչ գուգահեռ 2 ուղիղներ միացրեք աղեղով: Քննության առեք 3 դեպք՝ 1) յերբ միացման կետերը (շոշափման կետերը) և աղեղի շոռավիղը չեն տրված, 2) յերբ տրված է միայն աղեղի շոռավիղը, 3) յերբ տրված է միացման կետը, իսկ շոռավիղը չի տրված (ուղիղների աղեղներով միացնելու նման ձևի որինակ հանդիսանում է յերկաթուղու «բորբուսը»):

33. Գտեք ավյալ շոռավիղն ունեցող և ավյալ ուղիղը շոշափող շրջանգծերի կենտրոնների յերկրաչափական տեղը:

34. Տվյալ շոռավիղով գծեք մի շրջանագիծ, վորը ավյալ ուղիղը շոշափի ավյալ կետում:

35. Գծագրեք մի շրջանագիծ, վորն անցնի ավյալ A կետով և շոշափի ավյալ ուղիղը նրա վրա տրված B կետում:

36. Գծեցեք մի շրջանագիծ, վորը շոշափի ավյալ անկյան կողմերը, ընդվորում մեկը՝ ավյալ կետում:

37. Տրված է մի կետ, վորը գտնվում է յերկու գուգահեռ ուղիղների միջև: Այդ կետից տարեք մի շրջանագիծ, վորը շոշափի ավյալ ուղիղները:

38. Տրված է յերկու գուգահեռ և մի հատող: Տարեք մի շրջանագիծ, վորը շոշափի այս յերեք ուղիղներին:

39. Տվյալ շոռավիղով գծեցեք մի շրջանագիծ, վորն անցնի ավյալ կետով և շոշափի ավյալ ուղիղը:

40. Յերկու ուղիղ գուրս գալով միեմույն M կետից շոշափում են շրջանագիծը A և B կետում: Տանելով OB շոռավիղը շարունակվում են այն B կետից BC=OB հեռավորությամբ: Ապացուցեք, վոր $\angle AMC = 3\angle BMC$:

41. Յերկու շրջանագիծ ինչպիսի՞ հարաբերական դիրք կունենան, յեթե՝
1) կենտրոնների հեռավորությունը հավասար է 10 սմ-ի, իսկ շոռավիղները

Յերկու օրջանագծերի հարաբերական դիրքը

8 սմ և 2 սմ:
2) կենտրոնների հեռավորությունը հավասար է 4 սմ-ի, իսկ շոռավիղները՝ 11 սմ և 7 սմ:

3) կենտրոնների հեռավորությունը հավասար է 12 սմ-ի, իսկ շոռավիղները՝ 5 սմ և 3 սմ:

42. Ներքին շոշափում ունեցող յերկու շրջանագծերի շոռավիղները հարաբերում են իրար այնպես, ինչպես 5 : 3. ներքին շոշափման դեպքում նրանց կենտրոնների հեռավորությունը հավասար է 6 դմ-ի: Գտեք նույն շրջանագծերի հարաբերական դիրքը, յեթե կենտրոնների հեռավորությունը հավասար է՝ 1) 24 դմ, 2) 5 դմ, 3) 28 դմ, 4) 20 դմ:

43. Տրված է յերկու շրջանագիծ, վորոնցից մեկը գտնվում է մյուսի մեջ: Այդ շրջանագծերի կենտրոններից անցնող մեծ շրջանագծի տրամագիծը փոքր շրջանագծով բաժանվում է 3 մասերի՝ 4 սմ, 8 սմ և 1 սմ: Գտեք կենտրոնների հեռավորությունը:

44. Յերկու համակենտրոն շրջանագծերի ամենափոքր հեռավորությունը հավասար է 2 սմ-ի, իսկ ամենամեծը՝ 16 սմ-ի: Վորոշեցեք այդ շրջանագծերի շոռավիղները:

45. Տրված է յերկու համակենտրոն շրջան: Մեծ շրջանի մեջ վերցված են յերկու փոխուղղահայաց լարեր, վորոնք շոշափում են փոքր շրջանը: Լարերից յուրաքանչյուրը մյուսով բաժանվում է 3 սմ և 7 սմ մասերի: Գտեք փոքր շրջանի շոռավիղը:

46. Յերկու համակենտրոն շրջանագծերի շոռավիղները հարաբերում են այնպես, ինչպես 7 : 4, իսկ ողակի լայնությունը հավասար է 12 սմ-ի: Վորոշեցեք փոքր շրջանագծի շոռավիղը:

47. Յեթե յերկու համակենտրոն շրջաններ հատենք մի ուղիղով, ապա հատողի շրջանագծերի միջև գտնվող մասերն իրար հավասար են: Ապացուցեք այս:

48. Մի շրջանագիծ գտնվում է մյուսի մեջ: Նրանց շոռավիղները հավասար են 28 սմ և 12 սմ, իսկ նրանց ամենափոքր հեռավորությունը՝ 10 սմ: Վորոշեցեք կենտրոնների հեռավորությունը:


49. 1) Յերեք հավասար շրջանագծեր (R շոռավիղով) շոշափում են իրար դրսից: Վորոշեցեք այն յիսանկյան կողմերն ու անկյունները, վորի գագաթները հանդիսանում են շոշափման կետերը:

2) Տվյալ շրջանին ներգծեցեք 3 հավասար շրջաններ, վորոնք գուլգ-գուլգ շոշափեն իրար և ավյալ շրջանը:

50. Յերկու իրար շոշափող հավասար շրջաններ մի յերբուր

ըրջանի հետ ունենն ներքին շոշափում: Միացնելով ըրջանների կենտրոններն՝ ստանում ենք մի յեռանկյուն, վորի պարագիծը հավասար է 18 սմ-ի: Վորոշեցիք մեծ ըրջանի շառավիղը:

51. Տվյալ ըրջանին ներգծված են 6 հավասար ըրջաններ (գծ. 20), վորոնցից յուրաքանչյուրը շոշափում է սվյալ ըրջանը



Գծ. 20.

և կից յերկու ըրջանները: Գտեք ըրջանների արամագծիքը, յեթե սվյալ ըրջանի շառավիղը հավասար է 3 դմ-ի: Պատրաստեցիք գծագիրը:

52. Տվյալ ըրջանի շուրջն արտագծված են 6 հավասար ըրջաններ, վորոնցից յուրաքանչյուրը շոշափում է սվյալ ըրջանը և կից յերկու ըրջանները: Գտեք ըրջանների շառավիղները, յեթե սվյալ ըրջանի շառավիղը հավասար է 1 դմ-ի: Պատրաստեցիք գծագիրը:

53. 1) Գտեք այն ըրջանագծերի կենտրոնների յերկրաչափական տեղը, վորոնք շոշափում են սվյալ ըրջանագիծը նրա

Երջանագծի յեւ աղեղի կառուցումը

սվյալ կետում:
2) Տարեք մի ըրջանագիծ, վորն անցնի սված կետով և շոշափի սված ըրջանագիծը սված կետում:

54. 1) Գտեք այն ըրջանագծերի կենտրոնների յերկրաչափական տեղը, վորոնք գծված են սված շառավիղով և շոշափում են սված ըրջանագիծը (2 զեպք՝ ներքին շոշափում և արտաքին շոշափում):

2) Տվյալ շառավիղով գծեցեք մի ըրջանագիծ, վորը շոշափի սված ուղիղը և սված ըրջանը:

55. Միացրեք սված ուղիղը և սված աղեղը սված շառավիղն ունեցող կցորդող աղեղով: Միացման կեսը (շոշափման) սված չէ:

56. Տվյալ յերկու աղեղները միացրեք սվյալ շառավիղն ունեցող կցորդող աղեղով: Շոշափման կետերը չեն տրված:

57. Գծագրեք մի ըրջանագիծ, վորը շոշափի սված յերկու դուգանեռ ուղիղները և նրանց միջև գտնվող ըրջանը:

58. Յերկու ըրջանագծերի հատման կետից տարեք մի հատող այնպես, վոր ըրջանագծերի միջև գտնվող նրա մասը ունենա սված յերկարությունը:

§ 7. ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ԶՍՓՈՒՄԸ ԱՂԵՂՆԵՐՈՎ

Կենտրոնական աղեղուն

1. 1) Ատամնային փոխանցման մեծ անիվն ունի 72 ատամ: Մի ատամը փոսիկի հետ միասին անիվի ըրջանագծից քանի՞

աստիճան է բռնում:

2) Ատամնավոր փոխանցման փոքր անիվի ատամների թիվը 24 է: Մի ատամը փոսիկի հետ միասին քանի՞ աղեղային աստիճան է պարունակում:

3) 72 ատամ ունեցող մեծ անիվը պառլայի վե՛ր մասը կկատարի, յերբ նրան միացած 24 ատամ ունեցող փոքր անիվը կատարի մի լրիվ պառլայ:

2. Արտահայտեցեք աստիճաններով, բուգեներով և վայրկյաններով ըրջանագծի հեռեկալ մասերը՝ 1) $\frac{1}{72}$, 2) $\frac{1}{31}$, 3) 0,001,

4) $\frac{1}{14}$, 5) $\frac{5}{11}$

3. Շրջանագծի վե՛ր մասն են կազմում հեռեկալ աղեղները՝ 1) 15°, 2) 22°30', 3) 108°, 4) 24', 5) 18'', 6) 18°45', 7) 2°0'30'' 8) 10'40'':

4. Վորոշեցեք ժամացույցի սլաքներով կազմված անկյունը 1) ժամը 5-ին, 2) 3 ժամ 25 բուգելին, 3) 4 ժամ 50 բուգելին:

5. Լարը հավասար է 16 սմ-ի և ձգում է 90° աղեղ: Վորոշեցեք նրա հեռավորությունը կենտրոնից:

6. Շրջանագծի շառավիղը հավասար է 1,4 մ-ի: Վորոշեցեք 120°-ի աղեղ ձգող լարի հեռավորությունը կենտրոնից:

7. Յերկու շառավիղների միջև ընկած անկյան մեծությունը հավասար է 102°0'37'': Վորոշեցեք այն անկյունը, վոր կազմված է այդ շառավիղների ծայրերից տարած շոշափողներով:

8. AB աղեղը պարունակում է 73°27': նրա B ծայրից տարած շոշափողն OA շառավիղի շարունակությունը հատում է C կետում: Վորոշեցեք $\angle B$

Ներգծած անկյուն

9. Քանի՞ աստիճան և բույե յե պարունակում աղեղը, յեթե ծայրի շառավիղը նրա լարի հետ կազմում է $37^{\circ}23'$ անկյուն:

10. Աղեղը պարունակում է $117^{\circ}23'$: Վորոշեցեք նրա լարով և լարի ծայրից անցնող շառավիղի շարունակութունով կազմված անկյունը:

11. ABC-ն հատող է, BD-ն լար. \sphericalangle BD-ն պարունակում է 43° , իսկ \sphericalangle BDC-ն $215^{\circ}41'$: Վորոշեք \sphericalangle ABD:

12. Հաշվեցեք շրջանի $\frac{17}{32}$ մասը կազմող աղեղին ներգծած անկյունը:

13. Քանի՞ աստիճան և բույե յե պարունակում աջն աղեղը, վորը բովանդակում է $37^{\circ}21'$ անկյուն:

14. Աղեղը պարունակում է $84^{\circ}52'$: Տվյալ աղեղի կետերից նրա լարն ինչպիսի՞ անկյունով է յերևում:

15. Շրջանագիծը լարով բաժանվում է $5:11$ հարաբերությամբ: Վորոշեցեք այդ լարին հենվող ներգծած անկյան մեծությունը:

16. AB և AC յերկու լարերն են. \sphericalangle AB-ն պարունակում է $110^{\circ}23'$, \sphericalangle AC-ն պարունակում է 38° : Վորոշեցեք \sphericalangle BAC (չերկու պատասխան):

17. AB լարը շրջանագիծը բաժանում է չերկու աղեղների, վորոնցից փոքրը հավասար է 130° -ի, իսկ մեծը AC լարով բաժանվում է յերկու մասերի, վորոնք հարաբերում են այնպես, ինչպես $31:15$ (սկսած A-ից): Վորոշեցեք \sphericalangle ABC:

18. AB և AC լարերը գտնվում են կենտրոնի տարբեր կողմերում և կազմում են BAC անկյունը, վորը հավասար է $72^{\circ}20'$: \sphericalangle AB: \sphericalangle AC = $19:24$: Վորոշեցեք այդ աղեղները:

19. Շրջանագիծը բաժանված է $7:11$: ϕ հարաբերությամբ և բաժանման կետերն իրար հետ միացված են: Վորոշեցեք ստացված յեռանկյան անկյունները:

20. Վորոշեցեք, թե քանի՞ աստիճան և պարունակում աղեղը, յեթե նրա մի ծայրից լարին իջեցրած ուղղահայացը լրացուցիչ աղեղը (մինչև լրիվ շրջանագիծ) բաժանում է $5:2$ հարաբերությամբ:

21. Ծնթե յեռանկյան միջնագիծը հավասար է համապա-

տասխան կողմի կեսին, ապա այդ կողմի դ'մացի անկյունն ուղիղ անկյուն է: Ապացուցեք ոժանդակ շրջանագծի մի ոցով:

22. A և B կետերը միացված են յերկու աղեղներով, վորոնք իրենց ողնությամբ ուղղված են տարբեր կողմեր: Այդ աղեղների C և D միջնակետերը միացված են A կետի հետ: Վորոշեցեք \sphericalangle CAD, յեթե \sphericalangle ACB աղեղը պարունակում է $117^{\circ}23'$, իսկ \sphericalangle AD $42^{\circ}37'$:

23. Ապացուցեք, վոր շրջանին ներդրած բոլոր սեղանները հավասարասրուն են:

24. AMB սեգմենտին ներգծված է ACDB սեղանը, վորի AC կողմը հավասար է CD կողմին և \sphericalangle CAB = $51^{\circ}30'$: AMB աղեղը քանի՞ աստիճան է պարունակում:

25. AB-ն ACDEB կիսաշրջանագծի արամագիծն է, իսկ C, D և E՝ նրա վրա գտնվող կետեր են: AB արամագծի վրա վերցված է F կետն այնպես, վոր \sphericalangle CFA = \sphericalangle DFB և G կետն այնպես, վոր \sphericalangle DGA = \sphericalangle EGB: Վորոշեցեք \sphericalangle FDG անկյունը, յեթե AC աղեղը պարունակում է 60° , իսկ BE աղեղը՝ 20° :


26. Հավասարասրուն յեռանկյան գագաթի անկյունը հավասար է 40° -ի: Սրունքներից մեկը հանդիսանում է կիսաշրջանագծի արամագիծը, վորը յեռանկյան մյուս կողմերով բաժանվում է յերեք մասերի (զծ. 21): Գտեք այդ մասերը:

27. Հավասարակողմ յեռանկյան հիմքը հանդիսանում է շրջանագծի արամագիծը: Ի՞նչպիսի մասերի յեն բաժանվում յեռանկյան կողմերը շրջանագծով և կիսաշրջանագիծը՝ յեռանկյան կողմերով:

28. Առանց կարկինի ի՞նչպես կարելի յե նշել շրջանագծի կետերը՝ ոգտագործելով միայն գծագրական յեռանկյունը:

29. Կառուցեք ուղղանկյուն յեռանկյուն, վորի ներքնաձիգը՝ $c=5$ սմ-ի, և ուղղանկյան գագաթից ներքնաձիգին իջեցրած բարձրությունը հավասար է 2 սմ-ի:

30. Կառուցեք ուղղանկյուն յեռանկյուն, յեթե ներքնաձիգը



Գծ. 21.

հավասար է 3,6 սմ-ի, իսկ եջերից մեկի պրոեկցիան ներքնածիզի վրա՝ հավասար է 2,9 սմ-ի:

31. Գտեք մի կետում հատվող ընդ որ լարերի միջնակետերի յերկրաչափական տեղը: Գնահարկեցեք յերկու դեպք՝ 1) կետը գտնվում է շրջանագծի վրա, 2) կետը գտնվում է շրջանագծի ներսը:

32. Իրար շոշափող չերկու շրջանագծերի շոշափման կետից տարված է հատույ: Ապացուցեք, վոր առաջացած լարերի ծայրերից տարված շառավիղներն ու շոշափողները զուգահեռ են:

33. Շրջանի AOB քառորդի OA և OB շառավիղները վրա, ինչպես արամագծերի, կառուցված են ACO և OCB կիսաշրջանները (զծ. 22): Ապացուցեք, վոր 1, OC ուղիղով AOB անկյունը կիսվում է, 2) A, C և B կետերը գտնվում են մի ուղիղի վրա, 3) AC, OC և CB աղեղներն իրար հավասար են:


34. Շրջանագիծը լարով բաժանված է յերկու մասերի, վորոնք հարաբերում են իրար այնպես ինչպես 5:3: Այդ լարի ծայրից տարված է շոշափող՝ Վորոշեցեք շոշափողով և լարով կազմված սուր անկյունը:

35. AB և AC լարերը հավասար են: MAN—շոշափող է, BC՝ վորի վրա չի գտնվում A կետը, պարունակում 213°42': Վորոշեցեք MAB և NAC անկյունները:

36. AB տրամագծի շարունակության վրա վերցված C կետից տարված է CD շոշափողը: $\angle ADC=114^{\circ}25'$: BD աղեղը քանի՞ աստիճան է բույն յե պարունակում:

37. AB-ն շրջանագծի տրամագիծն է, իսկ BC-ն, շոշափողը: AC հատողը շրջանագծի վրա (D կետում) բաժանվում է յերկու հավասար մասերի: Վորոշեցեք DAB անկյունը:

38. M կետը ABC հավասարասրուն յիռանկյան BD բարձրության միջնակետն է և հանդիսանում է այդ յիռանկյան BA և BC սրունքների միջև MD շառավիղով տարված աղեղի կենտրոնը: Վորոշեցեք այդ աղեղի աստիճանային մեծությունը, յեթև հայանի յե, վոր $\angle BAC=62^{\circ}17'$:



ԳՅ. 22.

ԱՅԿՅՈՒՆՆԵՐ, ԳՐՈՏԵՑ ԳԱՂԱՐՏՆԵՐ ԳՏՆԵՎՈՒՄ ԵՆ ՇՐՋԱՆԻՑ ԳՆԵՐ ՅԻՎ ԳՈՐՈՒ ԱՆՏԱԳՈՒՄ ԱՅԿՅՈՒՆ

39. Շրջանագիծը A, B, C և D կետերով բաժանված է 4 մասերի, այնպես, վոր $\sim AB : \sim BC : \sim CD : \sim DA = 2 : 3 : 5 : 6$:

Տարված AC և BD լարերը, վորոնք հատվում են M կետում: Վորոշեցեք $\angle AMB$:

40. AB տրամագիծն ու CD լարը հատվում են M կետում: $\angle CMB=75^{\circ}$ $\sim BC$ -ն պարունակում է 110° : BD աղեղը քանի՞ աստիճան է պարունակում:

41. AB և CD լարերը հատվում են M կետում: $\angle AMC=46^{\circ}$, $\sim AD$ -ն մեծ է $\sim CB$ -ից $26^{\circ}54'$ -ով: Վորոշեցեք $\sim AD$:

42. m° պարունակող AB աղեղի ծայրերից տարված են AC և BD լարերը, վորոնց հատվելուց առաջացած DMC անկյունը հավասար է CD աղեղին ներգծված DNC անկյանը: Վորոշեցեք CD աղեղը:

43. ABCD քառանկյան B և D անկյուններն ուղիղ են: AC անկյունագիծը AB կողմի հետ կազմում է 40° անկյուն, իսկ AD կողմի հետ՝ 30° անկյուն: Վորոշեցեք AC և AD անկյունագծերով կազմված սուր անկյունը:

44. Շրջանագիծը A, B, C և D կետերով բաժանված է այնպես, վոր $\sim AB : \sim BC : \sim CD : \sim DA = 3 : 2 : 13 : 7$: AD և BC լարերը շարունակվելով՝ հատված են M կետում: Վորոշեցեք AMB անկյունը:

45. Տրված է մի շրջանագիծ, վորի մեջ տարված է լար և շոշափող, ընդվորում շոշափման կետը գտնվում է լարով ձգված աղեղներից փոքրի վրա: Շոշափողի վրա գտեք մի կետ, վորից լարը յերևա ամենամեծ անկյունով:

46. ABC հատողը կտրում է 112° պարունակող BC աղեղը, իսկ AD շոշափողը շոշափման D կետով այդ աղեղը բաժանում է 7:9 հարաբերութչամբ: Վորոշեցեք $\angle BAD$:

Ցուցում. — (ներքոհիշյալ մի քանի խնդիրների համար): Սահմանելով արտադրած անկյունը, ոգտակար է հիշել հեռահարը. — յերկու շոշափողներով կազմված անկյունը հանդիսանում է շոշափման կետից տարված շառավիղներով կազմված անկյան լրացուցիչը մինչև 180° :


47. $200^{\circ}30'$ պարունակող աղեղի ծայրերից տարված է յեր-

կու շոշափող, մինչև նրանց փոխհատվելը: Վորոշեցեք նրանց միջև կազմված անկյունը:


48. Սրտազգծված անկյունը հավասար է $73^{\circ}25'$ -ի: Վորոշեցեք նրա կողմերի միջև ընկած աղեղները:

49. Շրջանագիծը լարով բաժանվում է $11:16$ հարաբերությամբ: Վորոշեցեք լարի ծայրերից տարված շոշափողներով կազմված անկյունը:

50. Տված շրջանագծի ներսում տեղափոխված է մի ուրիշ շրջանագիծ (զծ. 23): Մեծ շրջանագծի ABC և ADE լարերը շոշափում են փոքր շրջանագիծը B և D կետերում: BMD-ն շոշափման կետերի միջև ընկած փոքր աղեղն է, իսկ CNE-ն լարերի ծայրերի միջև ընկած աղեղն է: Վորոշեցեք BNE աղեղը, յեթե BMD աղեղը պարունակում է 130° :



Գծ. 23.



Գծ. 24.

51. Տված շրջանագծի ներսում գտնվում է ուրիշ շրջանագիծ (զծ. 4): Մեծ շրջանագծի CAE և DBF լարերը (չեն հատվում) շոշափում են փոքր շրջանագիծը A և B կետերում: AMB-ն շոշափման կետերի միջև ընկած աղեղներից փոքրն է, իսկ CND-ն և EPF-ը լարերի ծայրերի միջև ընկած աղեղներն են: Քանի՞ աստիճան է պարունակում CND աղեղը, յեթե AMB աղեղը պարունակում է 154° , իսկ EPF աղեղը՝ 70° :

52. Շրջանագիծը բաժանված է $5:9:10$ հարաբերությամբ, և բաժանման կետերից տարված են շոշափողներ: Վորոշեցեք ստացած յեռանկյան մեծ անկյունը:

53. AB և AC լարերը կազմում են BAC անկյունը, վորը հավասար է $74^{\circ}24'$ -ի: B և C կետերից տարված են շոշափողներ, վորոնք հատվում են M կետում: Վորոշեցեք $\angle BMC$:

54. Վորոշեցեք արտագծած անկյան մեծությունը, յեթե նրա գագաթի հեռավորությունը (փոքրապուշն) շրջանագծից հավասար է շառավղին:

55. $\sphericalangle AB=46^{\circ}24'$: OA շառավղի շարունակության վրա վերցված է AC մասը, վորը հավասար է AB լարին: C կետը միացված է B կետի հետ: Վորոշեցեք $\angle ABC$:

56. ABC յեռանկյան C անկյունն ուղիղ է: C կենտրոնից AC շառավղով գծված է ADE աղեղը, վորը ներքնաձիգը հատում է D կետում, իսկ CB' եջը՝ E կետում: Վորոշեցեք AD և DE աղեղները, յեթե $\angle B=37^{\circ}24'$:

57. ABC և ADC յեռանկյուններն ունեն AC ընդհանուր կողմը: AD և BC կողմերը հատվում են M կետում: A և B անկյուններն իրար հավասար են և պարունակում 40-ական աստիճան, նրանց գագաթների հեռավորությունը հավասար է AB կողմին: Վորոշեցեք ABC և ADC յեռանկյունների անկյունները, յեթե $\angle AMC=70^{\circ}$:

58. Տված MN ուղիղի վրա գտեք մի կետ, վորից տված AB հատվածը յերևա տված անկյունով:

59. Կառուցեք յեռանկյունը, յերբ հայտնի յեն հիմքը, գագաթի անկյունն ու հիմքին տարած միջնագիծը:

60. Կառուցեք յեռանկյունը, յերբ տված են հիմքը, գագաթի անկյունն ու բարձրությունը:

61. Տված են իրենց մեծությամբ և դիրքով a և b հատվածները: Գտեք մի կետ, վորից a հատվածը յերևա տված A անկյունով, իսկ b հատվածը՝ տված B անկյունով:

62. Կառուցեք զուգահեռագիծը, յերբ հայտնի յեն անկյունագծերն ու անկյուններից մեկը:

63. Ուղղանկյուն յեռանկյան ներքնաձիգը հավասար է 4 մ-ի: Վորոշեցեք արտագծած շրջանագծի շառավղը:

64. Հալասարարաբուն յեռանկյան

Սիգսեհե, վորը պարունակում է տված անկյունը

Ներգծած յեվ արտագծած յեռանկյուններ

սրունքը հավասար է 2 սմ-ի, իսկ դագաթի անկյունը՝ 126° -ի: Վորոշեցեք արտադրած շրջանագծի տրամախորհրդը:

65. ABC յնոանկյան արտադրած շրջանի կենտրոնն է O: Վորոշեցեք OAC անկյունը, 1) յեթև $\angle B=50^\circ$, 2) յեթև $\angle B=126^\circ$:

66. Ուղղանկյուն յնոանկյան սուր անկյուններից մեկը հավասար է 25° -ի: Ենթից յուրաքանչյուրը արտադրած շրջանագծի կենտրոնից ինչպիսի անկյունով են յերևում:

67. Յնոանկյան յերկու անկյունները հավասար են 100° և 50° : Այդ յնոանկյանը ներգծած շրջանագծի կենտրոնից նրա կողմերն ինչպիսի անկյունով են յերևում:

68. ABC հավասարասրուն յնոանկյանն արտադրած շրջանի OA շառագիղը յնոանկյան AC հիմքի հետ կազմում է OAC անկյունը, վորը հավասար է $26^\circ 38'$ -ի: Վորոշեցեք $\angle BAC$ (յերկու դեպք):

69. Կառուցեք հավասարասրուն յնոանկյունը, յերը հայտնի յեն հիմքն ու ներգծած շրջանի շառագիղը:

70. Հավասարասրուն յնոանկյան սրունքը ներգծած շրջանի շոշափման կետով բաժանվում է յերկու մասերի, վորոնք հարաբերում են այնպես, ինչպես 7 : 5 (սկսած դագաթից): Գտեք սրունքի և հիմքի հարաբերությունը:

71. Ուղղանկյուն հավասարասրուն յնոանկյան ներգծած շրջանի շառագիղը նշանակենք r, իսկ պարագծի կեսը՝ p: Վորոշեցեք ներքնաձիղը:

72. Տված շրջանին արտադրեցեք ուղղանկյուն հավասարասրուն յնոանկյուն:

73. Տված շրջանին, վորի շառագիղը հավասար է 4 սմ, արտադրված է ուղղանկյուն յնոանկյուն, այդ յնոանկյան ներքնաձիղը հավասար է 26 սմ-ի: Գտեք յնոանկյան պարագիծը:

74. Տված շրջանին ներգծեցեք մի յնոանկյուն, վորի յերկու անկյունները արված են:

75. Տված շրջանին արտադրեցեք մի յնոանկյուն, վորի յերկու անկյունները արված են:

Ներգծած յեղ արտադրած յնոանկյուններ

76. Ուղղանկյան վորը կողմը հավասար է 1 մետրի, իսկ անկյունագծերով կազմված սուր անկյունը հավասար է 60° -ի: Գտեք արտադրած շրջանի շառագիղը:

77. Ուղղանկյան անկյունագիծը կողմի հետ կազմում է $12^\circ 35'$ անկյուն: Նրան արտադրած շրջանագիծն ուղղանկյան դագաթներով ինչպիսի չորս մասերի յե բաժանվում:

78. Ներգծեցեք շրջան՝ 1) տված շեղանկյան, 2) տված զեւթաթիւն:

79. Շեղանկյան կողմը հավասար է 8 սմ-ի, իսկ սուր անկյունը պարունակում է 30° : Վորոշեցեք ներգծած շրջանի շառագիղը:

80. Շեղանկյան ներգծված է շրջանագիծ: Այդ շրջանագիծը շոշափման կետերով ինչպիսի չորս մասերի յե բաժանվում, յեթև շեղանկյան սուր անկյունը հավասար է 37° -ի:

81. Հավասարասրուն սեղանի հիմքի անկյունը հավասար է 56° -ի, իսկ անկյունագծերով կազմված զեպի սրունքը նայող անկյունը հավասար է 40° -ի: Վորա՞նք է գանվում արտադրած շրջանի կենտրոնը, սեղանի ներքը, թե՞ դուրսը:

82. Շրջանին արտադրված սեղանի պարագիծը հավասար է 12 սմ-ի: Վորոշեցեք այդ սեղանի միջին գիծը:

83. Շրջանին արտադրված է հավասարասրուն սեղան, վորի անկյուններից մեկը հավասար է 30° -ի, իսկ միջին գիծը 1 մ-ի: Վորոշեցեք շրջանի շառագիղը:

84. Ներգծած ABCD քառանկյան AC անկյունագիծն ուղղահայաց է BD անկյունագծին և կիսում է այն: Վորոշեցեք այդ քառանկյան անկյունները, յեթև $\angle BAD=70^\circ 23' 42''$:

85. Քառանկյանը կարելի յե արտադրել շրջանագիծ, յեթև նրա անկյունները հաջորդաբար հարաբերում են իրար այնպես, 1) ինչպես 2 : 4 : 5 : 3; 2) ինչպես 5 : 7 : 8 : 9:

86. Սեկտորի կենտրոնական անկյունը հավասար է 60° -ի, իսկ շառագիղը՝ R: Վորոշեցեք այդ սեկտորին ներգծած շրջանի շառագիղը:

87. ABCD քառանկյան մեջ տված է՝ $\angle ABC=116^\circ$, $\angle ADC=64^\circ$, $\angle CAB=35^\circ$ և $\angle CAD=52^\circ$: Վորոշեցեք անկյունագծերով կազմված այն անկյունը, վորը հենվում է AB կողմի վրայ:

88. 1) Արտագծած քառանկյան յերեք կողմերը (հաջորդաբար) հարաբերում են այնպես, ինչպես 1 : 2 : 3: Վորոշեցեք կողմերը, յիժե քառանկյան պարագիծը հավասար է 24 մ-ի:


2) Ներգծած քառանկյան յերեք անկյունները հարաբերում են (հաջորդաբար) այնպես, ինչպես 1 : 2 : 3: Վորոշեցեք քառանկյան անկյունները:

§ 8. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՅԵՌԱՆԿՅԱՆ ԱՆԿՅԱՆ ԿԻՍՈՂԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Համեմատական հատվածներ

1. 1) Հաջորդական վերադրման միջոցով գտեք AB և CD հատվածների հարաբերությունը (գծ. 25):

2. Գտեք հավասարակողմ յեռանկյան բարձրության և կողմի հարաբերությունը (0.01 ճշտությամբ):



Գծ. 25.

3. 1) AB հատվածը M կետով բաժանվում է՝ AM : MB = 1 : 2 հարաբերությամբ: Գտեք AM : AB և MB : AB հարաբերությունները:

2) K կետը AB հատվածը բաժանում է m : n հարաբերությամբ: Գտեք AK : AB և KB : AB հարաբերությունները:

4. 6 սմ յերկարություն ունեցող AB հատվածի վրա վերցված է C կետը. վորի հեռավորությունը A-ից հավասար է 3,6 սմ-ի: AB հատվածի B-ից զուրս շարունակության վրա գտեք մի D կետ, վորի հեռավորությունը A-ից հարաբերի B-ից ունեցած հեռավորությանն այնպես, ինչպես AC : CB:

5. Յերկու զուգահեռ փողոցներ հատվում են A կետից զուրս յերկու յերկու փողոցներով: Զուգահեռ փողոցների այն մասերը, վորոնք ընկած են «ճառագայթաձև փողոցների» միջև, հավասար են 0,75 կմ և 1,25 կմ. Երկարաքարը A կետից ճառագայթաձև փողոցներից մեկով մինչև առաջին զուգահեռ փողոցն

անցնում է 15 րոպեյում: Երկարաքարը նույն արագությամբ միևնույն ճառագայթաձև փողոցով քանի՞ րոպեյում կհասնի մինչև յերկրորդ զուգահեռ փողոցը:

6. A անկյան կողմերը հատվում են BC և DE յերկու զուգահեռ ուղիղներով (ընդունել B և D կետերը անկյան մի կողմի վրա): Պահանջվում է՝

1) վորոշել AE-ն, յիժե AB=8 մ, AD=12 մ և AC=10 մ.

2) վորոշել AB-ն, յիժե AC=12 մ, AE=16 մ և AB+AD=21 մ.

3) վորոշել AD-ն, յիժե AC : AE = 3/11 : 0,6 և BD=12 դմ:

7. ABCD սեղանի AB և CD կողմային կողերը շարունակվելով, հատվում են M կետում: Պահանջվում է՝

1) վորոշել CM հատվածը, յիժե AB=1 մ, CD=15 դմ և BM=8 դմ.

2) վորոշել BM հատվածը, յիժե AB=1,2 մ և CD : CM = 1/6 : 0,25.

3) վորոշել CD, յիժե AM : BM = 17 : 9 և CD - CM = 1,6 մ:

8. B անկյան մի կողմի վրա վերցված հատվածներն են՝ BC և BE: Իմացեք՝ AC և DE ուղիղները զուգահեռ են արդյոք:

1) յիժե BA : AD = 3 : 4, BC=1,2 մ և BE=2,8 մ.

2) յիժե BD : AD = 11 : 8,5 և BC = 5/17 CE


3) յիժե BA = 7/13 BD, BC=2,8 մ և CE=2 մ:

9. 1) Յեռանկյան մի կողմը բաժանված է 5 մասի, և բաժանման կետերից տարված են հիմքին զուգահեռ ուղիղներ: Վորոշեցեք զուգահեռների այն հատվածները, վորոնք գտնվում են յեռանկյան կողմերի միջև, յիժե հիմքը հավասար է 20 սմ-ի:


2) Սեղանի կողմնային կողմը բաժանված է 8 հավասար մասերի և բաժանման կետերից տարված են հիմքին զուգահեռ ուղիղներ մինչև մյուս կողմնային կողմի հետ հատվելու: Վորոշեցեք զուգահեռների այն հատվածների յերկարությունները, վորոնք գտնվում են կողմնային կողմերի միջև, յիժե սեղանի հիմքերը հավասար են 50 սմ-ի և 30 սմ-ի:

10. Սեղանի հիմքերը հավասար են 1,8 մ-ի և 1,2 մ-ի, իսկ կողմնային կողմերը, վորոնց յերկարությունները հավասար են 1,5 մ-ի և 0,9 մ-ի, շարունակված են մինչև փոխհատվելը: Վորոշեցեք, թե կողմնային կողմերը վորքան են շարունակված:

11. Ծառի բարձրությունը չափելու համար (գծ. 26) նրա բնից գեանի վրա անցկացնում են մի ուղիղ և այդ ուղիղի յերկու կետերում գեանին դաժում են ցցեր, այնպես վոր նրանց A_1 և B_1 ծայրերը և ծառի M գագաթը գտնվեն մի ուղիղի վրա: Գտեք ծառի բարձրությունը, յեթե $AD=m$, $AB=n$ և ցցերի բարձրություններն են a և b ($m=22,5$ մ, $n=1,25$ մ, $a=1,75$ մ և $b=2,55$ մ):



Գծ. 26.



Գծ. 27.


12. 27 գծագրում $AB \parallel CD$, $FE \perp AB$, $OA=4,8$ մ, $OE=4,5$ սմ, $OB=5,4$ սմ, $OF=1,5$ սմ, $AB=4,8$ սմ: Գտեք OD , OC և DC հատվածները:

13. Ուղեկալի (шлагбаум) կարճ բազուկի յերկարությունը հավասար է 0,75 մ (գծ. 28), իսկ յերկար բազուկինը՝ 3,75 մ: Ինչքան կբարձրանա մեծ բազուկի ծայրը, յեթե կարճ բազուկի ծայրն իջնում է 0,5 մ (գծագրեցեք):

14. Յեռանկյան յերկու կողմերի պրոեկցիաները հիմքի վրա հավասար են 15 մ և 27 մ: Այդ կողմերից մեկի յերկարությունը հավասար է 45 մ: Այդ կողմը հիմքի միջնակետից տարած ուղղահայացով (սկսած զազաթից) ինչպիսի մասերի յե բաժանվում է (յերկու գեպը):

15. MAN անկյան ներսը և կամ դուրսը գտնվող կետից տարեք մի ուղիղ այնպես, վոր նրա այն մասերը, վորոնք

գտնվում են կետի և անկյան կողմերի միջև, հարաբերեն իրար այնպես, ինչպես $m:n$ (Քննարկեցեք այն դեպքը, յերբ $m=n$):



Գծ. 28.

16. 1) Գտեք այն կետերի յերկրաչափական տեղը, վորոնց հեռավորությունները տվյալ անկյան կողմերից հարաբերում են իրար այնպես, ինչպես $m:n$:

2) Յեռանկյան մեջ գտեք մի այնպիսի կետ, վոր նրանից կողմերին տարած ուղղահայացներն հարաբերեն իրար այնպես, ինչպես $m:n:p$:

Յեռանկյան կիսորդի հատկություններ

17. ABC յեռանկյան B անկյան կիսորդն է BD : Պետք է վորոշել՝

- 1) AD և DC հատվածները, յեթե $AB=10$ մ, $BC=15$ մ և $AC=20$ մ:
- 2) BC կողմը, յեթե $AD:DC=8:5$ և $AB=16$ մ:
- 3) AC կողմը, յեթե $AB:BC=2:7$ և $DC-AD=1$ մ:

18. Յեռանկյան անկյուններից մեկը, վորը գտնվում է 9 սմ և 6 սմ յերկարություն ունեցող կողմերի միջև, կիսված է Յերրորդ կողմի վրա առաջացած հատվածներից մեկը հավասար ե տված կողմերից մեկին: Վորոշեցեք յերրորդ կողմը:

19. D կետը գտնվում է ABC յեռանկյան BC կողմի վրա: Իձացեք, թե AD ուղիղով A անկյունը կկիսվի՞ արդյոք, յեթե՝

1) $AB=12$ սմ, $AC=15$ սմ, $BD=8$ սմ և $DC=10$ սմ.

2) $AB=12$ մ, $AC=56$ մ և $BD:DC=4:3$.

3) $AB=\frac{5}{11}AC$, $BD=2$ մ և $DC=4,5$ մ.

4) $AB=6$ մ, $AC=28$ մ, $BD=\frac{3}{17}BC$:

20. ABC յեռանկյան ներգծված է ADEF շեղանկյունն այնպես, Վոր D, E և F գագաթները համապատասխանաբար գտնվում են յեռանկյան AB, BC և AC կողմերի վրա: Վորոշեցեք BE և EC հատվածները, յեթե $AB=14$ սմ, $BC=12$ սմ և $AC=10$ սմ:

21. Յեռանկյան կողմերը հավասար են 51 սմ, 85 սմ և 104 սմ: Տարված է մի շրջանագիծ, Վորը շոշափում է յեռանկյան յերկու փոքր կողմերը, իսկ կենտրոնը գտնվում է մեծ կողմի վրա: Մեծ կողմը շրջանագծի կենտրոնով ինչպիսի մասերի յե բաժանվում:

22. Հավասարասրուն յեռանկյան բարձրությունը՝ հավասար է 20 սմ-ի, իսկ հիմքը և սրունքը հարաբերում են այնպես, ինչպես 4:3: Վորոշեցեք ներգծած շրջանի շառավիղը:

23. Հավասարասրուն յեռանկյան սրունքը հավասար է 60 սմ-ի, իսկ բարձրությունը յեռանկյանը ներգծած շրջանի կենտրոնով բաժանվում է յերկու մասերի, Վորոնք հարաբերում են իրար այնպես, ինչպես 12:5: Վորոշեցեք հիմքը:

24. Հավասարասրուն յեռանկյանը ներգծած շրջանի շառավիղը հավասար է բարձրության $\frac{2}{7}$ մասին: Վորոշեցեք յեռանկյան կողմերը, յեթե պարագիծը հավասար է 6 սմ-ի:

25. AB լարը հավասար է 15 մ-ի, AC լարը՝ 21 մ-ի, իսկ BC լարը՝ 24 մ-ի: D-ն BC աղեղի միջնակետն է: AED ուղիղով BC լարը ինչպիսի մասերի յե բաժանվում:

26. Տրված է ABC յեռանկյան կողմերը՝ a, b, c. BD-ն B անկյան կիսորդն է, իսկ O կետը՝ BD-ի և C անկյան կիսորդի հատման կետն է: Վորոշեցեք OD:OB հարաբերությունը:

27. ABC յեռանկյան մեջ $AB=15$ սմ և $AC=10$ սմ: BD-ն A անկյան կիսորդն է: D կետից AB կողմին տարված է զուգա-

հեռ ուղիղ, Վորը հատում է AC կողմը E կետում: Վորոշեցեք AE, EC և DE հատվածները:

28. ABC հավասարասրուն յեռանկյան սրունքը հավասար է a-ի, իսկ AC հիմքը b-ի: AN-ը և CM-ը A և C անկյունների կիսորդներն են: Վորոշեցեք MN յերկարությունը:

§ 9. ՆՄԱՆ ՅԵՌԱՆԿՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԲԱԶՄԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Նման յեռանկյուններ

1. Յեռանկյան կողմերը հարաբերում են այնպես, ինչպես 4:5:6: Նրա նման յեռանկյան փոքր կողմը հավասար է 0,8 մ-ի: Վորոշեցեք յերկրորդ յեռանկյան մյուս կողմերը:

2. Յեռանկյան կողմերը հարաբերում են այնպես, ինչպես 2:5:4, իսկ նրան նման յեռանկյան պարագիծը հավասար է 55 մ-ի: Վորոշեցեք յերկրորդ յեռանկյան կողմերը:

3. Գործարանի ծխնելույզի ստվերի յերկարությունն է 35,8 մ-ի, իսկ նույն ժամանակ զետնին ընկած 1,9 մ յերկարություն ունեցող ցցի ստվերը հավասար է 1,62 մ-ի: Գտեք ծխնելույզի բարձրությունը:

4. ABC և $A_1B_1C_1$ յեռանկյունների մեջ տված է, Վոր $\angle A = \angle A_1$ և $\angle B = \angle B_1$: Այս յեռանկյունների համար լուծեցեք հետևյալ խնդիրները:

1) Տված է $a=10$, $b=14$, $a_1=25$, $c_1=20$: Վորոշեցեք c-ն և b_1 -ը:

2) Տված է $a=35$, $a_1=21$, $c=c_1=8$: Վորոշեցեք c-ն:

5. ABC և DEF յեռանկյունների մեջ $\angle A = \angle E$ և $\angle B = \angle D$ $AB=16$ սմ, $BC=20$ սմ, $DE=12$ սմ, $AC=EF=6$ սմ: Վորոշեցեք AC, EF և DF կողմերը:

6. Յերկու հավասարասրուն յեռանկյունների մեջ գագաթների անկյունները հավասար են: Մի յեռանկյան սրունքն ու հիմքը հավասար են 17 սմ-ի և 10 սմ-ի: մյուս յեռանկյան հիմքը հավասար է 8 սմ-ի: Վորոշեցեք յերկրորդ յեռանկյան սրունքը:

7. ABC և $A_1B_1C_1$ յեռանկյունների մեջ տված է, Վոր $\angle B = \angle B_1$ և Վոր մի յեռանկյան մեջ B անկյունը կազմող կողմերը 2,5 անգամ մեծ են յերկրորդ յեռանկյան B_1 անկյունը

կազմող կողմերից: Վորոշեցեք AC և A₁C₁ կողմերը, յիթե նրանց հունձարը հավասար է 4,2 մետրի:

8. ABC և DEF յեռանկյունների մեջ՝ $\angle B = \angle D$, $AB = \frac{4}{3} DE$ և $DF = 0,75 BC$: Վորոշեցեք AC և EF կողմերը, յիթե նրանց տարբերությունը հավասար է 5 սմ-ի:

9. Իմացեք. — յեռանկյունները նման կլինե՞ն, յիթե նրանց կողմերը հավասար են՝

1) 1 մ, 1,5 մ և 2 մ; 10 սմ, 15 սմ և 20 սմ:

2) 1 մ, 2 մ և 15 դմ; 12 դմ, 8 դմ և 16 դմ:

3) 1 մ, 2 մ և 1,25 մ; 10 սմ, 9 սմ և 16 սմ:

10. 1) ABC յեռանկյան մեջ $AB = 15$ մ, $AC = 20$ մ: AB կողմի վրա վերցված է $AD = 10$ մ, իսկ AC կողմի վրա՝ $AE = 12$ մ: ABC և ADE յեռանկյունները նման են արդյոք՝


2) Նախորդ խնդրում պահպանելով AB և AC կողմերի յերկարությունները, վերցրեք $AD = 9$ մ և $AE = 12$ մ: Այդ դեպքում ABC և ADE յեռանկյունները նման կլինե՞ն արդյոք՝

11. AB-ն մի շրջանագծի տրամագիծ է, իսկ AC-ն լար՝

Գծված է նաև մի ուրիշ շրջանագիծ, վրի տրամագիծը՝ DE հավասար է $\frac{13}{17} AB$ -ի, վերջինի մեջ տարված է DF

լարը, վորը հավասար է $\frac{13}{17} AC$ -ի: Վորոշեցեք EF-ը, յիթե հայտնի յե, վոր $BC = 3,4$ մ:

12. 1) Յեռանկյան կողմերը հավասար են 0,8 մ, 1,6 մ և 2 մ, իսկ նրան նման յեռանկյան պարագիծը հավասար է 5,5 մ-ի: Վորոշեցեք յերկրորդ յեռանկյան կողմերը:





Գծ. 29.

2) Մի յեռանկյան պարագիծը հավասար է նրան նման յեռանկյան պարագծի $\frac{11}{13}$ մասին: Յերկու համապատասխան կողմերի տարբերությունը հավասար է 1 մ-ի: Վորոշեցեք այդ կողմերը:

13. Ռազմական կամուրջներ շինելիս, վորպեսզի նրա ծանրությունը հավասարապես տարածվի հատակի մակերևույթի վրա, նրա հաստարանների A և B վտաքերի ներքանների տակ զամուռ են AB տախտակը, իսկ յուրաքանչյուր զույգի վտաքերը կապում են DE շաղկապի հետ: Գտեք DE շաղկապի յերկարությունը, յիթե հայտնի յե, վոր հենարանի բարձրությունը՝ $h = 3$ մ, AB տախտակի յերկարությունը հավասար է 1,5 մ-ի, ինչպես նաև շաղկապն AB տախտակից 0,5 մ վերև է ամրացված (դժ. 29):

14. Տված է ABC յեռանկյունը և նրա ներսում AC կողմին զուգահեռ DE հատվածը (D կետը գտնվում է AB կողմի վրա, E կետը՝ BC-ի վրա): Վորոշեցեք DE յերկարությունը:

Յիթե 1) $AC = 20$ սմ, $AB = 17$ սմ և $BD = 11,9$ սմ, 2) $AC = 18$ դմ, $AB = 15$ դմ և $AD = 1$ մ:



Գծ. 30.

15. Տված է ABC յեռանկյունը և նրա ներսում AC կողմին զուգահեռ DE հատվածը (D-ն գտնվում է AB-ի վրա, E-ն՝ BC-ի վրա): Պահանջվում է՝

1) վորոշել AD-ն, յիթե $AB = 16$ սմ, $AC = 2$ դմ և $DE = 15$ սմ:

դիզ, վորը նրա յերկու կողմերի շարունակություններից հատում է p և q հատվածներ: Վորոշեցեք շեղանկյան կողմը:

34. Տված սեղանաթև ներգծեցեք մի քառակուսի այնպես, վոր նրա մի կողմն ընկնի լարի վրա, իսկ հանդիպակաց կողմի ծայրերն ընկնեն ազեզի վրա:

35. Տված յեռանկյանը ներգծեցեք մի քառակուսի այնպես, վոր նրա մի կողմն ընկնի յեռանկյան մեծ կողմի վրա, իսկ այդ կողմի դիմացի անկյունների գագաթներն ընկնեն յեռանկյան մյուս յերկու կողմերի վրա:

36. a հիմք և h բարձրություն ունեցող յեռանկյանը ներգծված է մի քառակուսի այնպես, վոր նրա յերկու գագաթները գտնվում են յեռանկյան հիմքի վրա, իսկ մյուս գագաթները՝ յեռանկյան մյուս կողմերի վրա: Վորոշեցեք քառակուսու կողմը:

37. Տված յեռանկյանը ներգծեցեք ուղղանկյուն, վորի կողմերի հարաբերությունը լինի m : n:

38. Մի յեռանկյան, վորի հիմքը հավասար է 48 սմ-ի, իսկ բարձրությունը 16 սմ-ի, ներգծված է ուղղանկյուն, վորի կողմերը հարաբերում են այնպես, ինչպես 5 : 9, Ուղղանկյան մեծ կողմը գտնվում է յեռանկյան հիմքի վրա: Վորոշեցեք ուղղանկյան կողմերը:

39. Մի յեռանկյան, վորի հիմքը հավասար է 30 սմ-ի, իսկ բարձրությունը 10 սմ-ի, ներգծված է հավասարասրուն ուղղանկյուն յեռանկյուն, վորի ներքնաձիգը զուգահեռ է ավյալ յեռանկյան հիմքին, իսկ ուղիղ անկյան գագաթը գտնվում է այդ հիմքի վրա: Վորոշեցեք ներքնաձիգը:

40. Յեռանկյանը ներգծված է մի կիսաշրջան, վորի կիսաշրջանագիծը շոշափում է հիմքը, իսկ արամագիծը (յերկու ծայրերը գտնվում են յեռանկյան մյուս կողմերի վրա) զուգահեռ է հիմքին: Վորոշեցեք շոշափիցը, յեթե յեռանկյան հիմքը հավասար է a-ի, իսկ բարձրությունը՝ h-ի:

41. ABC յեռանկյան C անկյունն ուղիղ է. AC=6 սմ, CB=12 սմ: BC կողմի վրա վերցված է D կետն այնպես, վոր $\angle ADC=90^\circ$ —B: D կետն ինչպիսի մասերից է բաժանում CB կողմը:



42. Տված են ABC յեռանկյան յերկու կողմերը՝ BC=16 սմ, AC=12 սմ և համապատասխան բարձրությունների գումարը՝ AD+BE=14 սմ: Վորոշեցեք AD-ն և BE-ն:

43. Զուգահեռագծի կողմերը հավասար են 2 սմ-ի և 16 դմ-ի: Մեծ կողմերի հեռավորությունն իրարից հավասար է 8 դմ-ի: Վորոշեցեք փոքր կողմերի հեռավորությունը:

44. Զուգահեռագծի պարագիծը հավասար է 42 սմ-ի, իսկ բարձրությունները հարաբերում են այնպես, ինչպես 5 : 7: Վորոշեցեք նրանց համապատասխան կողմերը:

45. Վորոշեցեք լարի յերկարությունը, յեթե աված են r շառավիղը և լարի մի ծայրի ու մյուս ծայրից տարված շոշափողի a հեռավորությունը:

46. Յերկու շրջանագծեր ունեն արտաքին շոշափում: Շոշափման կետից տարված ուղիղը շրջանագծերի մեջ առաջացնում է յերկու լարեր, վորոնցից մեկը հավասար է մյուսի $\frac{13}{5}$ -ին: Վորոշեցեք շառավիղները, յեթե կենտրոնների հեռավորությունը հավասար է 36 սմ-ի:

47. Տված է ABC յեռանկյունը. CD-ն C անկյան կիսողն է. E կետը գտնվում է BC-ի վրա, ընդվորում DE || AC: Վորոշեցեք DE-ն, յեթե BC=a և AC=b:

48. Տված է ABC յեռանկյունը. BD-ն նրա բարձրությունն է. AE-ն A անկյան կիսողն է. EF-ը ուղղահայաց է AC-ին: Վորոշեցեք EF-ը, յեթե BD=30 սմ և AB : AC=7 : 8:

49. Զուգահեռագծին ներգծված է շեղանկյուն այնպես, վոր նրա կողմերը զուգահեռ են զուգահեռագծի անկյունագծերին: Վորոշեցեք շեղանկյան կողմը, յեթե զուգահեռագծի անկյունագծերը հավասար են l-ի և m-ի:

50. Զորս զուգահեռ ուղիղներ, վորոնց հաջորդական հեռավորությունները հարաբերում են այնպես, ինչպես 2 : 3 : 4, հատվում են յերկու զուգամիտվող ուղիղներով: Առաջացած չորս զուգահեռ հատվածներից առաջինը և չորրորդը հավասար են 60 դմ-ի և 96 դմ-ի: Վորոշեցեք մյուս հատվածները:

51. ABC յեռանկյան BA կողմից դեպի BC-ն տարված է DE հատվածը, վորը զուգահեռ է AC-ին: Տված է AB=24 սմ, BC=32սմ, AC=28սմ և AD+CE=16սմ: Պահանջվում է վորոշել DE-ն:

52. ABC յեանկյան AD և BE բարձրությունները հաս-
վում են . O կետում : Տված է $AD+BE=35$ դմ : $AO=9$ դմ և
 $BO=12$ դմ : Պահանջվում է վորոշիլ OE-ն և OD-ն :

53. Հավասարաբուն յեանկյանը, վորի սրունքը հավասար
է 100 դմ-ի, իսկ հիմքը 60 դմ-ի, ներդժված է շրջան : Վորոշեցեք
սրունքների վրա գտնվող շոշափման կետերի հեռավորությունը :

54. Սեկտորի շառավիղը հավասար է r-ի, իսկ նրա աղեղի
լարը՝ a-ի : Վորոշեցեք այդ սեկտորին ներդժված շրջանի շառա-
վիղը :


Նման բազման-
կյուններ

55. Հնգանկյան կողմերը հավասար են
35 սմ-ի, 14 սմ-ի, 28 սմ-ի, 21 սմ-ի և 42 սմ-ի :

Սրան նման հնգանկյան փոքր կողմը հա-
վասար է 12 սմ-ի : Վորոշեցեք վերջինիս մյուս կողմերը :

56. Մի քառանկյան կողմերը հարաբերում են իրար այնպես,
ինչպես $1 : \frac{1}{2} : \frac{2}{3} : 2$: Նրան նման քառանկյան պարագիծը հա-
վասար է 75 մ-ի : Վորոշեցեք յերկրորդ քառանկյան կողմերը :

57. Մի քառանկյան կողմերը հավասար են 10 դմ, 15 դմ,
20 դմ և 25 դմ : Նման քառան-
կյան ամենամեծ և ամենափոքր
կողմերի գումարը հավասար է
28 դմ-ի : Վորոշեցեք յերկրորդ
քառանկյան կողմերը :



Գծ. 31.

58. Յերկու նման բազման-
կյունների ամենամեծ կողմերը
հավասար են 35 մ-ի և 14 մ-ի,
իսկ նրանց պարագծերի տարբե-
րությունը հավասար է 60 մ-ի :
Վորոշեցեք պարագծերը :

59. Հատակի համար ցեմենտի աղյուսներ պատրաստող
գործարանն ընդունեց հետևյալ նորմալ ձևը (ստանդարտ) ուղ-
ղանկյունաձև աղյուսների համար : Աղյուսի BCFE կեսը նման
պետք է լինի ամբողջ ABCD աղյուսին : Գտեք այդպիսի աղյու-
սի կողմերի հարաբերությունը (գծ. 31) :

60. ABCD զուգահեռագծի մեջ $AB=a$ և $BC=b$: EF ուղիղը

հատում է ABEF զուգահեռագիծը, վորը նման է ABCD զուգա-
հեռագծին : Վորոշեցեք BE հատվածը :

§ 10. ՅԵՌԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՄԻ ՔԱՆԻ ՔԱՌԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ
ԳՄԱՅԻՆ ԵՂԵՄԵՆՏՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆԸ

Համեմատական
հասվածներ ուղղան-
կյուն յեռանկյան
մեջ

Ուղղանկյուն յեռանկյան մեջ նշանա-
կում են՝ a և b—եջերը, c—ներքնածիղքը,
a_c և b_c—a և b եջերի պրոեկցիաները
ներքնածիղքի վրա, h—ուղիղ անկյան գա-
ղաթից ներքնածիղքին իջեցրած բարձրությունը : Յենթադրվում
է, վոր բոլոր հատվածները չափվում են միևնույն միավորով :

1. Հաշվեցեք ներքնածիղքը, յեթե տված են յերկու եջերը՝
1) 12 սմ և 35 սմ, 2) 56 սմ և 33 սմ, 3) 4 մ և 9 դմ,
4) 60 սմ և 91 սմ, 5) 21 և $3\frac{1}{4}$, 6) $\frac{3}{2}$ և $\frac{7}{16}$,
7) 16,8 և 2,6, 8) 5 և 6 :

2. Հաշվեցեք յերկրորդ եջը, յեթե տված են ներքնածիղքն
ու առաջին եջը՝
1) 289 և 240¹), 2) 269 և 69, 3) 145 և 143,
4) 42,5 և 6,5, 5) 17 և $15\frac{2}{5}$, 6) 10 և 7 :

3. Ուղղանկյուն յեռանկյան տված յերկու ելնճենտներով
հաշվեցեք մնացած չորսը .
1) a=15, b=20. 2) a=24, b=7. 3) a=4, b=5.
4) a=100, c=125. 5) b=65, c=169. 6) a=600, c=625.
7) a=6, a_c=3,6. 8) b=7, b_c=1,96.

- 9) c=29, a_c= $15\frac{6}{29}$, 10) c=3, b_c=2.
11) a_c= $1\frac{1}{2}$, b_c= $2\frac{2}{3}$. 12) a_c=2, b_c=18.
13) a=136, h=120. 14) b=9, h= $8\frac{32}{41}$:

1) 2-րդ խնդրում և մի քանի ուրիշ դեպքերում ավելի
ձեռնտու յե քառակուսիների տարբերությունը փոխարինել զու-
մարի և տարբերության արտադրյալով :

4. Հատվածների տված գումարով և այդ հատվածների միջին համեմատականով կառուցեք հատվածները:

5. Հատվածների տված սարքերու-թյունով և այդ հատվածների միջին համեմատականով կառուցեք հատվածները:

6. Ապացուցեք, վոր ուղղանկյուն շեռանկյան մեջ $ab=ch$:

7. Եջերը հարաբերում են իրար այնպես, ինչպես 5 : 6, իսկ ներքնաձիգը հավասար է 122 սմ-ի: Գտեք ներքնաձիգի այն հատվածները, վոր առաջացնում են բարձրությունը:

8. Եջերը հարաբերում են այնպես, ինչպես 3 : 2, իսկ բարձրությունը ներքնաձիգը բաժանում է չերկու այնպիսի հատվածների, վորոնցից մեկը մյուսից 2 մետրով մեծ է: Վորոշեցեք ներքնաձիգը:

9. Եջերը հարաբերում են իրար այնպես, ինչպես 3 : 7, իսկ ներքնաձիգի վրա իջեցրած բարձրությունը հավասար է 42 սմ-ի: Վորոշեցեք ներքնաձիգի հատվածները:

10. Ապացուցեք, վոր հավասարասրուն սեղանին ներգծած շրջանի արամագիծը միջին համեմատական է սեղանի զուգահեռ կողմերին:

11. Ապացուցեք, վոր եջերի քառակուսիների հարաբերությունը հավասար է նրանց պրոեկցիաների հարաբերությանը (ներքնաձիգի վրա):

12. 1) Կառուցեք յերկու հատված, վորոնց քառակուսիները հարաբերեն այնպես, ինչպես $m : n$:

2) Կառուցեք յերկու հատված, վորոնք հարաբերեն այնպես, ինչպես տված յերկու հատվածների քառակուսիները:

Վյուրագործոսի քերտեր

13. Իմանալ, թե իրար հաջորդող վոր յերեք թվերով կարելի չե ներկայացնել ուղղանկյուն յեռանկյան կողմերը:

14. Յերկու գործարանային շենքերի միջև շինված է մի թեք ճոռ՝ նյութեր փոխադրելու համար: Շենքերի հեռավորությունն իրարից հավասար է 10 մ-ի, ճոռի մի ծայրը գտնվում է զեանից 8 մ բարձրության վրա, իսկ մյուսը՝ 4 մետր: Վորոշեցեք ճոռի յերկարությունը:

15. 1) Ուղիղ անկյան ներսը վերցված է մի կիտ, վորի հեռավորությունը կողմերից հավասար է a և b : Գտեք այդ կիտի հեռավորությունը գագաթից:

2) Ուղղանկյան կողմերը հավասար են 60 սմ-ի և 91 սմ ի նրա անկյունագիծը ինչի՞ յե հավասար:

16. Կլոր յերկաթից պետք է պատրաստել մի քառակուսի վորի կողմը պետք է լինի 32 մմ: Ինչքան է լինելու այդ յերկաթի փոքրագույն արամագիծը, վորպեսզի տվյալ նպատակի համար պետքական լինի:

17. 1) Քառակուսու կողմը հավասար է a -ի: Նրա անկյունագիծն ինչի՞ յե հավասար:

2) Վորոշեցեք քառակուսու կողմը, յիթե նա անկյունագիծից 2 սմ-ով փոքր է:


18. Գերանի արամագիծը հավասար է 12 սմ-ի: Այդ գերանից կարող ենք տաշել և պատրաստել մի քառակուսի չորսու (ծրս), վորի մի կողմը հավասար լինի 10 սմ-ի:

19. 1) Ուղղանկյան կողմերը հավասար են a և b : Վորոշեցեք արտագծած շրջանի շառավիղը:

2) Շրջանին ներգծած է ուղղանկյուն, վորի կողմերը հարաբերում են այնպես, ինչպես 8 : 15: Վորոշեցեք այդ կողմերը յիթե շրջանի շառավիղը հավասար է 34 սմ-ի:

20. 1) Ուղղանկյուն յեռանկյան եջերն հավասար են 8 դմ-ի և 18 սմ-ի: Վորոշեցեք արտագծած շրջանի շառավիղը:

2) Ուղղանկյուն յեռանկյան եջերն են 16 սմ և 12 սմ: Վորոշեցեք ներքնաձիգի վրա իջեցրած միջնագիծը:



Գծ. 32.

21. 1) Հավասարասրուն յեռանկյան սրունքը հավասար է 17 սմ-ի, իսկ հիմքը՝ 16 սմ-ի: Վորոշեցեք բարձրությունը:

2) Վորոշեցեք հավասարասրուն յեռանկյան կողմերը, յիթե բարձրությունը հավասար է 35 սմ-ի, իսկ հիմքը և ձրունքը հարաբերում են այնպես, ինչպես 48 : 25:

3 Հավասարասրուն յեռանկյան հիմքը հավասար է 4 սմ-ի, Գակ նրան առընթեր անկյունը՝ 45°-ի: Վորոշեցեք սրունքը:

22. Ծպեղաֆերմն (стропильная ферма) ունի AB և BC վտարերը, վորոնց յերկարություններն են 15-ական մետր (զծ. 32), Գակ AC հենածեղը՝ 15 մ: Վորոշեցեք ֆերմի BD բարձրությունը:

23. 1) Ուղիղ անկյան կիսորդը ներքնաձիգը բաժանում է Կերկու մասերի, վորոնք հավասար են $2\frac{1}{7}$ մ և $2\frac{6}{7}$ մ: Վորոշեցեք եջերը:


2) Ուղղանկյուն յեռանկյան եջերը հավասար են 15 սմ-ի և 20 սմ-ի: Ուղիղ անկյան զագաթից տարված են բարձրությունը և անկյան կիսորդը: Ներքնաձիգն ինչպիսի՞ հատվածների բաժանվեց:

24. 1) Վորոշեցեք հավասարակողմ յեռանկյան բարձրությունը, յերբ կողմը հավասար է a-ի:

2) Վորոշեցեք հավասարակողմ յեռանկյան կողմը, յերբ տարված է h բարձրությունը:

3) Հավասարակողմ յեռանկյան բարձրությունը կողմից Կիտքը է m-ով: Վորոշեցեք կողմը:

4) Ուղղանկյուն յեռանկյան անկյուններից մեկը հավասար է 30°-ի, իսկ մեծ եջը՝ 6 սմ-ի: Վորոշեցեք այս յեռանկյան ճյուղ Կերկու կողմերը:



Գծ. 33.

25. 1) Յեռանկյան կողմնային կողմերը հավասար են՝ a=25 սմ և b=30 սմ: Բարձրությունը՝ h_c=24 սմ: Վորոշեցեք c հիմքը:

2) Յեռանկյան հիմքի մեծ անկյունը հավասար է 45°-ի, իսկ բարձրությունը հիմքը բաժանում է յերկու մասերի, վորոնք հավասար են 20 սմ-ի և 21 սմ-ի: Վորոշեցեք կողմնային մեծ կողմը:

3) Վորոշեցեք կողմնային մեծ կողմը: Վորոշեցեք ուղղահայացի յերկարությունը, յեթե թեքերը հավասար են 41 սմ-ի և

50 սմ-ի, իսկ նրանց պրոեկցիաները տված ուղիղի վրա, հարաբերում են այնպես, ինչպես 3:10:

26. 1) Շեղանկյան անկյունագծերը հավասար են 24 սմ-ի և 70 սմ-ի: Վորոշեցեք կողմը:

2) Վորոշեցեք շեղանկյան անկյունագծերը, յեթե նրանք հարաբերում են իրար այնպես, ինչպես 3:4, իսկ պարագիծը հավասար է 1 մ-ի:

27. 1) Հավասարասրուն սեղանի հիմքերը հավասար են 10 սմ-ի և 24 սմ-ի, իսկ սրունքը 25 սմ-ի: Վորոշեցեք սեղանի բարձրությունը:

2) Հավասարասրուն սեղանի սրունքը հավասար է 41 սմ-ի, բարձրությունը՝ 4 սմ-ի, իսկ միջին գիծը՝ 45 սմ-ի: Վորոշեցեք հիմքերը:

28. Ուղիղ ճանապարհից 50 մետր հեռավորության վրա, նրան զուգահեռ դասավորված է հրաձիգների շղթան, վորի յերկու ծայրի հրաձիգների հեռավորությունը 120 մ է: Ճանապարհի վճիռ մասն է յենթակա գնդակոծման, յեթե գնդակի թռիչքի հեռակալությունը 2,8 կիլոմետր է:

29. 33 զծագրում տված է OCT 302 թագնագլուխ գամը՝ n անկյունը հավասար է 60°: Հաշվեցեք՝

1) D-ն, յեթե d=16,5 մմ և h=7,5 մմ;

2) d-ն, յեթե D=30 մմ և h=9,5 մմ;

3) h-ը, յեթե D=35 մմ և d=22 մմ:


Գրեցեք D-ի, d-ի և h-ի միջև յեղած կապի բանաձևը (OCT общесоюзный стандарт)¹:

30. 1) ABC յեռանկյան մեջ տարված է AD բարձրությունը՝ Ապացուցեք, վոր $AB^2 - AC^2 = BD^2 - CD^2$:

2) Յեթե—M կետը գտնվում է ABC յեռանկյան AD բարձրության վրա, ապա $AB^2 - AC^2 = BM^2 - CM^2$: Ապացուցեք այդ:

31. 1) Ապացուցեք, վոր ուղղանկյուն սեղանի անկյունագրածների քառակուսիների տարբերությունը հավասար է հիմքերի քառակուսիների տարբերությանը:


1) OCT—նշանակում է համամիութենական ստանդարտ:



Գծ. 34.

2) Ուղղանկյուն սեղանի փոքր անկյունադիծը հավասար է կողմնային թեք կողմին: Վորոշեցեք մեծ անկյունադիծը, յեթե կողմնային թեք կողմը հավասար է a -ի, իսկ փոքր հիմքը՝ b -ի:

32. Տերկաթյա թիթեղից պետք է զրոշմել կտոր տափոզակներ (шайба), վորոնց տրամագիծն է 28 մմ: Գտնել այն ուղիղների հեռավորությունը, վորոնց վրա պետք է գտնվեն տափոզակների կենտրոնները (դժ. 31):



Գժ. 35.

33. 1) Շրջանի շառավիղը հավասար է 89 դմ-ի, լարը՝ 16 մ-ի: Վորոշեցեք լարի հեռավորությունը կենտրոնից:

2) O -ն շրջանի կենտրոնն է, ACB -ն լար է. OCD -ն այդ լարին ուղղահայաց շառավիղն է: Վորոշեցեք լարի չերկարությունը, յեթե $OC = 9$ սմ և $CD = 32$ սմ:

3) Յերկու իրար հատող շրջանագծերի շառավիղները հավասար են 13 սմ-ի և 15 սմ-ի, իսկ նրանց ընդհանուր լարը 24 սմ-ի: Վորոշեցեք կենտրոնների հեռավորությունը:

4) AB և CD գուգահեռ լարերը դասավորված են շրջանագրի O կենտրոնի տարբեր կողմերում: Վորոշեցեք լարերի հեռավորությունը, յեթե $AB = 18$ սմ, $CD = 24$ սմ, իսկ շրջանագծի շառավիղը՝ $R = 15$ սմ:

5) AB և CD գուգահեռ լարերը դասավորված են շրջանագրի O կենտրոնի մի կողմում: Վորոշեցեք լարերի հեռավորությունը, յեթե $AB = 48$ սմ, $CD = 36$ սմ, իսկ շառավիղը՝ $R = 30$ սմ:

34. Մեծ հորվակի (шків) արամադիծը չափելու համար շտանգենկարկիւնը (штанденциркуль) դնում են այնպես, ինչպես ցուց է արված 35-րդ գծագրում: Կարկինի վոտների չերկարությունը հավասար է $S = 25$ մմ, նրանց ծայրերի հեռավորությունը՝ $l = 200$ մմ:

1) Վորոշեցեք D արամագծի չերկարությունը:

2) արտագծեցեք D -ի կախումը s -ից և l -ից արտահայտող բանաձևը:

35. Սեղանի մեջ լարը հավասար է a -ի, իսկ բարձրությունը՝ h -ի: Վորոշեցեք շրջանի շառավիղը:

36. Շրջանի շառավիղը հավասար է 25 սմ-ի: Յերկու գուգահեռ լարերը հավասար են 14 սմ-ի և 40 սմ-ի: Վորոշեցեք լարերի հեռավորությունն իրարից:

37. Տրամագծի մի ծայրի և նրան գուգահեռ լարի ծայրերի հեռավորություններն են 13 սմ և 8 սմ: Վորոշեցեք շրջանի շառավիղը:

38. 1) Շրջանագծի կենտրոնից 85 սմ հեռավորություննեցող կետից տարված է շոշափող: Վորոշեցեք շոշափողի չերկարությունը, յեթե շառավիղը հավասար է 36 սմ-ի:

2) Մի ընդհանուր կետից շրջանագծին տարված է յերկու շոշափող: Շրջանագծի շառավիղը հավասար է 11 սմ-ի, իսկ շոշափողների գումարը հավասար է 120 սմ-ի: Վորոշեցեք կենտրոնի հեռավորությունը շոշափողի յեկման կետից:

3) Միևնույն կետից շրջանագծին տարված է յերկու շոշափող: Վորոշեցեք շոշափման կետերի հեռավորությունն իրարից, յեթե շրջանագծի շառավիղը հավասար է 7 սմ-ի, իսկ տվյալ կետի և կենտրոնի հեռավորությունը՝ 25 սմ-ի:

39. Յերկու շրջաններ, վորոնց շառավիղներն են R և r , ունեն արտաքին շոշափում: Մի շրջանի կենտրոնից մյուս շրջանին տարված է շոշափող, իսկ շոշափման կետից տարված է շոշափող առաջին շրջանին: Վորոշեցեք վերջին շոշափողի չերկարությունը:

40. 1) Յերկու շրջան ունեն արտաքին շոշափում: Վորոշեցեք նրանց ընդհանուր արտաքին շոշափողի չերկարությունը (շոշափման կետերից), յեթե շառավիղները հավասար են 16 սմ-ի և 25 սմ-ի:

2) Յերկու շրջանների շառավիղները հավասար են 27 սմ-ի և 13 սմ-ի, իսկ նրանց կենտրոնների հեռավորությունը՝ 50 սմ-ի: Վորոշեցեք նրանց ընդհանուր շոշափողի չերկարությունը:

41. Մի ընդհանուր կետից շրջանագծին տարված շոշափողն ու հատող փոխադարձ ուղղահայաց են: Շոշափողը հավասար է

12 մ-ի, իսկ հատողի ներքին մասը՝ 10 մ-ի: Վորոշեցեք շրջանագծի շառավիղը:

42. AB-ն և CD-ն զուգահեռ ուղիղներ են, AC-ն հատող է, E-ն և F-ը AB և CD զուգահեռ ուղիղների հատման կետերն են C և A անկյունների կիսորդների հետ: Վորոշեցեք AC-ն, յեթե $AF=96$ սմ և $CE=110$ սմ:

43. ABC բուլժանկյուն հավասարասրուն յեռանկյան հիմքը՝ $AC=32$ մ, իսկ սրունքը՝ 20 մ-ի: B գագաթից սրունքին տարված է ուղղահայաց, մինչև հիմքին հատելը: Ինչպիսի՞ մասերի յե բաժանվում հիմքը:

44. AC եջը հավասար է 15 սմ-ի, CB եջը՝ 8 սմ-ի: C գագաթից, վորպես կենտրոնից, CB շառավիղով գծված է աղեղ, վորը ներքնածիգից հատում է BD մասը: Վորոշեցեք BD հատվածը:

45. Ուղղանկյուն յեռանկյան ուղիղ անկյան գագաթից, վորպես կենտրոնից, տարված աղեղը ներքնածիգը բաժանում է 98 սմ և 52Պ սմ յերկու հատվածների (սկսած վորքը եջից): Վորոշեցեք եջերը, յեթե աղեղի շառավիղը հավասար է վորքը եջին:

46. AB-ն տրամագիծ է, AC-ն շոշափող: D-ն AC ուղիղի և շրջանագծի հատման կետն է: Վորոշեցեք շառավիղը, յեթե տված է $AD=32$ սմ, $DC=18$ սմ:

47. AB-ն տրամագիծ է, BC-ն և CDA-ն շոշափող ու հատող: Վորոշեցեք $CD:DA$ հարաբերությունը, յեթե BC-ն հավասար է շառավիղին:

Մեկյան կիսորդն ուղղանկյուն յեռանկյան մեջ

48. Ուղղանկյուն յեռանկյան մեջ ուղիղ անկյան կիսորդը ներքնածիգը բաժանում է յերկու մասերի, վորոնք հարաբերում են այնպես, ինչպես 7 : 9: Նրա բարձրում են այնպես, յեթե ներքնածիգը (հաշվեբուլժյունը ինչպիսի՞ մասերի յե բաժանում ներքնածիգը (հաշվելով մասերը նույն հաջորդականությամբ):

49. Վորոշեցեք եջերը, յեթե ուղիղ անկյան կիսորդը ներքնածիգը բաժանում է 15 սմ և 20 սմ հատվածների:

50. Հավասարասրուն ուղղանկյուն յեռանկյան եջը հավասար է a-ի: Նրա դիմացի անկյան կիսորդը ինչպիսի՞ մասերի յե բաժանում եջը:

51. Ուղղանկյուն յեռանկյան սուր անկյան կիսորդը բաժանում է եջը m և n հատվածների ($m > n$): Վորոշեցեք մյուս եջն ու ներքնածիգը:

52. 15 դմ և 2 մ եջեր ունեցող ուղղանկյուն յեռանկյան գագաթից տարված են բարձրությունն ու այդ բարձրությունով և եջերով կազմված անկյունների կիսորդները: Վորոշեցեք ներքնածիգի այն հատվածը, վոր գտնվում է կիսորդների միջև:

53. ABC ուղղանկյուն յեռանկյան BC եջը հավասար է 6 սմ-ի և ներքնածիգը՝ $AB=10$ սմ-ի: ABC անկյան կիսորդը հատում է AC կողմը D կետում, իսկ նրա կից անկյան կիսորդը հատում է AC կողմի շարունակությունը E կետում: Վորոշեցեք DE հատվածի յերկարությունը:

54. ABC հավասարասրուն յեռանկյան մեջ AB սրունքը հավասար է 10 մ-ի և AC հիմքը 12 մ-ի: A և C անկյունների կիսորդները հատվում են D կետում: Պահանջվում է վորոշել BD հատվածը:

55. 1) Հավասարասրուն յեռանկյան հիմքը հավասար է 30 սմ-ի, իսկ սրունքը՝ 39 սմ-ի: Վորոշեցեք ներգծված շրջանի շառավիղը:

2) Հավասարասրուն յեռանկյան բարձրությունը ներգծած շրջանի կենտրոնով բաժանվում է յերկու մասերի, վորոնք հարաբերում են այնպես, ինչպես 17 : 15: Գտեք շրջանի շառավիղը, յեթե յեռանկյան հիմքը հավասար է 60 սմ-ի:

56. B կետից տվյալ ուղիղին տարված են BC ուղղահայացն ու BA թեքը: AC-ի վրա վերցված է D կետը և BD ուղիղը շարունակված է մինչև AC-ին ուղղահայաց AE ուղիղի հետ հատելը E կետում: Վորոշեցեք AE-ն, յեթե $E=53$ դմ, $AC=8$ դմ և $DC=20$ դմ:

57. 1) Հավասարասրուն յեռանկյան հիմքը հավասար է 30 դմ-ի, իսկ բարձրությունը 20 դմ-ի: Վորոշեցեք սրունքի բարձրությունը:

2) Հավասարասրուն յեռանկյան հիմքին իջեցրած բարձրությունը հավասար է 3 դմ-ի, իսկ սրունքին իջեցրած բարձրությունը 4 դմ-ի: Վորոշեցեք այդ յեռանկյան կողմերը:

3) Շեղանկյան անկյունագծերը հավասար են 14 դմ-ի և 48 դմ-ի: Վորոշեցեք նրա բարձրությունը:

Ուղղանկյուն յեռանկյան, շեղանկյան յեկ սեղանի բարձրություններն ու կողմերը

58. 1) Ներքնածիզը՝ $AB=34$ սմ, եջը՝ $BC=16$ սմ: Ներքնածիզին նրա միջնակետից կանգնեցրած և ուղղահայաց միակողմանի լինող AC եջի հետ: Վորոշեցեք այդ ուղղահայացի չեղարու-թյունը:

2) Շրջանի շառավիղը հավասար է r -ի: Վորոշեցեք տրամագծի մի ծայրից տարած լարի չեղարու-թյունը, յեթե գերջինս անցնում է իրեն ուղղահայաց շառավիղի միջնակետով:

59. ABC ուղղանկյուն յեռանկյան AC եջը հավասար է 16 դմ-ի, իսկ BC եջը՝ 12 դմ-ի: B կենտրոնից BC շառավիղով դրված է շրջանագիծ, և ներքնածիզին գուրահեռ տարված է շրջանագծին մի շոշափող (շոշափողն ու յեռանկյունը գտնվում են ներքնածիզի տարրեր կողմերում): BC եջը շարունակված է մինչև հատվելը ափյալ շոշափողի հետ: Վորոշեցեք BC եջի շարունակության չեղարու-թյունը:

60. Միենույն կետից շրջանին տարված է չեղու շոշափող: Շոշափողի չեղարու-թյունը հավասար է 156 դմ-ի, իսկ շոշափման կետերի հեռավորությունը՝ 120 դմ-ի: Վորոշեցեք շրջանի շառավիղը:

61. Ուղղանկյուն սեղանի հիւքերը հավասար են 17 դմ-ի և 25 դմ-ի, իսկ կողմնային մեծ կողմը հավասար է 10 դմ-ի: Այդ կողմի միջնակետից տարված է ուղղահայաց մինչև հատվելը մյուս կողմնային կողի շարունակության հետ: Վորոշեցեք այդ ուղղահայացի չեղարու-թյունը:

Խառը խնդիրներ ուղղանկյուն յեռանկյան վերաբերյալ

62. Ուղղանկյուն յեռանկյան եջերն են AC և BC , բարձրությունը՝ CD : $DE \parallel BC$: Վորոշեցեք $AE : EC$ հարաբերությունը, յեթե $AC : CB = 4 : 5$:

63. Եջերն են AC և CB , բարձրությունը՝ CD : $DE \perp AC$ և $DF \perp CB$: Վորոշեցեք DE և DF հատվածները, յեթե $AC = 75$ դմ և $BC = 100$ դմ:

64. Յերկու հավասարասրուն յեռանկյուն ունեն հավասար սրունքներ, իսկ գագաթների անկյունների գումարը հավասար է 180° -ի: Վորոշեցեք հիւքերը, յեթե նրանք հարաբերում են այնպես, ինչպես $9 : 40$, իսկ սրունքի չեղարու-թյունը հավասար է 41 դմ:

65. 1) Յեռանկյան հիւքը հավասար է 60 մ-ի, բարձրու-

թյունը՝ 12 մ-ի, իսկ հիւքին տարած միջնագիծը՝ 13 մ-ի: Վորոշեցեք կողմնային կողմերը:

2) Գտեք ուղղանկյուն յեռանկյան եջերի հարաբերությունը, յեթե ուղիղ անկյան գագաթից իջեցրած բարձրությունը և միջնագիծը հարաբերում են այնպես, ինչպես $40 : 41$:

66. Վորոշեցեք հավասարասրուն յեռանկյան արտագծված շրջանի շառավիղը, յեթե հիւքն ու սրունքը համապատասխանաբար հավասար են՝ 1) 6 դմ և 5 դմ, 2) 24 մ և 13 մ:

67. Ուղղանկյուն յեռանկյան եջերը հավասար են 13 դմ-ի և 84 դմ-ի: Վորոշեցեք ներգծված շրջանի շառավիղը:

68. Մեկը մյուսից գուրս գտնվող չեղու շրջանագծերի կենտրոնների հեռավորությունը հավասար է 65 դմ-ի: Նրանց ընդհանուր արտաքին շոշափողի չեղարու-թյունը (շոշափման կետերի միջև), հավասար է 63 դմ-ի, իսկ ներքին շոշափողի չեղարու-թյունը՝ 25 դմ-ի: Վորոշեցեք շրջանագծերի շառավիղները:

69. Յերկու գուրահեռ լարերի չեղարու-թյունները հավասար են 40 դմ-ի և 48 դմ-ի, իսկ նրանց հեռավորությունը՝ 22 դմ-ի: Վորոշեցեք շրջանի շառավիղը:

70. Շրջանին արտագծված հավասարասրուն սեղանի հիւքերը հավասար են 36 սմ-ի և 1 մ-ի: Վորոշեցեք շրջանի շառավիղը:

71. 12 սմ շառավիղ ունեցող շրջանին արտագծված է հավասարասրուն սեղան, վորի կողմնային կողմը հավասար է 25 սմ-ի: Վորոշեցեք այդ սեղանի հիւքերը:

72. r շառավիղ ունեցող շրջանին արտագծված է հավասարասրուն սեղան, վորի գուրահեռ կողմերը հարաբերում են այնպես, ինչպես $m : n$: Վորոշեցեք այս սեղանի կողմերը:

73. AB -ն և AC -ն O կենտրոն ունեցող շրջանի շոշափողներն են. AO ուղիղը շրջանագծին հատում է M կետում: DME -ն M կետից տարված շոշափողի աչն հատվածն է, վորը գտնվում է AB և AC շոշափողների միջև: Վորոշեցեք DE հատվածի չեղարու-թյունը, յեթե շրջանի շառավիղը հավասար է 15 դմ-ի, իսկ $AO = 39$ դմ:

74. Ուղղանկյուն յեռանկյան եջերը հավասար են 15 դմ-ի և 20 դմ-ի: Վորոշեցեք ներգծված շրջանի կենտրոնի և ներքնածիզին իջեցրած բարձրություն հեռավորությունը:

75. ABC ուղղանկյուն յեռանկյան ուղիղ անկյան C գա-

գաթից ներքնաձիգին իջեցված է ուղղահայաց և նրա վրա վորպես տրամագծի՝ տարված է շրջանագիծ, վորը CA և CB եջերից կտրում է m և n ներքին հատվածները: Վորոշեցեք եջերը ($m=12$, $n=18$):

76. Ուղղանկյուն յեռանկյան մեջ եջերը հավասար են 75 դմ-ի և 100 դմ-ի: Ուղիղ անկյան գազաթից ներքնաձիգին իջեցրած բարձրությամբ ներքնաձիգի վրա առաջացած հատվածների վրա կառուցված է յերկու կիսաշրջան, վորոնք յեռանկյան հետ միասին ներքնաձիգի միևնույն կողմումն են գտնվում: Վորոշեցեք եջերի կիսաշրջանների միջև գտնվող հատվածները:


77. Յեթե յերկու շրջան ունեն արտաքին շոշափում, ապա նրանց արտաքին ընդհանուր շոշափողը միջին համեմատական է նրանց տրամագծերին: Ապացուցեք այդ:

78. ABCD սեղանի BD անկյունագիծը ուղղահայաց է AD և BC հիմքերին: A և C սուր անկյունների գումարը հավասար է 90° -ի: AD հիմքը հավասար է a-ի, AC-ն b-ի: Վորոշեցեք AB և CD կողմերը:

79. 36-րդ գծագիրը ներկայացնում է մի շենքի հատակագիծը, վոր ուղում են միջնապատել AC գծի ուղղությամբ: Հանմիջնապատել AC-ի փոխարեն չափեցին $AB=50$ մ, $BC=35$ մ և $\angle ABC=60^\circ$: Այս տվյալներով հաշվեցեք AC-ի յերկարությունը:


Շենքանկյուն յեռանկյուն

դիպելով դժվարությունների, AC-ի փոխարեն չափեցին $AB=50$ մ, $BC=35$ մ և $\angle ABC=60^\circ$: Այս տվյալներով հաշվեցեք AC-ի յերկարությունը:



Գծ. 36.

80. 37-րդ գծագիրը ներկայացնում է մի վերամբարձ կռունկ, վորի նեցուկը՝ $a=10$ մ և բազուկը՝ $b=13$ մ, a-ի և b-ի միջև ընկած անկյունը հավասար է 120° : Վորոշեցեք ձգողի c յերկարությունը:



Գծ. 37.

81. Վորոշեցեք յեռանկյան կողմնային յերկրորդ կողմը, յեթե կողմնային առաջին կողմը, հիմքը և յերկրորդ կողմի պրոեկցիան հիմքի վրա համապատասխանորեն արտահայտվում են հետևյալ թվերով՝ 1) 6; 5; 3,8; 2) 2; 3; 2; 3) 12; 8; 14; 4) 2; 2; 3:

82. Վորոշեցեք յեռանկյան տեսքը (անկյունների նկատմամբ), յեթե արված են յերեք կողմերը և կամ նրանց հարաբերությունը՝ 1) 2; 3; 4; 2) 3:4:5, 3) 4; 5; 6; 4) 10:15:18, 5) 68; 119; 170:

83. ABC յեռանկյան հիմքը հավասար է b-ի, մյուս կողմերը՝ a-ի և c-ի. այս կողմերի պրոեկցիաներն են հիմքի վրա՝ p և q, իսկ բարձրությունը՝ h: Վորոշեցեք p, q և h հատվածները, յեթե արված են յերեք կողմերը՝

- 1) $a=13$, $b=14$, $c=15$: 2) $a=37$, $b=30$, $c=13$:
- 3) $a=25$, $b=12$, $c=17$: 4) $a=2$, $b=4$, $c=3$:

84. Վորոշեցեք յեռանկյան յերրորդ կողմը, յեթե մյուս յերկու կողմերը կազմում են 60° անկյուն և համապատասխանորեն հավասար են 1) 5 սմ և 8 սմ, 2) 8 սմ և 15 սմ, 3) 63 սմ և 80 սմ:

85. Վորոշեցեք յեռանկյան յերրորդ կողմը, յեթե մյուս կողմերը կազմում են 120° անկյուն և համապատասխանորեն հավասար են 1) 3 սմ և 5 սմ, 2) 7 սմ և 8 սմ, 3) 11 սմ և 24 սմ:

86. Վորոշեցեք յեռանկյան յերրորդ կողմը, յեթե մյուս յերկու կողմերը կազմում են 45° անկյուն և համապատասխանորեն հավասար են՝ 1) 2 և 3, 2) $\sqrt{8}$ և 5, 3) $\sqrt{18}$ և 7:

87. Դիտենալով, վոր յեռանկյան միջին կողմը մեծությամբ մյուս կողմերից տարբերվում է 1-ով, և նրանցից մեկ կողմի պրոեկցիան միջին յերկարություն ունեցող կողմի վրա հավասար է 9 միավորի, վորոշեցեք յեռանկյան կողմերը:

88. Յեռանկյան մի կողմը հավասար է 21 սմ-ի, իսկ մյուս յերկու կողմերը կազմում են 60° անկյուն և հարաբերում են այնպես, ինչպես 3:8: Վորոշեցեք այդ կողմերը:

89. Յեռանկյան մի կողմը հավասար է 16 սմ-ի և հիմքի հետ կազմում է 60° անկյուն: Յերրորդ կողմը հավասար է 14 սմ-ի: Վորոշեցեք հիմքը:

90. Յեռանկյան հիմքը հավասար է 13 սմ-ի, գագաթի ան-
կյունը 60° , իսկ մյուս կողմերի գումարը 22 սմ-ի: Վորոշեցեք
կողմնային կողմերն ու բարձրությունը:
91. Յեռանկյան հիմքը հավասար է 12 սմ-ի, նրա վրա
գտնվող անկյուններից մեկը հավասար է 120° , իսկ այս անկյան
գիմացի կողմը հավասար է 28 սմ-ի: Վորոշեցեք յերրորդ կողմը:
92. ABC հավասարասրուն ուղղանկյուն յեռանկյան AB
ձերքնաձիգը շարունակել են BD յերկարություն, վոր հավասար
է BC-ին, և D կետը միացրել են C-ի հետ: Վորոշեցեք ABC յե-
ռանկյան կողմերը, յեթե BC եղը հավասար է a-ի:
93. Վորոշեցեք աղեղի կեսի լարը, յեթե ամբողջ աղեղի լարը
հավասար է a-ի, իսկ շառավիղը՝ r-ի ($r=25$, $a=48$):
94. 1) ABC ուղղանկյուն յեռանկյան AC եղը հավասար է
15 սմ-ի, իսկ BC եղը՝ 20 սմ-ի: AB ներքնաձիգից վերցված է
AD հատվածը, վորը հավասար է 4 սմ, և D կետը միացված է
C-ի հետ: Վորոշեցեք CD-ի յերկարությունը:
- 2) ABC յեռանկյան C անկյունը ուղիղ է: AB ներքնաձիգի
շարունակությունից վերցված է BD հատվածը, վոր հավասար է
BC եղին, և D կետը միացված է C-ի հետ: Վորոշեցեք CD-ի
յերկարությունը, յեթե $BC=7$ սմ և $AC=24$ սմ:
95. ABC յեռանկյան մեջ տարված են BD և CE բարձրու-
թյունները, և D կետը միացված է E կետի հետ: Գտեք ADE և
ABC մակերեսների հարաբերությունը, 1) յեթե $\angle A=45^\circ$, 2) յեթե
 $\angle A=30^\circ$:
96. ABC յեռանկյան, AB կողմի վրա տված է D կետը:
Վորոշեցեք CD-ի յերկարությունը, յեթե հայտնի յե, վոր $a=37$,
 $b=15$, $c=44$ և $AD=14$:
97. Բութանկյուն յեռանկյան մեծ կողմը հավասար է
16 սմ-ի, իսկ նրա ծայրերից տարած բարձրությունների հեռա-
քորությունը բութանկյան գագաթից՝ հավասար են 2 սմ-ի և
3 սմ-ի: Վորոշեցեք յերկու փոքր կողմերը:
98. Հավասարասրուն յեռանկյան կողմերը հավասար են
 $AB=BC=50$ սմ և $AC=60$ սմ: Տարված են AE ու CD բարձ-
րությունները և D կետը միացված է E-ի հետ: Վորոշեցեք DBE
յեռանկյան կողմերը:

99. ABC յեռանկյան AC կողմի C ծայրից տարված է նրան
ուղղահայաց, մինչև հատվելը՝ AB կողմի շարունակության հետ
D կետում: Վորոշեցեք BD և CD հատվածները, յեթե $AB=45$,
 $BC=39$ և $AC=42$:
100. Տված են ABC յեռանկյան կողմերը՝ $AB=15$, $AC=14$
և $BC=13$: B անկյան կիսորդը շարունակվելով հատվում է AC
կողմի C կետից տարված ուղղահայացի հետ E կետում: Վորո-
շեցեք CE-ի յերկարությունը:
101. Յերկու հավասար փոքր շրջաններ շրջափում են տվալ
շրջանը, մեկը ներսից, մյուսը դրսից: Շոշափման կետերի միջև
գտնվող աղեղը հավասար է 60° -ի: Մեծ շրջանի շառավիղը հա-
վասար է R-ի, իսկ փոքր շրջաններինը՝ r-ի: Վորոշեցեք փոքր
շրջանների կենտրոնների հեռավորությունը:
102. 1) Չուզանեռագծի կողմերը հա-
վասար են 23 սմ-ի և 11 սմ-ի, իսկ ան-
կյունագծերը հարաբերում են այնպես, ինչ-
պես 2:3: Վորոշեցեք անկյունագծերը:
- 2) Չուզանեռագծի անկյունագծերը հավասար են 17 սմ-ի և
19 սմ-ի, իսկ կողմերը հարաբերում են այնպես, ինչպես 2:3:
Վորոշեցեք կողմերը:
103. 1) Չուզանեռագծի անկյունագծերը հավասար են
12 սմ-ի և 14 սմ-ի, իսկ կողմերի տարբերությունը՝ 4 սմ-ի:
Վորոշեցեք Չուզանեռագծի կողմերը:
- 2) Վորոշեցեք Չուզանեռագծի կողմերն ու անկյունագծերը,
յեթե մեծ կողմը հավասար է փոքր անկյունագծին, կողմերի
տարբերությունը հավասար է 3 սմ-ի, իսկ անկյունագծերի տար-
բերությունը՝ 2 սմ-ի:
104. 1) Յեռանկյան կողմերն են՝ 16, 18 և 26: Հաշվեցեք
մեծ կողմին տարած միջնագիծը:
- 2) Յեռանկյան յերկու կողմերն են՝ 7 և 11, իսկ յերրորդ
կողմին տարած միջնագիծը հավասար է 6-ի: Վորոշեցեք յեր-
րորդ կողմը:
- 3) Յեռանկյան կողմերն են a, b, c: Վորոշեցեք միջնագը-
ծերը:
105. Վորոշեցեք Չուզանեռագծի բարձրությունը, յեթե հիմ-
քը հավասար է 51 սմ-ի, իսկ անկյունագծերը 40 սմ-ի և 74 սմ-ի:

106. Վորոշեցեք հավասարասրուն սեղանի անկյունագծերի յերկարությունը, 1) յեթե հիմքերը հավասար են 4 մ և 6 մ, իսկ սրունքը՝ 5 մ-ի, 2) յեթե մի կողմը հավասար է 5 սմ-ի, իսկ մյուս չերեք կողմերից յուրաքանչյուրը 4 սմ-ի:

107. Վորոշեցեք սեղանի բարձրությունն ու անկյունագծերը, յեթե a և c հիմքերը, b և d կողմնային կողմերն արտահայտվում են հետևյալ թվերով.

1) $a=25, b=13, c=11, d=15;$

2) $a=28, b=25, c=16, d=17;$

3) $a=6, b=3, c=1, d=4:$

108. Յեռանկյանը ներգծված է մի զուգահեռագիծ, այնպես վոր նրա կողմերից մեկն ընկած է յեռանկյան հիմքի վրա, իսկ անկյունագծերը համապատասխանորեն զուգահեռ են յեռակյան մյուս կողմերին: Վորոշեցեք զուգահեռագծի կողմերը, յեթե յեռանկյան հիմքը հավասար է 45 սմ-ի, իսկ մյուս կողմերը 39 սմ-ի և 48 սմ-ի:

109. Ապացուցեք, վոր հավասարասրուն սեղանի անկյունագծի քառակուսին հավասար է սրունքի քառակուսու և հիմքերի արտադրյալի գումարին:

110. Ապացուցեք, վոր ամեն մի սեղանի անկյունագծերի քառակուսիների գումարը հավասար է կողմնային կողմերի քառակուսիների գումարին գումարած հիմքերի կրկնապատիկ արտադրյալը:

111. Ապացուցեք, վոր ամեն մի քառանկյան անկյունագծերի քառակուսիների գումարը 2 անգամ մեծ է հանդիպակաց կողմերի միջնակետերը միացնող հատվածների քառակուսիների գումարից:

112. Վորոշեցեք այն շեղանկյան սուր անկյունը, վորի մեջ կողմը անկյունագծերի միջին համեմատականն է:

§ 11. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐ ՇՐՋԱՆԻ ՄԵՋ

1. Կամուրջի ֆերմը սահմանափակված է շրջանագծի աղեղով (գծ. 38). ֆերմի բարձրությունը՝ $MK=h=3$ մ, կամրջի հենամեջ AMB աղեղի շառավիղը՝ $R=8,5$ մ: Հաշվեցեք կամրջի AB հենամեջի յերկարությունը:


2. Կիսազլանաձև կամարակապ նկուղում պետք է կանգնեց-

նել յերկու հենարան, վորոնք նկուղի պատերից պետք է հավասար հեռավորություն ունենան: Վորոշեցեք հենարանի բարձրությունը, յեթե նկուղի լայնությունը ներքևից հավասար է 4 մ-ի, իսկ հենարանների հեռավորությունն իրարից՝ 2 մ-ի:

3. 1) Շրջանագծի վորեւ կետից տրամագծին իջեցրած է ուղղահայաց: Վորոշեցեք նրա յերկարությունը, յեթե տրամագրծի հատվածները հավասար են՝ 1) 12 սմ և 3 սմ, 2) 16 սմ և 9 սմ, 3) 2 մ և 5 դմ:

2) Տրամագծի վորեւ կետից տարված է ուղղահայաց, մինչև շրջանագծի հետ հատվելը: Վորոշեցեք այդ ուղղահայացի յերկարությունը, յեթե տրամագիծը հավասար է 40 սմ-ի, իսկ ուղղահայացի հեռավորությունը տրամագծի մի ծայրից հավասար է 8 սմ-ի:

4. Տրամագիծը բաժանված է յերկու հատվածների՝ $AC=8$ դմ և $CB=5$ մ: C կետից տարված է CD ուղղահայացը: Ցույց տվեք D կետի դիրքը շրջանի նկատմամբ, յերբ CD-ն հավասար է՝ 1) 15 դմ-ի, 2) 2 մ-ի, 3) 23 դմ-ի:



Գծ. 38.

5. ABC-ն կիսաշրջանագիծ է, իսկ CD-ն ուղղահայաց է AB տրամագծին: Պահանջվում է՝

- 1) վորոշել DB-ն, յեթե $AD=25$ և $CD=10$.
- 2) վորոշել AB-ն, յեթե $AD:DB=4:9$ և $CD=30$.
- 3) վորոշել AD-ն, յեթե $CD=3AD$, իսկ շառավիղը հավասար և r-ի.
- 4) վորոշել AD-ն, յեթե $AB=50$ և $CD=15$:

6. 1) Շրջանագծի վորևե կետից շառավիղին իջնցրած ուղղահայացը բաժանում է նրան յերկու այնպ սի մասերի, վորոնք հարաբերում են այնպես, ինչպես 8:9 (սկսած կենտրոնից): Վորոշեցեք ուղղահայացի յերկարութունը, յեթե շառավիղը հավասար է 34 սմ-ի:

2) BDC լարն ուղղահայաց է ODA շառավիղին: Վորոշեցեք BC-ն, յեթե $OA=25$ սմ և $AD=10$ սմ:

3) Յերկու համակենտրոն շրջանագծերով ստացված ողակի լայնութունը հավասար է 8 դմ-ի: Սև շրջանագծի այն լարը, վորը շոշափում է փոքր շրջանագիծը, հավասար է 4 մ-ի: Վորոշեցեք շրջանագծերի շառավիղն ընդ:

7. Հատվածները բազդատելու միջոցով ապացուցեք, վոր յերկու (անհախասար) թվերի միջին թվալ անսականը մեծ է նրանց միջին յերկրաչափականից:

8. Կառուցեք 3 սմ և 5 սմ յերկարութուն ունեցող հատվածների միջին համեմատական հատվածը:

9. Կառուցեք հետևյալ թվերն արտահայտող հատվածները՝ $\sqrt{19}$; $\sqrt{10}$; $\sqrt{6}$; $\sqrt{3}$:

10. ADB-ն արամագիծ է, AC-ն լար է. CD-ն ուղղահայաց է արամագծին: Վորոշեցեք AC լարը, 1) յեթե $AB=2$ մ և $AD=0,5$ մ, 2) յեթե $AD=4$ սմ և $DB=5$ սմ, 3) յեթե $AB=20$ մ և $DB=15$ մ:

11. AB-ն արամագիծ է, AC-ն լար է. AD-ն լարի պրոեկցիան է AB արամագծի վրա: Պահանջվում է՝

- 1) վորոշել AD-ն, յեթե $AB=18$ սմ և $AC=12$ սմ.
- 2) վորոշել շառավիղը, յեթե $AC=12$ մ և $AD=4$ մ.
- 3) վորոշել DB-ն, յեթե $AC=24$ սմ և $DB=\frac{7}{9} AD$:

12. AB-ն արամագիծ է, AC-ն լար, AD-ն լարի պրոեկցիան է AB արամագծի վրա:

- 1) Վորոշել AC-ն, յեթե $AB=35$ սմ և $AC=5AD$.

2) վորոշել AC-ն, յեթե շառավիղը հավասար է r-ի և $AC=BD$:

13. Յերկու լար հատվում են շրջանի ներսում: Մի լարի հատվածները հավասար են 24 սմ-ի և 15 սմ-ի իսկ մյուս լարի հատվածներից մեկը հավասար է 28 սմ-ի: Վորոշեցեք յե կրողը լարի մյուս հատվածը:

14. Կամրջալին ֆերմը սահմանափակված է շրջանագծի աղեյով (գծ. 38): Կամուրջի յերկարութունն է՝ $AB=6$ մ, նրա բարձրութունը՝ $h=1,2$ մ: Վորոշեցեք աղեյի շառավիղը ($OM=R$):

15. AB և CD յերկու հատվածները հատվում են M կետում, այնպես, վոր $AM=7$ սմ, $MB=21$ սմ, $MC=3$ սմ և $MD=16$ սմ: A, B, C և D կետերը գտնվում են արդյոք միևնույն շրջանագծի վրա:

16. Ճոճանակի յերկարութունը՝ $MA=1=1$ մ (գծ. 39). նրա վերելքի բարձրութունը՝ $AC=h=10$ սմ (յերթ թեքվում է α անկյունով): Գտեք B կետի BC հեռավորութունն MA-ից, այսինքն $BC=x$:


17. Յերկաթգիծը, վորի լայնութունն է $b=1,524$ մ, AB սեղից ուղին փոխելու համար (գծ. 40) կտրացրին, վորից պարզվեց, վոր $BC=a=42,4$ մ: Վորոշեցեք կտրութան շառավիղը $OA=R$:

18. AMB լարը պտտված է M կետի շուրջն այնպես, վոր MA հատվածը $2\frac{1}{2}$ անգամ մեծացել է: MB հատվածն ինչպես փոխվեց:

19. 1) Յերկու իրար հասող լարերից առաջինը բաժանված է 48 սմ և 3 սմ մասերի, իսկ յերկրորդը կիսվում է: Վորոշեցեք յերկրորդ լարի յերկարութունը:


2) Յերկու իրար հասող լարերից առաջինը բաժանված է 12 մ և 13 մ մասերի, իսկ յերկրորդը՝ 3:8 հարաբերութամբ: Վորոշեցեք յերկրորդ լարի յերկարութունը:

20. Իրար հասող յերկու լարերից առաջինը հավասար է



Գծ. 39.

32 սմ-ի, իսկ յերկրորդ լարի հատվածները 12 սմ-ի և 16 սմ-ի Վորոշեցեք առաջին լարի հատվածները:



ՊՃ. 40.

21. ABC հատողը պտտված է A արտաքին կետի շուրջն այնպես, վոր նրա AB արտաքին հատվածը փոքրացել է յերեք անգամ: Ինչպիսի փոփոխության յենթարկվեց հատողի յերկարությունը:

22. Դիցուք ADB և AEC ուղիղները հատում են շրջանագիծը, առաջինը D և B կետերում, իսկ յերկրորդը՝ E և C կետերում: Պահանջվում է՝

- 1) վորոշել AE-ն, յեթե AD=5 սմ, DB=15 սմ և AC=25 սմ.
- 2) վորոշել BD-ն, յեթե AB=24 սմ AC=16 սմ և EC=10 սմ.
- 3) վորոշել AB-ն և AC-ն, յեթե AB+CA=50 սմ, իսկ AD:AE=3:7:

23. Շրջանագծի շառավիղը հավասար է 7 սմ-ի, կենտրոնից 9 սմ հեռավորություն ունեցող կետից տարած հատողը

շրջանագծով բաժանվում է յերկու հավասար մասերի: Վորոշեցեք հատողի յերկարությունը:

24. MAB-ն և MCD-ն մի շրջանագծի հատողներ են: Պահանջվում է՝

- 1) վորոշել CD-ն, յեթե MB= 1 սմ, MD=15 սմ և CD=MA.
- 2) վորոշել MD-ն, յեթե MA=18 սմ, AB=12 սմ և MC:CD=5:7.
- 3) վորոշել AB-ն, յեթե AB=MC, MA=20 և CD=11:

25. Յերկու լարեր շարունակված են մինչև փոխհատվելը: Վորոշեցեք ստացված շարունակությունների յերկարությունները, յեթե լարերը հավասար են՝ a և b, իսկ շարունակությունները հարաբերում են այնպես, ինչպես m:n:

26. Վորևե կետից շրջանագծին տարված են հատող և շո-

շափող: Վորոշեցեք շոշափողի յերկարությունը, յեթե հատողի արտաքին և ներքին հատվածները համապատասխանորեն արտահայտվում են հետևյալ թվերով՝ 1) 4 և 5; 2) 2,25 և 1,75; 3) 1 և 2:


27. Շոշափողը հավասար է 20 սմ-ի, իսկ նույն կետից տարված ամենամեծ հատողը հավասար է 50 սմ-ի: Վորոշեցեք շրջանի շառավիղը:

28. Հատողն իր արտաքին մասից մեծ է $2\frac{1}{4}$ անգամ: Հատողը նույն կետից տարված շոշափողից քանի անգամ է մեծ:


29. Յերկու իրար հատող շրջանագծերի ընդհանուր լարը շարունակված է և այդ շարունակության վրա գտնվող վորևե կետից տարված են այդ շրջանագծերին շոշափողներ: Ապացուցեք, վոր շոշափողները հավասար են:

30. A անկյան մի կողմի վրա վերցված են իրար հաջորդող յերկու հատված՝ AB=6 սմ և BC=8 սմ: Մյուս կողմի վրա վերցված է AD=10 սմ հատվածը: B, C և D կետերից տարված է շրջանագիծ: Իմացեք՝ AD ուղիղը շոշափում է արդյոք շրջանագիծը, յեթե, վոչ ապա D-ն վոր հատման կետն է — առաջին (սկսած A), թե՛ յերկրորդ:

31. Դիցուք AB-ն շոշափում է շրջանագիծը, իսկ ACD-ն հատող է: Պահանջվում է՝



ՊՃ. 41.



ՊՃ. 42.

- 1) վորոշել CD-ն, յեթե AB=2 սմ և AD=4 սմ.
- 2) վորոշել AD-ն, յեթե AC:CD=4:5 և AB=12 սմ.
- 3) վորոշել AB-ն, յեթե AB=CD և AC=a:

32. 1) Յերկրագնդի մակերեսից 4 կիլոմետր բարձրութեան վրա գտնվող ոգապարիկից (զծ. 41) ի՞նչ հեռավորութեան վրա կարելի յետեսնել (յերկրագնդի շառավիղը հավասար է 6370 կմ-ի):

2) Ելրրուս լիւան բարձրութեանը ծովի մակերեսից 5600 մ է, Նրա գագաթից ինչքան հեռավորութեան վրա կարելի յետեսնել:

3) M գիտակետի բարձրութեանը լերկրի մակերեսից հավասար է h մետրի (զծ. 42). յերկրագնդի շառավիղն է R և տեսանելի ամենամեծ հեռավորութեանը՝ $MT=d$: Ապացուցեք, վոր $d=\sqrt{2Rh+h^2}$:

Կիսօղորայուն.— h^2 -ին համեմատած $2Rh$ -ի հետ, իր փոքրութեամբ չի ազդի գործողութեան արդյունքի վրա, յեթե այն անտեսենք. դրա համար սպտադործում են հետեյալ մոտավոր բանաձևը՝ $d\approx\sqrt{2Rh}$:

33 1) Մի կետից դուրս յեկած շոշափողն ու հատողը համապատասխանորեն հավասար են 20 սմ-ի և 40 սմ-ի. հատողի հեռավորութեանը կենտրոնից հավասար է 8 սմ-ի: Վորոշեցեք շրջանի շառավիղը:

2) Վորոշեցեք կենտրոնի և այն կետի հեռավորութեանը, վորից շրջանագծին տարած շոշափողն ու հատողը համապատասխանորեն հավասար են 4 սմ-ի և 8 սմ-ի, իսկ հատողի հեռավորութեանը կենտրոնից հավասար է 12 սմ-ի:

34. 1) Մի ընդհանուր կետից շրջանագծին տարված են հատող և շոշափող: Վորոշեցեք շոշափողի յերկարութեանը, յեթե նա հատողի արտաքին մասից 5 սմ-ով մեծ է, իսկ ներքին մասից՝ նույնքանով փոքր:

2) Մի ընդհանուր կետից շրջանագծին տարված են հատող և շոշափող: Հատողը հավասար է a-ի, իսկ նրա ներքին հատվածն արտաքին հատվածից մեծ է շոշափողի յերկարութեան չափով: Վորոշեցեք շոշափողը:

35. Մի ընդհանուր կետից շրջանագծին տարված են հատող և շոշափող: Շոշափողը հատողի ներքին և արտաքին հատվածներից համապատասխանորեն մեծ է 2 սմ-ով և 4 սմ-ով: Վորոշեցեք հատողի յերկարութեանը:

36. Մի կետից շրջանագծին տարված են շոշափող և հատող: Վորոշեցեք նրանց յերկարութեանը, յեթե շոշափողը 20 սմ-ով

փոքր է հատողի ներքին հատվածից և 8 սմ-ով մեծ է արտաքին հատվածի:

37. 1) Մի կետից շրջանագծին տարված են հատող և շոշափող: Նրանց գումարը հավասար է 30 սմ-ի, իսկ հատողի ներքին հատվածը 2 սմ-ով փոքր է շոշափողից: Վորոշեցեք հատողն ու շոշափողը:

2) Մի կետից շրջանագծին տարված են հատող և շոշափող: Նրանց գումարը հավասար է 15 սմ-ի, իսկ հատողի արտաքին հատվածը 2 սմ-ով փոքր է շոշափողից: Վորոշեցեք հատողն ու շոշափողը:

38. AB հատվածը շարունակվել է BC-ի չափ: AB և AC հատվածներն յրա, վորպես տրամագծերի, կառուցված են շրջանագրծեր: AC հատվածը B կետում կանգնեցված է BD ուղղահայացը մինչև մեծ շրջանագծի հետ հատվելը: C կետից փոքր շրջանագրծին տարված է CK շոշափողը: Ապացուցեք, վոր $CD=CK$:

39. Տված շրջանագծին տարված են յերկու գուգահեռ շոշափողներ և մի յերրորդ շոշափող, վոր հատում է գուգահեռ շոշափողներին: Ապացուցեք, վոր այդ շրջանի շառավիղը միջին համեմատական է յերրորդ շոշափողի հատվածներին:

40. Տված են յերկու գուգահեռ ուղիղներ, վորոնց հեռավորութեանն իրարից՝ 15 դմ է: Նրանց միջև տված է M կետը, վոր գուգահեռներից մեկից 3 դմ հեռավորութեան վրա յի գտնվելու մ: M կետից տարված շրջանագիծը շոշափում է գուգահեռները: Վորոշեցեք կենտրոնի և M կետի պրոեկցիաների հեռավորութեանը, տվյալ գուգահեռներից մեկի վրա:

41. r շառավիղն ունեցող շրջանին ներգծված է հավասարասրուն յեռանկյուն, վորի բարձրութեան և հիմքի գումարը հավասար է շրջանի տրամագծին: Վորոշեցեք բարձրութեանը:

42. Վորոշեցեք հավասարասրուն յեռանկյան արտաղծված շրջանի շառավիղը՝ 1) յեթե հիմքը հավասար է 16 սմ-ի, իսկ բարձրութեանը՝ 4 սմ-ի. 2) յեթե սրունքը հավասար է 12 դմ-ի, իսկ բարձրութեանը՝ 9 դմ-ի. 3) յեթե սրունքը հավասար է 15 մ-ի, իսկ հիմքը՝ 18 մ-ի:

43. Հավասարասրուն յեռանկյան հիմքը հավասար է 48 դմ-ի, իսկ սրունքը՝ 30 դմ-ի: Վորոշեցեք ներգծած և ար-

տագծած շրջանների շառավիղներն ու նրանց կենտրոնների հեռավորությունը:

44. Շառավիղը հավասար է r -ի, իսկ աված աղեղի լարը a -ի: Վորոշեցեք կրկնապատկած աղեղի լարը:

45. Շրջանագծի շառավիղը հավասար է 8 դմ-ի: AB լարը հավասար է 12 դմ-ի: A կետից տարված է շոշափող, իսկ B կետից՝ BC լարը, վորը գուզահեռ է շոշափողին: Վորոշեցեք շոշափողի և BC լարի հեռավորությունը:

46. A կետի և MN ուղիղի հեռավորությունն է՝ a : Տված r շառավիղով դժված է շրջանագիծ այնպես, վոր այն անցնում է A կետով և շոշափում է MN ուղիղը: Վորոշեցեք շոշափման կետի և աված A կետի հեռավորությունը:

§ 12. ԿԱՆՈՆԱՎՈՐ ԲԱՉՄԱՆԿՅՈՒՆՆԵՐ

Նշանակումներ. n — կանոնավոր բազմանկյան կողմերի թիվը, a_n — կանոնավոր ներգծած բազմանկյան կողմը, b_n — կանոնավոր արտագծած բազմանկյան կողմը, k_n — կանոնավոր ներգըծած բազմանկյան հարթագիծը (ապոթեմ), R — արտագծած շրջանագծի շառավիղը, r — ներգծած շրջանի շառավիղը:

1. 1) Հաշվեցեք կանոնավոր 24-անկյան և 16-անկյան կենտրոնական անկյունը:

2) Վեր կանոնավոր բազմակյունն ունի 30° -ի կենտրոնական անկյուն, վորը՝ 12° :

2. Կանոնավոր բազմանկյան կենտրոնական անկյան և գագաթի անկյան գումարը հավասար է 180° -ի: Ապացուցեք այդ:

3. Վորոշեցեք կանոնավոր n -անկյան մեծությունը ($n=3, 4, 5, 6, 8, 10, 12, 25$):

4. 1) Քանի՞ կողմ ունի կանոնավոր բազմանկյունը, յեթե նրա ներսի յուրաքանչյուր անկյունը հավասար է 135° -ի, 150° -ի:


2) Քանի՞ կողմ ունի կանոնավոր բազմակյունը, յեթե նրա արտաքին անկյունը հավասար է 36° -ի, 24° -ի:

5. Գլանակի ծայրը, վորի արտաքին ծն է 4 սմ, խորացրել են քառակուսան: Վորոշեցեք այն ամենամեծ չափը, վոր կարող է ունենալ քառակուսու կողմը:

6. Պատկանի ծայրը կանոնավոր յեռանիստի ձև ունի: Ինչ

քան կլինի նրա կողմի ամենամեծ չափը, յեթե պտուտակի գլանանակ մասի արտաքին շառավիղը է 2 սմ-ի:

7. Հաշվեցեք՝ ինչ չափով w բացվածք կունենա բանալին, յեթե նրա մեջ տեղավորված կանոնավոր վեցանկյունանակ պտուտակամալրի լայնությունը հավասար է $a_6=2,5$ սմ, իսկ պտուտակամալրի և բանալու կողմերի արանքը հավասար է $0,5$ մմ-ի (զժ. 43):



Գժ. 43.

8. 1) Շրջանագծին ներգծեցեք կանոնավոր 12-անկյուն և 15-անկյուն:

2) Շրջանագծին ներգծեցեք կանոնավոր 8-անկյուն և 10-անկյուն:

3) Տված a կողմով կառուցեք կանոնավոր 8-անկյուն և 12-անկյուն:

9. 1) Ապացուցեք, վոր շառավիղի միջնակետով անցնող և նրան ուղղահայաց լարը հավասար է ներգծած կանոնավոր յեռանկյան կողմին:

2) Յուրյ ափքը, վոր $K_6=0,5a_3$:

10. 1) Ապացուցեք, վոր կանոնավոր յեռանկյան մեջ հարթագիծը հավասար է արտագծած շրջանի շառավիղի $\frac{1}{2}$ -ին և յեռանկյան բարձրության $\frac{1}{3}$ -ին:

2) Կանոնավոր յեռանկյան արտագծած և ներգծած շրջանագծերի շառավիղների տարբերությունը հավասար է m -ի: Վորոշեցեք յեռանկյան կողմը:

11. 1) Կանոնավոր բազմանկյան կողմը հավասար է a -ի, իսկ նրան արտագծած շրջանի շառավիղը՝ R -ի: Վորոշեցեք ներգըծած շրջանի շառավիղը:

2) Կանոնավոր բազմանկյան կողմը հավասար է a -ի, իսկ նրան ներգծած շրջանի շառավիղը՝ r -ի: Վորոշեցեք արտագծած շրջանի շառավիղը:

3) Բազմանկյանն արտագծած շրջանի շառավիղը հավասար

և R-ի, իսկ ներգծած շրջանի շառավիղը՝ r-ի: Վերոշեցեք այս բազմանկյան կողմեր:

12. Շրջանագծին ներգծված է կանոնավոր 6-անկյուն: Գտեք նրա կողմերի պրոեկցիաները յուրաքանչյուր անկյունագծի վրա, յեթե շրջանագծի շառավիղը՝ R=1 սմ:

13. Ազապուցեք, վոր՝

1) $a_8 = R \sqrt{2 - \sqrt{2}}$; 2) $K_8 = \frac{R}{2} \sqrt{2 + \sqrt{2}}$

14. Ազապուցեք, վոր՝

1) $a_{12} = R \sqrt{2 - \sqrt{3}}$; 2) $K_{12} = \frac{R}{2} \sqrt{2 + \sqrt{3}}$

15. Տված a-ով վորոշեցեք R-ը, յեթե n-ը հավասար է.

1) 3; 2) 4; 3) 6; 4) 8; 5) 12:


16. Տված a-ով վորոշեցեք՝ 1) k_3 ; 2) k_4 ; 3) k_6 :

17. Տված k-ով վորոշեցեք R-ը, յեթե n-ը հավասար է 1) 3; 2) 4; 3) 6; 4) 8:

18. Տված R-ով վորոշեցեք՝ 1) b_3 ; 2) b_4 ; 3) b_6 :

19. Կանոնավոր ներգծած n-անկյան a կողմով և շրջանի տված R շառավիղով վորոշեցեք կանոնավոր արտագծած n-անկյան b կողմը:

20. Շրջանին ներգծեցեք կանոնավոր 7-անկյուն, ոգտվելով այն բանից, վոր կանոնավոր ներգծած 7-անկյան մի կողմը մտատվորապես հավասար է կանոնավոր ներգծած յեռանկյան կողմը կեսին: Շրջանի շառավիղը հավասար է 50 սմ-ի:



Գծ. 44.

23. Կառուցեք կանոնավոր 5-անկյուն, յերբ տված է անկյունագիծը:

24. Ամենահասարակ ձեղնահարկի ծածկն ուղղահայաց հատվածքով կազմում է կանոնավոր 8-անկյան կեսը (գծ. 44): Գտեք

BD ծածկը, 8-անկյան կողմը և ABDE ձեղնահարկի բարձրությունը: Տված է՝ AE=6 մ:

25. Շրջանագծին ներգծված է արտաքին կանոնավոր n-անկյուններ: Վորոշեցեք այդ n-անկյունների կողմերի հարաբերությունը (n=3, n=6), յեթե նայանի յեն մեծ լազմանկյան R և r շառավիղները:

26. Շրջանագծին ներգծված է կանոնավոր n-անկյուն և նրա կողմերի միջնակետերը հաջորդաբար միացված են: Վորոշեցեք նոր n-անկյան կողմերը, յեթե շառավիղը հավասար է R-ի, իսկ n-ը հավասար է 1) 6; 2) 8:

27. 1) Կանոնավոր 8-անկյան չորս կողմերի (իսկ ընդ մեջ վերցրած) միջնակետերը միացնելով ստացված է մի քառակուսի: Վորոշեցեք քառակուսու կողմը, յեթե 8-անկյան կողմը հավասար է a-ի:


2) Կանոնավոր 12-անկյան մեկ ընդ մեջ վերցված վեց կողմերի միջնակետերը միացնելով ստացվում է կանոնավոր 6 անկյուն: Վորոշեցեք 6-անկյան կողմը, յեթե 12-անկյան կողմը հավասար է a-ի:

28. Տված քառակուսու անկյունները հատելով կառուցեք 8-անկյուն:

Վորպեսզի տվյալ քառակուսին, անկյունները հատելով, կանոնավոր 8-անկյուն դարձնենք, պետք է քառակուսու անկյունագծի կեսը, ընդունելով շառավիղ, իսկ զապախները՝ կենտրոններ, հատենք կողմերը ադեղներով: Ազապուցեք, վոր ստացված 8-անկյունը կանոնավոր է:

29. Տված կանոնավոր յեռանկյան անկյունները հատելով վերածեցեք այն կանոնավոր 6-անկյան և վորոշեցեք նրա կողմը, յերբ կանոնավոր յեռանկյան կողմը հավասար է a-ի:

30. R շառավիղն ունեցող շրջանագծին ներգծված է բազ-



Գծ. 45.

մանկյուն, a_n կողմով: Կրկնապատկեցեք այդ բաղմանկյան կողմերի թիվը և ապացուցեք, Վոր $a_{2n} = \sqrt{2R^2 - 2R} \sqrt{R^2 - \frac{a_n^2}{4}}$

31. Շրջանագծին ներգծված կանոնավոր յեռանկյան կողմը հավասար է b -ի: Վորոշեցեք շրջանի շառավիղն ու շրջանին ներգրծված քառակուսու կողմը:

32. 4 դ՛ր շառավիղ ունեցող շրջանագծին ներգծված է կանոնավոր յեռանկյուն, վորի կողմի վրա կառուցված է քառակուսի: Վորոշեցեք քառակուսուն արտագծված շրջանագծի շառավիղը:

33. 1) Շրջանագծին ներգծված է կանոնավոր յեռանկյուն, վորին ներգծված է շրջանագիծ, իսկ այդ շրջանագծին ներգծված է քառակուսի: Վորոշեցեք քառակուսու կողմը, յեթե տված շրջանագծի շառավիղը հավասար է R -ի

2) Կանոնավոր յեռանկյան արտագծված է շրջանագիծ: Այդ շրջանագծին արտագծված է քառակուսի, իսկ քառակուսուն արտագծված է շրջանագիծ: Վորոշեցեք քառակուսուն արտագծված շրջանագծի շառավիղը, յեթե յեռանկյան կողմը հավասար է a -ի:

34. 1) Յերկու իրար հատող շրջանագծերի ընդհանուր լարը հավասար է a -ի և հանդիսանում է մի շրջանագծի համար կանոնավոր ներգծած յեռանկյան կողմը, իսկ մյուս շրջանագծի համար՝ ներգծած քառակուսու կողմը: Վորոշեցեք շրջանագծերի կենտրոնների հեռավորությունը:

2) Յերկու իրար հատող շրջանագծերի կենտրոնները գտնվում են նրանց ընդհանուր լարի մի կողմում, վորը՝ մի շրջանագծից հատում է 60° աղեղ, իսկ մյուսից՝ 30° աղեղ: Վորոշեցեք կենտրոնների հեռավորությունը, յեթե ընհանուր լարի յերկարությունը հավասար է a -ի:

35. ABC -ն ներգծած կանոնավոր յեռանկյուն է: $AD = \frac{1}{3} AB$, $BE = \frac{1}{3} BC$: Ապացուցեք, վոր DE հատվածը հավասար է շառավիղին:

36. Կանոնավոր յեռանկյան յուրաքանչյուր կողմը բաժանված են յերեք հավասար մասերի և համապատասխան կետերը (մի ուղղությամբ) միացնելով ստացված է մի նոր յեռանկյուն: Վորոշեցեք նոր յեռանկյանը ներգծած շրջանի շառավիղը, յեթե տվյալ կանոնավոր յեռանկյան կողմը հավասար է a -ի:

37. Տված քառակուսուն ներգծեցեք մի ուրիշ քառակուսի, վորն ունենա տված կողմը: Այս յնդիրը միշտ հնարավոր է:

38. Շեղանկյանը ներգծել մի քառակուսի, վորի կողմերը լինեն զուգահեռ շեղանկյան անկյունագծերին:

39. Մեկը մյուսի վրա դրված յերկու քառակուսիներից մեկը կենտրոնի նկատմամբ պտտված է 45° -ով: Վորոշեցեք կազմված աստղի պարագիծը, յեթե քառակուսու կողմը հավասար է a -ի:

40. 1) Կանոնավոր հնգանկյան անկյունագծերն իրենց հերթին կազմում են կանոնավոր հնգանկյուն: Ապացուցեք այդ:

2) Յեթե կանոնավոր հնգանկյան կողմերը շարունակենք մինչև նրանց հատվելը, ապա ստացվում է հավասարակողմ աստղաձև հնգանկյուն (պենդագրամա): Ապացուցեք այդ:

41. 1) Շրջանագիծը բաժանված է 6 հավասար մասերի և բաժանման կետերը լարերով մեկ ընդ մեջ միացված են: Վորոշեցեք ստացված 6-անկյուն աստղի կողմը, յեթե շրջանագծի շառավիղը հավասար է R -ի:

2) Շրջանագիծը բաժանված է 8 հավասար մասերի և բաժանման կետերը լարերով մեկ ընդ մեջ միացված են: Վորոշեցեք ստացված 8-անկյուն աստղի կողմը, յեթե շրջանագծի շառավիղը հավասար է R -ի:

42. Տված R շառավիղով վորոշեցեք այն աղեղի լարը, վոր պարունակում է 1) 135° , 2) 150° :

43. Վորոշեցեք յեռանկյան կողմերի հարաբերությունը, յեթե նրա անկյունները հարաբերում են այնպես, ինչպես 1:2:3:

44. Կիսաշրջանագծի միջնակետը միացված է արամագծի ծայրերի հետ և միացնող հատվածների միջնակետերից տարված է լար: Վորոշեցեք շրջանի շառավիղը, յեթե լարի կողքի հատվածներից յուրաքանչյուրը հավասար է c -ի:

45. Սեգմենտին ներգծված է ուղղանկյուն, վորի հիմքը բարձրությունից A անդամ մեծ է: Վորոշեցեք ուղղանկյան բարձրությունը, յեթե սեգմենտի աղեղը պարունակում է 120° , իսկ նրա բարձրությունը հավասար է h -ի:

46. Տված շրջանը շոշափում են n հատ հավասար շրջաններ, վորոնք միաժամանակ շոշափում են իրար: Վորոշեցեք այդ շրջանների շառավիղները, յեթե տված շրջանի շառավիղը հա-

վասար և R ի, իսկ փ քը շրջանների ո թիվը հավասար է 1) 3; 2) 4. 3) 5:


27. Տված հասարակ կետերի վրա, վորպես արամպների, կասուցված են յերկու շրջաններ և այդ հասարակ յուրաքանչյուր ծայրից մյուս ծայրի մոտ կասուցված շրջանին տարված են շոշափողներ: Ստացուցե՛ք, վոր այն հասարակը, վոր միացվում է շոշափողների հաստան կետերը, հավասար է նույն շրջանագծերից մեկին ներդրած քառակուսու կողմին:

§ 13. Ուղղանկյուն ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՄԱԿԵՐՆԵՐԸ

Քառակուսի

1. Հաշվեցե՛ք 46 ըզ գծագրում պատկերված ճանապարհային խողովակի հատույթի մակերեսը (շափերը արված են մետրերով):

2. 1 մ² հատույթ ունեցող յերկաթյա ձողը խզվում է 40 կգ ծանրությունից: Ինչպիսի՞ ծանրությունով կխզվի 24 մ կողմով քառակուսի լայնական հատույթ ունեցող յերկաթյա ձողը:



Գծ. 46.

3. Յերկու քառակուսաձև հողամասերի կողմերը հավասար են 100 մ-ի և 150 մ-ի: Վորոշեցե՛ք այս հողամասերին հավասարամեծ քառակուսի հողամասի կողմը:

4. 1) Քառակուսու 1 անկյունագծով վորոշեցե՛ք նրա մակերեսը:

2) Տված շրջանի R շառավղով վորոշեցե՛ք նրան ներդրած քառակուսու մակերեսը:

3) Շրջանին արտագծած քառակուսու մակերեսը յանի՞ անդամ մեծ է նույն շրջանին ներդրած քառակուսու մակերեսից:

5. 1) Ի՞նչ փոփոխության կենթարկվի քառակուսու մակերեսը, յեթև նրա յուրաքանչյուր կողմը մեծացնենք 3 անգամ, փոքրացնենք 1,5 անգամ:

2) Ինչպիսի պետք է փոխել քառակուսու կողմը, վոր նրա մակերեսը 4 անգամ մեծանա, 25 անգամ փոքրանա:

6. Քառակուսի հողամասի պլանի մակերեսը հավասար է 552,25 սմ² (մասշտաբ 1:10000): Գտե՛ք հողամասի մակերեսը բնականում:

Ուղղանկյուն

7. M տիպի «Բենո» տանկը կշռում է 6880 կգ, նրա թրթուրի զևանի հեռ շփվող մասի յերկարությունն է 2,05 մ (յուրաքանչյուր կողմից), իսկ լայնությունը՝ 0,5 մ: Թրթուրի յուրաքանչյուր 1 դմ² աշխատանքային մակերեսի վրա ինչպիսի՞ ծանրություն է ազդում:

8. Ուղղանկյունաձև գործարանային շենքի յերկարությունը հավասար է 82,5 մ-ի, իսկ լայնությունը՝ 23,5 մ-ի: Վորոշեցե՛ք շենքի բռնած հողամասի մակերեսը արերով:

9. Ուղղանկյուն հողամասը բռնում է 400 հեկտար մակերես: Հողամասի յերկարությունը հավասար է 8 կմ-ի: Գտե՛ք հողամասի սահմանների յերկարությունը (պարագիծ):


10. 1) Վորոշեցե՛ք ուղղանկյան կողմերը, յեթև նրանք հարբերում են այնպես, ինչպես 4:9, իսկ մակերեսը հավասար է 144 մ-ի:

2) Վորոշեցե՛ք ուղղանկյան կողմերը, յեթև նրա պարագիծը հավասար է 74 դմ-ի, իսկ մակերեսը՝ 3 մ²:


11. Ուղղանկյան կողմերը հավասար են 72 մ-ի և 8 մ-ի: Վորոշեցե՛ք նրան հավասարամեծ քառակուսու կողմը:

12. Հաշվեցե՛ք անկյունաձև յերկաթի լայնական հատույթի մակերեսը: (Չափերը արված են 47 գծագրում՝ միլիմետրներով):

13. Հաշվեցե՛ք խողովակի լայնական հատվածի մակերեսը: (Չափերը արված են 48 գծագրում՝ միլիմետրներով):



Գծ. 47.




Գծ. 48.

14. Ուղղանկյան անկյունագիծը հավասար է 305 սմ-ի, իսկ մակերեսը՝ 37128 սմ²: Վորոշեցե՛ք այդ ուղղանկյան պարագիծը:

Ջուզահեռագիծ

15. ABCD ուղղանկյունաձև դաշտի միջոցով անցնելու յե յերկաթուղաղիծը (դժ. 49): Հայտնի յե, վոր $AB=125$ մ, $BC=72,5$ մ $AL=KC=114,6$ մ: Հաշվեցեք BLDK շերտի մակերեսը:



Գժ. 40.

18. Վորոշեցեք զուգահեռագծի մակերեսը, յերկու կողմերով և նրանց միջև կազմած անկյունով՝ 1) $a, b, 30^\circ$; 2) $a, b, 45^\circ$; 3) $a, b, 60^\circ$:

19. Զուգահեռագիծը և ուղղանկյունն ունեն միևնույն յերկարության կողմեր: Վորոշեցեք զուգահեռագծի սուր անկյունը, յեթե նրա մակերեսը հավասար ե ուղղանկյան մակերեսի կեսին:


20. Գծագրեցեք քառակուսի և շեղանկյուն, վորոնց պարագլծերը միևնույնն են: Այս պատկերից վորք մակերեսը մեծ ե: Ինչո՞ւ:

21. Վորոշեցեք շեղանկյան մակերեսը, յեթե նրա բարձրությունը հավասար ե 12 սմ-ի, իսկ փոքր անկյունագիծը՝ 13 սմ-ի:

22. ABCD զուգահեռագծի մեջ AB կողմը հավասար ե 37 մ-ի, իսկ անկյունագլծերի հատման կետից AD կողմին իջեցրած ուղղահայացը բաժանում ե այն $AE=26$ մ և $ED=14$ մ յերկու հատվածների: Վորոշեցեք զուգահեռագծի մակերեսը:

16. Զուգահեռագծի մակերեսը հավասար ե 480 սմ²-ի, իսկ պարագիծը՝ 112 սմ-ի: Մեծ կողմերի հեռավորությունը հավասար ե 12 սմ-ի: Վորոշեցեք փոքր կողմերի հեռավորությունը:

17. Վորոշեցեք զուգահեռագծի մակերեսն իր h_1 և h_2 բարձրություններով ու շք պարագծով:



Գժ. 50.

23. 1) ABCD զուգահեռագծի մեջ (դժ. 50) տարված ե AC անկյունագիծը և նրա վրա վերցված ե կամայական M կետը: M կետից զուգահեռագծի կողմերին տարված են զուգահեռ ուղիղներ՝ $EF \parallel BC$ և $GH \parallel CD$: Ապացուցեք, վոր DHMF և EBGM զուգահեռագծերը, վորոնց միջով անկյունագիծը չի անցնում, հավասարամեծ են:

2) Զուգահեռագիծը, վորի կողմերն են՝ $a=8$ սմ և $b=4$ սմ, վերածեցեք հավասարամեծ մի զուգահեռագծի, վորի անկյունը հարվասար լինի առաջին զուգահեռագծի անկյանը, իսկ հիմքը $b=6$ սմ:

24. Տված քառակուսու մեջ յուրաքանչյուր դազաթ միացված ե նրան հաջորդող յերկու գազաթների միջև գտնվող կողմի միջնակետի հետ (գազաթները հաշվել միևնույն ուղղությամբ): Միացնող ուղիղները հատվելով՝ կազմում են ներքին քառակուսի: Ապացուցեք (հաշվելով), վոր նրա մակերեսը կազմում ե տված քառակուսու մակերեսի $\frac{1}{5}$ մասը:

25. Ուղղանկյուն յեռանկյան ներգծված ե քառակուսի, այնպես, վոր նրա մի կողմը գտնվում ե ներքնաձիգի վրա: Վորոշեցեք այդ քառակուսու մակերեսը, յեթե ներքնաձիգի ծայրի հատվածները հավասար են m և n:

26. Տված քառակուսու յուրաքանչյուր գազաթից հաջորդ գազաթը դեպի ներս տարված են 120° աղեղներ, և աղեղների հատման կետերը միացնելով ստացված ե մի նոր քառակուսի: Գտեք այդ քառակուսիների մակերեսների հարաբերությունը:

27. Ներքնաձիգի վրա վերցված կետից եջերին տարված են ուղղահայացներ: Վորոշեցեք այդ ուղղահայացներով առաջացած ուղղանկյան մակերեսը, յեթե եջերի այն հատվածները, վորոնք գտնվում են ներքնաձիգի մոտ, հավասար են m և n:

28. Յեռանկյանը, վորի հիմքը հավասար ե 30 սմ-ի, իսկ բարձրությունը 10 սմ-ի, ներգծված ե ուղղանկյուն՝ 63 սմ² մակերեսով: Վորոշեցեք այդ ուղղանկյան կողմերը:

Յեռանկյուն

29. Ողք՝ յուրաքանչյուր քառակուսի աստիճանագրի վրա ճնշում ե 1,03 կգ ուժով: Գտեք ողքի ճնշումն այն յեռանկյան մակե-

րեսի վրա, վորի հիմքը հալասար է 0,13 մ-ի, իսկ բարձրութունը 0,18 մ-ի:

30. Վորոշեցեք յեռանկյան մակերեսը, յեթե նրա հիմքն ու բարձրութունը համապատասխանորեն հավասար են 1) 32 սմ և 18 սմ; 2) 5 դմ և 4 մ; 3) $\sqrt{5}$ և $\sqrt{20}$:

31. ABC յեռանկյունը վերածեք իրան հավասարամեծ շեռանկյան, պահպանելով BC կողմը, բայց փոխարինելով ABC անկյունը սված α անկյունով:

2) ABC յեռանկյունը վերածեք իրան հավասարամեծ հալասարաբուն յեռանկյան, պահպանելով BC հիմքը:

32. 1) Տված յեռանկյան վորեկ գագաթից տարված ուղիղներով բաժանեցեք այդ յեռանկյունը չերեք հավասարամեծ յեռանկյունների:

2) Տված զուգահեռագիծը մի գագաթից տարված ուղիղներով բաժանեցեք 4 հավասարամեծ մասերի:

3) Տված զուգահեռագիծը վորեկ գագաթից տարված ուղիղներով բաժանեցեք չերեք հավասարամեծ մասերի:

33. Վորոշեցեք յեռանկյան մակերեսը, չերը հայտնի յեն a և b կողմերը, և նրանց միջև կազմված անկյունը՝

1) 30° ; 2) 45° ; 3) 60° :

34. Յեթե յեռանկյան յերկու կողմերը հավասար են 3 սմ-ի և 8 սմ-ի, ապա կարճը է նրա մակերեսը հավասար լինել՝

1) 10 սմ²; 2) 15 սմ²; 3) 12 սմ²:

35. 1) Վորոշեցեք ուղղանկյուն յեռանկյան մակերեսը, վորի ներքնածիղը հավասար է 313 սմ-ի, իսկ եջերից մեկը՝ 312 սմ-ի:

2) Ուղղանկյուն յեռանկյան մակերեսը հավասար է 720 սմ²-ի, իսկ եջերը հարաբերում են այնպես, ինչպես 9 : 40: Վորոշեցեք ներքնածիղը:

3) Տված a և b եջերով վորոշեցեք ներքնածիղին իջեցրած բարձրությունը:

36. Վորոշեցեք հավասարաբուն ուղղանկյուն յեռանկյան մակերեսն՝ այդ յեռանկյան c ներքնածիղով:

37. Վորոշեցեք հավասարաբուն յեռանկյան մակերեսը, յեթե նրա հիմքն ու արունքը համապատասխանորեն հավասար են՝

1) 56 սմ և 1 մ; 2) b և c ; 3) 20 սմ և 11 սմ:

38. Տված ABC յեռանկյան AB կողմի վրա գտնվող H կետից անցկացրեք մի ուղիղ այնպես, վոր այդ ուղիղով յեռանկյան մակերեսը կիսվի:

39. 1) Վորոշեցեք հավասարակողմ յեռանկյան մակերեսը, յեթե նրա կողմը հավասար է a -ի:

2) Վորոշեցեք հավասարակողմ յեռանկյան կողմը, չերը մակերեսը հավասար է Q -ի:

3) Վորոշեցեք հավասարակողմ յեռանկյան մակերեսը, յեթե նրա բարձրությունը հավասար է h -ի:

40. 1) Վորոշեցեք R շառավիղ ունեցող շրջանին ներգծած կանոնավոր յեռանկյան մակերեսը:

2) Վորոշեցեք շրջանին արտագծած կանոնավոր յեռանկյան մակերեսը, յեթե շրջանի շառավիղը հավասար է r -ի:

41. Վորոշեցեք ուղղանկյուն յեռանկյան մակերեսը, յեթե նրա բարձրությունը ներքնածիղը բաժանում է 32 սմ և 18 սմ հատվածներին:

42. Վորոշեցեք յեռանկյան մակերեսը, յեթե նրա բարձրությունը հավասար է 36 սմ-ի, իսկ կողմնային կողմերը՝ 85 սմ-ի և 60 սմ-ի:

43. Վորոշեցեք ուղղանկյուն յեռանկյան եջերը, յեթե ներքնածիղը հավասար է 73 սմ-ի, իսկ մակերեսը՝ 1320 սմ²-ի:

44. Հավասարաբուն յեռանկյան մեջ սրունքը հավասար է 10 սմ-ի, իսկ մակերեսը՝ 48 սմ²-ի: Վորոշեցեք հիմքը:

45. 1) Վորոշեցեք շեղանկյան մակերեսը, յեթե անկյունագրածերը հավասար են 72 սմ-ի և 40 սմ-ի:

2) Վորոշեցեք շեղանկյան բարձրությունը, յեթե նրա անկյունագրածերը հավասար են 16 մ-ի և 12 մ-ի:

46. Վորոշեցեք շեղանկյան կողմը, յեթե նրա անկյունագրածերը հարաբերում են այնպես, ինչպես $m : n$, իսկ մակերեսը հավասար է Q -ի:


47. Յեռանկյան հիմքի միջնակետից մյուս կողմերին տարված են յերկու զուգահեռ ուղիղներ: Ապացուցեք, վոր ստացված զուգահեռագիծը հավասարամեծ է յեռանկյան կետին:

48. Յեթե զուգահեռագծի մեջ գտնվող վորեկ կետը միացնենք գագաթներին հետ, ապա յերկու հակադիր յեռանկյուններին գումարը հավասարամեծ է մյուս յերկու գումարին: Ապացուցեք այդ:

49. Յեռանկյունը վերածեցեք իրան հավասարամեծ գուգահեռազծի:

50. Տված բազմանկյունը վերածեցեք իրան հավասարամեծ մի բազմանկյան, վորի կողմերի թիվը մեկով պակաս լինի տված բազմանկյան կողմերի թվից:

51. Ճանապարհի չերեսքի (պաստառի) լայնությունը հավասար է $a=6,75$ մ (զծ. 51): Վերելքի h սյաքը կազմելու յե յերեսքի 20% -ը: Լիցքի բարձրությունը՝ $H=1,5$ մ, իսկ շեպերը հորիզոնական գծի հետ կազմում են 45° անկյուն: Հաշվեցեք ճանապարհի լայնական պրոֆիլի (տրամատի) մակերեսը:



Գծ. 51.

վրա գտնվող անկյունները՝ 30° -ի և 45° -ի:

53. ACB և ADB հավասար ուղղանկյուն յեռանկյունները գտնվում են AB ընդհանուր ներքնաձիգի միևնույն կողմում: $AD=BC=12$ սմ և $AC=BD=16$ սմ: Վորոշեցեք տված յեռանկյունների ընդհանուր մասի մակերեսը:

54. Հավասարակողմ յեռանկյան կողմերի վրա կառուցված են քառակուսիներ և քառակուսիների ազատ գագաթները միացված են: Վորոշեցեք ստացված վեցանկյան մակերեսը, յեթե տված յեռանկյան կողմը հավասար է a -ի:

55. Տված քառակուսու անկյունները կտրելով ստացված է կանոնավոր 8-անկյուն: Վորոշեցեք այդ 8-անկյան մակերեսը, յեթե տված քառակուսու կողմը հավասար է a -ի:

56. Ուղղանկյուն յեռանկյան եջերի հարաբերությունը հավասար է $1,05$ -ի, իսկ նրան արտագծած և ներգծած շրջանները շառավիղների տարբերությունը հավասար է 17 դմ-ի: Վորոշեցեք յեռանկյան մակերեսը:

57. 150 սմ և 200 սմ անկյունագծեր ունեցող շեղանկյան բութ անկյան գագաթից տարված են յերկու բարձրություն և նրանց ծայրերը միացված են: Վորոշեցեք ստացված յեռանկյան մակերեսը:

58. AB-ն և CD-ն յերկու գուգահեռ հատվածներ են, M-ը AD և BC ուղիղների (վորոնք տվյալ հատվածների ծայրերը միացնում են խաչաձև) հատման կետն է: Վորոշեցեք ABM և MCD յեռանկյունների մակերեսների գումարը, յեթե $AB=8$ սմ, $CD=12$ սմ, իսկ նրանց հեռավորությունը՝ 10 սմ-ի:

Հերոնի բանաձեւը

59. Վորոշեցեք յեռանկյան մակերեսը, յերբ տված են յերեք կողմերը.

1) $13; 14; 15$, 2) $29; 25; 6$, 3) $5; 6; 9$,

4) $3; 5; 7$, 5) $6; 5; 2,2$, 6) $5; 8 \frac{2}{3}; 12 \frac{1}{3}$,

7) $5; 4; \sqrt{17}$, 8) $5; \sqrt{58}; \sqrt{65}$, 9) $\sqrt{5}; \sqrt{10}; \sqrt{13}$:

60. Վորոշեցեք յեռանկյան փոքր բարձրությունը, յեթե նրա կողմերը հավասար են 25 դմ-ի, 28 դմ-ի և 36 դմ-ի:

2) Վորոշեցեք յեռանկյան մեծ բարձրությունը, յեթե կողմերը հավասար են $15; 112; 113$:

61. Վորոշեցեք յեռանկյան կողմերը՝ 1) յեթե նրանք հարաբերում են այնպես, ինչպես $26:25:3$, իսկ յեռանկյան մակերեսը հավասար է 9 մ²-ի, 2) յեթե կողմերը հարաբերում են այնպես, ինչպես $9:10:17$, իսկ մակերեսը հավասար է 144 սմ²-ի:

62. Վորոշեցեք քառանկյան մակերեսը, յերբ անկյունագիծը հավասար է 17 սմ-ի. քառանկյան անկյունագծի մի կողմի վրա ընկած կողմերը հավասար են 10 սմ-ի և 21 սմ-ի, իսկ մյուս կողմի վրա ընկածները՝ 8 սմ-ի և 15 սմ-ի:

63. Յերկու իրար հատող շրջանագծերի շառավիղները հավասար են 17 սմ-ի և 39 սմ-ի, իսկ նրանց կենտրոնների հեռավորությունը հավասար է 44 սմ-ի: Վորոշեցեք նրանց ընդհանուր լարի յերկարությունը:

64. Վորոշեցեք գուգահեռագծի մակերեսը, յեթե նրա կողմերից մեկը հավասար է 51 սմ-ի, իսկ անկյունագծերը՝ 40 սմ-ի և 74 սմ-ի:

65. Վորոշեցեք յեռանկյան մակերեսը, յեթե նրա յերկու կողմերը համապատասխանաբար հավասար են 27 սմ-ի և 29 սմ-ի, իսկ յերրորդ կողմի միջնագիծը՝ 26 սմ-ի:

66. Յեռանկյան տված յերկու կողմերով և մակերեսով վորոշեցեք յերրորդ կողմը. 1) $a=17, b=23, s=210$, 2) $a=7, b=11, s=\sqrt{1440}$:

67. ABC յեռանկյան մեջ տրված են 3 կողմերը՝ $AB=26$, $BC=30$ և $AC=28$: Վորոշեցեք յեռանկյան այն մասի մակերեսը, վորը գտնվում է B անկյան դադաթից իջեցրած ուղղահայացի և նույն անկյան կիսորդի միջև:

68. Յեռանկյան կողմերը հավասար են 13 սմ-ի, 14 սմ-ի և 15 սմ-ի: Վորոշեցեք այն շրջանագծի շառավիղը, վորի կենտրոնը գտնվում է միջին կողմի վրա և շոշափում է մյուս յերկու կողմերը:


69. Տված յեռանկյան զազաթները միացված են նրան ներգծված շրջանի կենտրոնի հետ: Տարված ուղիղներով յեռանկյան մակերեսը բաժանվեց 3 մասի՝ 28 մ², 60 մ² և 80 մ² մասերին: Վորոշեցեք տված յեռանկյան կողմերը:

70. ABCD քառանկյան մեջ տված են՝ $AB=26$ սմ, $BC=30$ սմ, $CD=17$ սմ, $AD=25$ սմ, իսկ AC անկյունագիծը՝ 28 սմ: Վորոշեցեք քառանկյան մակերեսն ու BD անկյունագիծը:

71. 1) Սեղանի հիմքերը հավասար են 35 սմ-ի և 29 սմ-ի, իսկ մակերեսը՝ 256 սմ²-ի: Վորոշեցեք սեղանի բարձրությունը:

2) Սեղանի բարձրությունը հավասար է 8 սմ-ի, իսկ մակերեսը 2 դմ²-ի: Վորոշեցեք միջին գծի յերկարությունը:


3) Սեղանի մակերեսը հավասար է 144 սմ²-ի: Հիմքերը հարաբերում են այնպես, ինչպես 4:5, բարձրությունը հավասար է 16 սմ-ի: Վորոշեցեք հիմքերը:



Գծ. 52.


րության ստորի բերված աղյուսակի չափերով:

Հեռավորությունը ասից (մետրերով)	0	1	2	3	4	5	6	7	8	9	10
Ստորությունը (մետրերով)	0	0,65	0,9	1,5	1,85	2,4	2,95	1,75	1,25	0,6	0




Գծ. 53.

74. 54-րդ գծագիրը ներկայացնում է բանվորական ահուճքի ճաշարանի հատակագիծը, վորի չափերը տրված են մետրերով: Վորոշեցեք ճաշարանի մակերեսը:



Գծ. 54.



Գծ. 55.

75. Զինվորական դիմակավորման հաղուստ պատրաստելու համար ոգտվում են 55-րդ գծագրում ցույց տված ձևածրով, (չափերը սանտիմետրներով): Հաշվեցեք ձևածքի մակերեսը:

76. 1) ABCD սեղանի մակերեսը AB կողմնային կողմին զուգահեռ EF ուղղիով բաժանված է յերկու հավասար մասերի: Վորոշեցեք AF հատվածը, յեթե AD=28 սմ և BC=12 սմ:

2) Սեղանի մակերեսը անկյունագծով բաժանվում է յերկու մասերի, վորոնք հարաբերում են այնպես, ինչպես 3:7: Տվյալ մակերեսը միջին գծով ինչ հարաբերությամբ է բաժանվում (սկսած փոքր հիմքից):

77. Հավասարասրուն սեղանի հիմքը հավասար է 51 սմ-ի և 69 սմ-ի, իսկ կողմնային կողմը՝ 41 սմ-ի: Վորոշեցեք մակերեսը:

78. Վորոշեցեք այն հավասարասրուն սեղանի մակերեսը, վորի հիմքերը հավասար են 42 սմ-ի և 54 սմ-ի, իսկ մեծ հիմքի անկյունը հավասար է 45°-ի:

79. Ուղղանկյուն սեղանի հիմքի սուր անկյունը հավասար է 30°-ի: Հիմքերի գումարը հավասար է m-ի, իսկ կողմնային կողմերի գումարը՝ n-ի: Վորոշեցեք սեղանի մակերեսը:

80. Վորոշեցեք սեղանի մակերեսը, վորի զուգահեռ կողմերը հավասար են 60 սմ-ի և 20 սմ-ի, իսկ վոչ զուգահեռ կողմերը՝ 13 սմ-ի և 37 սմ-ի:

81. Հավասարասրուն սեղանի մեծ հիմքը հավասար է 44 մ-ի, կողմնային կողմը՝ 17 մ, իսկ անկյունագիծը՝ 39 մ-ի: Վորոշեցեք այդ սեղանի մակերեսը:

82. 1) Վորոշեցեք հավասարասրուն սեղանի մակերեսը, վորի հիմքերը հավասար են 12 սմ-ի և 20 սմ-ի, իսկ անկյունագծերը փոխադարձ ուղղահայացներ են:

2) Վորոշեցեք այն հավասարասրուն սեղանի մակերեսը, վորի անկյունագծերը փոխադարձ ուղղահայացներ են, իսկ բարձրությունը հավասար է h-ի:

83. Վորոշեցեք հավասարասրուն սեղանի մակերեսը, յեթե նրա անկյունագիծը հավասար է c-ի և մեծ հիմքի հետ կազմում է 45°-ի անկյուն:

84. Վորոշեցեք այն հավասարասրուն սեղանի մակերեսը, վորի հիմքերը հավասար են 10 սմ-ի և 26 սմ-ի, իսկ անկյունագլուխներն ուղղահայաց են կողմնային կողմերին:

85. Վորոշեցեք այն սեղանի մակերեսը, վորի հիմքերը հավասար են 142 սմ-ի և 89 սմ-ի, իսկ անկյունագծերը՝ 120 սմ-ի և 153 սմ-ի:

86. Շրջանի կենտրոնի մի կողմում տարված են յերկու զուգահեռ լարեր, վորոնք ձգում են 60° և 120° աղեղներ, և լարերի ծայրերն իրար հետ միացված են: Վորոշեցեք ստացված սեղանի մակերեսը, յեթե շրջանի շառավիղը հավասար է R-ի:

87. Շրջանին արտագծած հավասարասրուն սեղանի կողմնային կողմը հավասար է a-ի, իսկ հիմքի սուր անկյունը՝ 30°-ի: Վորոշեցեք այդ սեղանի մակերեսը:

88. 1) Յնառանկյան հիմքը հավասար է 75 սմ-ի: Իսկ մյուս յերկու կողմերը՝ 65 սմ-ի և 70 սմ-ի: Բարձրությունը բաժանված 2:3 հարաբերությամբ (սկսած զագաթից) և բաժանման կետից հիմքին տարված է զուգահեռ: Վորոշեցեք ստացված սեղանի մակերեսը:

2) Սեղանի անկյունագծերը հավասար են 20 մ-ի և 15 մ-ի, բարձրությունը՝ 12 մ-ի: Վորոշեցեք սեղանի մակերեսը:

89. Հավասարասրուն սեղանի հիմքերն ու կողմնային կողմը հարաբերում են այնպես, ինչպես 10:4:5, նրա մակերեսը հավասար է 112 սմ²-ի: Գտեք սեղանի պարագիծը:

90. 56-րդ գծագրում տրված է հողամասի հատակագիծը 1:10000 մասշտաբով: Հատակագծում չափված են նրա d₁ ու d₂


անկյունագծերը և h₁, h₂, h₃ բարձրությունները, աված է d₁=44 մ; d₂=50 մ; h₁=7 մ; h₂=20,4 մ և h₃=21,6 մ: Արտահայտեցեք հողամասի մակերեսը հեկտարներով:

91. Հաշվեցեք հողամասի մակերեսը, վորի հատակագիծը տրված է 57-րդ գծագրում (չափերը մետրերով են արտահայտված):

92. Վորոշեցեք քառանկյան մակերեսը, յեթե նրա անկյունագծերը հավասար են k և l և 1) փոխադարձ ուղղահայաց են, 2) կազմում են 30° անկյուն:

93. Ուղղանկյան կողմերի վրա դեպի դուրս կառուցված են հավասարակողմ յեռանկյուններ, վորոնց ազատ գագաթները


Ռազմանկյան մակերեսը



Գծ. 56.

միացված են: Վորոշեցեք ստացված քառանկյան մակերեսը, յեթե տված ուղղանկյան կողմերը հավասար են a-ի և b-ի:

94. AE հատվածի վրա վերցված է C կետն այնպես, վոր AC=a և CE=b: AC և CE հատվածների վրա միեկուսն կոդմում կառուցված են ABC և CDE հավասարակողմ յեռանկյունները, վորոնց B և D գագաթները միացված են իրար հետ: Վորոշեցեք ABDE քառանկյան մակերեսը:



Գծ. 57.

95. Դիցուք M-ը ABCD քառանկյան AD կողմի միջնակետն է: Տված է $MB \perp AB$, $MC \perp CD$, $AD=50$ սմ, $AB=15$ սմ և $CD=7$ սմ: Վորոշեցեք ABCD քառանկյան մակերեսը:

96. r շառավիղն ունեցող շրջանագծի վրա հաջորդաբար վերցված են հետևյալ արկղները՝ $AB=30^\circ$, $BC=60^\circ$, $CD=90^\circ$ և $DE=120^\circ$ և ստացված է ABCDE հնգանկյունը: Վորոշեցեք այդ հնգանկյան մակերեսը:

97. 1) Արտազծված բազմանկյան պարագիծը հավասար է 60 սմ-ի, իսկ մակերեսը 240 սմ²-ի: Վորոշեցեք շրջանի շառավիղը:
2) Շրջանին արտազծված է բազմանկյուն, վորի մակերեսը հավասար է 20 սմ²-ի: Վորոշեցեք բազմանկյան պարագիծը, յեթե շրջանի շառավիղը հավասար է 25 սմ-ի:

98. Վերոշեցեք շրջանագծին արտազծած կանոնավոր բազմանկյան մակերեսը, յեթե շառավիղը հավասար է r-ի:
99. Կանոնավոր վեցանկյան կողմը հավասար է 84 սմ-ի: Հաշվեցեք նրան հավասարամեծ կանոնավոր յեռանկյան կողմը:

100. Ցանկանում են սենյակի հատակը կանոնավոր 6-անկյունաձև պարկետներով պատաստել, վորի (պարկետի) մի կողմը

հավասար է 12 սմ-ի: Հատակի պատաստվելիք մասի յերկարությունն է 7,48 մ, իսկ լայնությունը՝ 3,25 մ: Վորոշեցեք պարկետների անհրաժեշտ թիվը:

101. Սենյակի յերկարությունը հավասար է 6,6 մ-ի, իսկ լայնությունը՝ 4,5 մ-ի: Նրա ձուռքի մասը կանոնավոր 6-անկյան կեսի ձևն ունի, վորի մեկ կողմը հավասար է 1,5 մ: Վորոշեցեք սենյակի հատակի մակերեսը:

102. 1) Տված R շառավիղով վորոշեցեք կանոնավոր ներգծած վեցանկյան մակերեսը:
2) Տված r շառավիղով վորոշեցեք կանոնավոր արտազծած վեցանկյան մակերեսը:

3) Կանոնավոր վեցանկյան S մակերեսով վորոշեցեք նրա կողմը:

103. Տված R շառավիղով վորոշեցեք կանոնավոր ներգծած ութանկյան և 12-անկյան մակերեսները:

104. Յերկաթ-բետոնի ցցի հատույթը կանոնավոր ութանկյան ձևն ունի: Նրա հակադիր գագաթների աճենամեծ հեռավորությունը հավասար է 224 սմ-ի: Վորոշեցեք հատույթի մակերեսը:

105. Ութանիստ յերկաթի ճյուղը հաստությունը (հակադիր նիստերի հեռավորությունը) հավասար է 36 մմ-ի: Հաշվեցեք լայնական հատույթի մակերեսը:

106. 1) Տված կանոնավոր ներգծած 12-անկյան Q մակերեսով վորոշեցեք նույն շրջանագծին ներգծած կանոնավոր վեցանկյան մակերեսը:
2) Տված կանոնավոր ներգծած ութանկյան Q մակերեսով վորոշեցեք նույն շրջանագծին ներգծած քառակուսու մակերեսը:

107. 1) Շրջանագիծը բաժանված է 6 հավասար մասերի և բաժանման կետերը մեկընդմեջ միացված են: Վորոշեցեք ստացված վեցանկյուն աստղի մակերեսը, յեթե շրջանագծի շառավիղը հավասար է R-ի:
2) Շրջանագիծը բաժանված է 8 հավասար մասերի, և բաժանման կետերը, մեկընդմեջ միացված են: Վորոշեցեք ստացած ութանկյուն աստղի մակերեսը, յեթե շրջանագծի շառավիղը հավասար է R-ի:

Յեռանկյունների յեվ բազմանկյունների մակերեսների բաղդասուժը

108. 1) Ապացուցեք, վոր այն բոլոր ուղիղները, վորոնք անցնում են զուգահեռազծի համաչափության կենտրոնով, բաժանում են զուգահեռադիժը չերկու հաշասարամեծ մասերի:

2) Տված կետից քանի մի ուղիղ, վոր աված զուգահեռազծի մակերեսը բաժանի չերկու հավասար մասերի:

109. Տված զուգահեռադիժը բաժանել n հավասարամեծ մասերի, տանելով նրան զագաթից անցնող ուղիղներ՝ 1) $n=6$; 2) $n=5$:

110. Քառանկյան անկյունագծերից մեկի միջնակետը միացված է մյուս անկյունագծի ծայրերի հետ: Ապացուցեք, վոր ստացված բեկչալը ավյալ քառանկյունը բաժանում է 2 հաշասարամեծ մասերի:

111. Ապացուցեք, վոր յեթե վորձե քառանկյան անկյունագծերից մեկը մյուսին կիսում է, ապա նա կիսում է նաև քառանկյան մակերեսը:

112. 1) Ապացուցեք, վոր սեղանի հիմքերի միջնակետերից անցնող ուղիղը բաժանում է նրա մակերեսը չերկու հավասարամեծ մասերի:

2) Սեղանի հիմքերի միջնակետերից անցնող ուղիղի վրա վերցված է մի կետ և այն միացված է սեղանի բոլոր գագաթների հետ: Ապացուցեք, վոր սեղանի կողմնաչին կողմերի մոտ գտնվող չեռանկյունները հավասարամեծ են:

113. 1) Սեղանի անկյունագծերը սեղանը բաժանում են 4 չեռանկյուններ: Ապացուցեք, վոր սեղանի կողմնաչին կողմերի վրա ընկած չեռանկյունները հավասարամեծ են:

2) Յեթև ABCD սեղանի AB կողմի միջնակետը (M) միացնենք CD կողմի ծայրերի հետ, ապա ստացված CMD չեռանկյան մակերեսը հավասարամեծ է սեղանի մակերեսի կեսին: Ապացուցեք այդ:

114. Սեղանի ակյունագիժը նրա մակերեսը բաժանում է չերկու այնպիսի մասերի, վորոնք հարաբերում են այնպես, ինչպես 3 : 7: Ինչ հարաբերությամբ կբաժանվի նույն մակերեսը, յեթե վերևի հիմքի մի ծայրից կողմնաչին կողմերից մեկին տանենք զուգահեռ ուղիղ:

115. 1) Կառուցեք մի քառակուսի, վորը հավասարամեծ է տված a և b կողմերն ունեցող չերկու քառակուսիների գումարին ($a=5$ սմ և $b=12$ սմ):

2) Կառուցեք մի քառակուսի, վորի մակերեսը 3 անգամ մեծ է տված a կողմն ունեցող քառակուսու մակերեսից:

116. Ուղղանկյուն չեռանկյան կողմերի վրա կառուցված են քառակուսիներ և նրանց ազատ զագաթները միացված են: Վորչեցեք ստացված վեցանկյան մակերեսը, յեթե տված չեռանկյան եջերը հավասար են a-ի և b-ի:

117. Ի՞նչպես են հարաբերում չերկու չեռանկյունների P և Q մակերեսները, յեթե նրանք ունեն մեկական հավասար անկյուն, վորոնց կողմերը հավասար են առաջին չեռանկյան մեջ 12 դմ-ի և 28 դմ-ի, իսկ չերկրորդ չեռանկյան մեջ՝ 21 դմ-ի և 24 դմ-ի:

118. ABC չեռանկյան մեջ BA կողմը շարունակված է $AD=0,2$ BA չերկարությամբ, իսկ BC կողմը՝ $CE=\frac{2}{3}BC$ չերկարությամբ: D և E կետերը միացված են: Գտեք ABC և DBE չեռանկյունների մակերեսների հարաբերությունը:

119. Մակերեսները բաղդասուժով արտածեցեք չեռանկյան անկյան կիսորդի հատկությունը:

120. Քանի անգամ կմեծանա չեռանկյան մակերեսը, յեթե յուրաքանչյուր կողմը մեծացնենք 4 անգամ, 5 անգամ:

121. Յեռանկյան կողմը հավասար է 5 դմ-ի: Ինչի՞ յե հավասար նման չեռանկյան համապատասխան կողմը, յեթե վերջինի մակերեսը 2 անգամ մեծ է:

122. Յեռանկյան միջին գիժը նրա մակերեսի վճր մասն է հատում (հաշվելով գագաթից):

123. Յեռանկյան բարձրությունը հավասար է h-ի: Հիմքին զուգահեռ ուղիղը գագաթից ի՞նչ հեռավորության վրա պետք է գտնվի, վորպեսզի չեռանկյան մակերեսը կիսվի:

124. 1) Յեռանկյան մի կողմը բաժանված է չերեք մասերի, վորոնք հարաբերում են այնպես, ինչպես 2 : 3 : 4 (սկսած գագաթից դեպի հիմքը) և բաժանման կետերից տարված են հիմքին զուգահեռ ուղիղներ: Ի՞նչ հարաբերությամբ բաժանվեց չեռանկյան մակերեսը:

2) ABC յեռանկյան AB կողմը $m : n$ հարաբերութեամբ բաժանող E կետից տարված և BC կողմին զուգահեռ և՛ն պրոսթ հարաբերութեան մեջ են գտնվում հատած յեռանկյան և ստացած սեղանի մակերեսները:

125. Յեռանկյան հիմքին զուգահեռ ուղիղը բաժանում և կողմնային կողմը $5 : 3$ հարաբերութեամբ (սկսած զուգահեռից), իսկ մակերեսը՝ յերկու այնպիսի մասերի, վորոնց տարրերութեանը հավասար և 56 սմ². ի: Վորոշեցեք ամբողջ յեռանկյան մակերեսը:

126. Յեռանկյան մակերեսը հիմքին զուգահեռ ուղիղներով բաժանված և յերեք մասերի, վորոնք հարաբերում են սյնպես, ինչպես $9 : 55 : 161$ (սկսած զաղաթից): Ինչպիսի՞ հարաբերութեամբ բաժանվեցին կողմնային կողմերը:

127. Հետևյալ ներգծած պատկերներն արտադրած նույնանուն պատկերների վոր մասն են կազմում.) կանոնավոր յեռանկյան, 2) քառակուսի, 3) կանոնավոր վեցանկյան (լուծեցեք ստանց մակերեսները հաշվելու):

128. Յերեք նման բազմանկյունների մակերեսների զուգարը հավասար և 232 դմ²-ի, իսկ պարագծերը հարաբերում են այնպես, ինչպես $2 : 3 : 4$: Վորոշեցեք յուրաքանչյուր բազմանկյան մակերեսը:

129. Ուղղանկյուն յեռանկյան կողմերի վրա կառուցված են նման պատկերներ: Ընդվորում յեռանկյան կողմերը հանդիսանում են այդ պատկերների համապատասխան կողմերը: Ապացուցեք, վոր ներքնաձիգի վրա կառուցված պատկերի մակերեսը հավասար և եջերի վրա կառուցած պատկերների մակերեսների զուգարին:

130. 1) Կառուցեք մի քառակուսի, վոր հավասարամեծ և աված յերկու քառակուսիների տարրերութեան:

2) Կառուցեք մի քառակուսի, վորը հավասարամեծ և աված n քառակուսիների զուգարին:

131. Կառուցեք մի յեռանկյուն, վորը հավասարամեծ և աված բազմանկյունը:

132. Տված և յերկու քառակուսիների կողմերի հարաբերութեանն ու նրանցից մեկը: Կառուցեք մյուս քառակուսին:

133. Զուգահեռագծի յուրաքանչյուր կողմի միջնակետը մի ուղղութեամբ միացված և եռջորդ կողմի ծայրի հետ, վորից

ստացված և մի ներքին զուգահեռագիծ, Ապացուցեք, վոր ներքին զուգահեռագծի մակերեսը հավասար և աված զուգահեռագծի մակերեսի $\frac{1}{5}$ մասին:

134. Գտեք սյն սեղանի հիմքերի հարաբերութեանը, վոր հեղասարամեծ և իր լրացուցիչ յեռանկյանը:

135. Ուղղանկյուն յեռանկյան մակերեսը ներքնաձիգին ուղղահայաց մի ուղիղով բաժանված և յերկու հավասար մասերի: Գտեք այդ ուղիղի և փոքր սուր անկյան զազաթի հեռավորութեանը, յեթե մեծ եջը հավասար և 20 մ-ի:

136. Ուղղանկյուն յեռանկյան եջերը հարաբերում են տնպես, ինչպես $3 : 4$, իսկ բարձրութեանը յեռանկյան մակերեսը բաժանում և յերկու այնպիսի մասերի, վորոնց տարրերութեանը հավասար և 84 դմ². ի: Վորոշեցեք յեռանկյան մակերեսը:

137. 1) ABC յեռանկյան 3 միջնագծերը հատվում են M կետում: Ապացուցեք, վոր AMB յեռանկյունը կազմում և ABC յեռանկյան $\frac{1}{3}$ մասը:


2) Ապացուցեք, վոր յեռանկյան յերեք միջնագծերը նրա մակերեսը բաժանում են 6 հավասար մասերի:

138. Շրջանագծից զուրս գտնվող A կետից տարված են AB շրջափողն ու ACD հատողը: Վորոշեցեք CBD յեռանկյան մակերեսը, յեթե $AC : AB = 2 : 3$ և ABC յեռանկյան մակերեսը հավասար և 20 դմ²-ի:

139. Շրջանագծի AB և CD լարերը չեն հատվում: $\sphericalangle A = 120^\circ$ և $\sphericalangle C = 96^\circ$: AD և BC լարերը հատվում են M կետում: Վորոշեցեք AMB և CMD մակերեսները, յեթե նրանց զուգարը հավասար և 100 սմ²:

140. AB-ն տրամագիծ և, BC-ն և AC-ն լարեր են, ընդվորում $\sphericalangle B = 60^\circ$: D-ն տրամագծի շարունակութեան և C կետից տարած շրջափողի համան կետն և: Գտեք DCB և DCA մակերեսների հարաբերութեանը:

141. Քառակուսու յուրաքանչյուր կողմը սլտաված և դեպի



93. 58.

ներս 30°-ով (տես գծ. 58), Վորոշեցեք տված քառակուսու և նոր կազմված քառակուսու մակերեսների հարաբերությունը:

142. Տված ABCD քառակուսու CD և AD կողմերի միջնակետերն են E և F, M-ը BE և FC ուղիղների հատման կետն է, Ապացուցեք, վոր BMC մակերեսը կազմում է տված քառակուսու մակերեսի $\frac{1}{5}$ մասը:

143. Յեռանկյունը և նրան ներգծած շեղանկյունն ունեն մի ընդհանուր անկյուն, Յեռանկյան այն կողմերը, վորոնցով կազմված է այդ անկյունը, հարաբերում են այնպես, ինչպես m : n: Գտեք շեղանկյան և յեռանկյան մակերեսների հարաբերությունը:

§ 14. ՅԵՌԱՆԿՅԱՆ ՄԻՋՆԱԳԾԻ, ԿԻՍՈՐԴԻ ՅԵՎ ՆՐԱՆ ԱՐՏԱԳԾԱԾ ՈՒ ՆԵՐԳԾԱԾ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՇԱՌԱՎԻՂՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Միջնագծերի հատումը

1. Յեռանկյան կողմերը հավասար են a, b, c: Ապացուցեք, վոր c կողմին տարած m_c միջնագիծը հավասար $\frac{1}{2} \sqrt{2(a^2 + b^2) - c^2}$:

2. 1) Յեռանկյան հիմքը հավասար է 22 դմ-ի, իսկ կողմնային կողմերը՝ 13 դմ-ի և 19 դմ-ի: Վորոշեցեք հիմքի միջնագիծը:

2) Վորոշեցեք այն յեռանկյան բոլոր միջնագծերը, վորի մեջ a=2, b=3 և c=4:

3. Յեռանկյան մեջ յերկու կողմերը հավասար են 11-ի և 23-ի և յերրորդ կողմին տարած միջնագիծը՝ 10-ի: Գտեք յերրորդ կողմը:

4. Յեռանկյան մի կողմը հավասար է 26 դմ-ի, իսկ նրա միջնագիծը՝ 16 դմ-ի: Վորոշեցեք այդ յեռանկյան մյուս յերկու կողմերը, յեթե նրանք հարաբերում են այնպես, ինչպես 3 : 5:

5. Հավասարասրուն յեռանկյան միջնագծերը հավասար են 15, 15 և 18: Գտեք մակերեսը:

6. Յեռանկյան հիմքը հավասար է 23-ի, իսկ կողմնային կողմերի միջնագծերը 15 և $22\frac{1}{2}$: Գտեք յերրորդ միջնագիծը:

7. 1) Կառուցեք յեռանկյունը, յերբ հայտնի յեն հիմքն ու նրա ծայրերից տարված միջնագծերը:

2) Յեռանկյան հիմքը հավասար է 10-ի, իսկ մյուս յերկու կողմերի միջնագծերը՝ 9 և 12: Գտեք յեռանկյան մակերեսը:

8. 1) Կառուցեք յեռանկյունը, յերբ տված են յերեք միջնագծերը:

2) Յեռանկյան միջնագծերը հավասար են՝ 9, 12 և 15: Գտեք յեռանկյան մակերեսը:

Կիսորդներ

9. Ապացուցեք, վոր յեռանկյան գազաթի անկյան կիսորդի քառակուսին հավասար է յերկու կողմնային կողմերի և հիմքի հատվածների արտադրյալների տարբերությունը:

10. Վորոշեցեք ABC յեռանկյան A անկյան կիսորդը, յեթե յեռանկյան կողմերի յերկարությունները հավասար են՝ a=7, b=6, c=8, 2) a=18, b=15, c=12, 3) a=39, b=20, c=45:

11. Յեռանկյան յերկու կողմերը հավասար են 6-ի և 12-ի, իսկ նրանցով կազմված անկյունը՝ 120°-ի: Վորոշեցեք տված անկյան կիսորդը:

12. Յեռանկյան տված յերկու կողմերով և նրանցով կազմված անկյան կիսորդով վորոշեցեք յերրորդ կողմի հատվածները՝ b=20, c=45, b_A=24:

Ներգծած յեվ արտագծած քառանկյունների Երան. Երան.

13. 1) Ապացուցեք, վոր ուղղանկյուն յեռանկյան ներգծած շրջանի շառավիղը հավասար է եջիբի գումարի և ներքնածիզի տարբերության կեսին:

2) Եջիբը հավասար են 40 սմ-ի և 42 սմ-ի, Վորոշեցեք ներգծած և արտագծած շրջանների շառավիղները:

14. Վորոշեցեք արտագծած շրջանի կենտրոնի հարաբերական դիրքը, յեթե տված են յեռանկյան 3 կողմերը և կամ նրանց հարաբերությունը՝ 1) 5, 8, 10, 2) 8 : 7 : 5, 3) 80, 315, 325:

15. Ապացուցեք, վոր ամեն մի յեռանկյան յերկու կողմերի արտադրյալը հավասար է արտագծած շրջանի տրամագծի և յերրորդ կողմին իջեցրած բարձրության արտադրյալին:

16. Յեռանկյան մակերեսը հավասար է s-ի, նրա պարագիծը՝

$a + b + c = 2p$: Ապացուցեք, թոր 1) ներգծած շրջանի շառավիղը՝
 $r = \frac{S}{p}$, 2) արտագծած շրջանի շառավիղը՝ $R = \frac{abc}{4S}$:

17. Վորոշեցեք յեռանկյան համար R -ը և r -ը, յեթև կողմերի յերկարությունները հավասար են՝ 1) 13, 14, 15; 2) 15, 13, 4; 3) 35, 29, 8; 4) 4, 5, 7:

18. Հավասարասրուն յեռանկյան սրունքը հավասար է 6-ի, բարձրությունը՝ 4-ի: Գտեք արտագծած շրջանի շառավիղը:

19. R շառավիղն ունեցող շրջանին ներգծած է մի յեռանկյուն, թորի անկյուններից մեկը հավասար է՝ 1) 30° , 2) 45° : Գտեք այդ անկյան գիմացի կողմը:

20. Ապացուցեք հետևյալ բանաձևի ճշտությունը:

$$\frac{1}{h_a} + \frac{1}{h_b} + \frac{1}{h_c} = \frac{1}{r}$$

21. Յեռանկյան ներգծած շրջանի ափած R շառավիղը և յերկու անկյուններով՝ 45° և 60° , վորոշեցեք այդ յեռանկյան մակերեսը:

22. Վորոշե՛եք ուղղանկյուն յեռանկյան եջերը, յեթև նրանք հարաբերում են այնպես, ինչպես 20 : 21, իսկ արտագծած և ներգծած շրջանների շառավիղների տարբերությունը հավասար է 17 սմ-ի:

23. R շառավիղն ունեցող շրջանին ներգծած է ABCD ուղղանկյունը: Վորոշեցեք այդ ուղղանկյան մակերեսը, յեթև AB աղեղը պարունակում է a աստիճան [a հավասար է՝ 1) 30° , 2) 45° , 3) 60° , 4) 90°]:

§ 15. ՇՐՋԱՆԱԳԾԻ ՅԵՎ ԱՂԵՂԻ ՅԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՇՐՋԱՆԻ ՅԵՎ ՆՐԱ ՄԱՍԵՐԻ ՄԱԿԵՐԻ ՄԱԿԵՐԵՍՆԵՐԸ

Շրջանագծի յեվ աղեղի յերկարությունը

1. Հաշվեցեք շրջանագծի յերկարությունը, յեթև շառավիղը հավասար է 1) 10 ս; 2) 15 ս; 3) 35 սմ:

2. Հաշվեցեք շառավիղը, յեթև շրջանագծի յերկարությունը հավասար է՝ 1) 1 ս, 2) 25 սմ, 3) 4,75 սմ:

3. Ատամնախոր անիվի յերկու ատամների միջև հեռավորու-


թյունը հավասար է 34,5 մմ-ի, հաշված աղեղով: Գտնի՛ր ատամ ունի անիվը, յեթև նրա արամագիծը հավասար է 0,66 մ-ի:

4. Հոլովակի (շկիվ) արամագիծը հավասար է 1,4 մ-ի, և մեկ բուպեյում կատարում է 80 պտույտ: Վորոշեցեք նրա շրջանային արագությունը:

5. Տված R շառավիղով վորոշեցեք այն աղեղի յերկարությունը, թորը պարունակում է՝ 1) 45° ; 2) $24^\circ 30'$; 3) $5^\circ 14' 15''$:

6. Վորոշեցեք աղեղի շառավիղը, յեթև աղեղի յերկարությունը հավասար է 1-ի, իսկ մեծությունը (աստիճաններով արտահայտված) 1) 135° ; 2) $10^\circ 40'$:

7. Հոլովակի շրջանագծի յերկարությունը հավասար է 540 մմ-ի: Փոկը շոշափում է հոլովակը 200 մմ յերկարություն ունեցող աղեղով: Վորոշեցեք փոկի բնագրկած անկյունը՝ a (գծ. 59):



Գծ. 59.

8. Յերկաթուղագծի կորության շառավիղը հավասար է 1200 մ-ի. աղեղի յերկարությունը՝ 450 մ-ի: Աղեղը քանի՞ աստիճան է պարունակում:

9. 1) Շրջանագիծը, թորի շառավիղը հավասար է 2 սմ-ի, վերածված է աղեղի, թորի շառավիղը հավասար է 5 սմ-ի: Գտեք ստացված կենտրոնական անկյունը:

2) 4 սմ շառավիղ ունեցող աղեղը չափվում է 120° կենտրոնական անկյունով և հավասար է մի շրջանագծի յերկարությանը: Գտեք այդ շրջանագծի շառավիղը:

3) Շրջանագիծը, թորի շառավիղն է 6 սմ, բացված է աղեղի ձևով: Գտեք աղեղի շառավիղը, յեթև նրա կենտրոնական անկյունը հավասար է 300° -ի:

10. Վորոշեցեք աղեղի աստիճանների թիվը, յեթև նրա շառավիղը հավասար է R -ի և յերկարությունը՝ 1-ի՝ 1) $R=10, l=45$, 2) $R=15, l=6$:

11. Աղեղը քանի՞ աստիճան է բուպե յն պարունակում, յեթև նրա յերկարությունը հավասար է շառավիղին ($\frac{l}{r} = 0,31831$):

12. Տված a լարով վորոշեցեք նրա աղեղի յերկարությունը, յեթե վերջինս պարունակում է 1) 60°; 2) 90°; 3) 120°:


13. Աղեղի տված յերկարությունով վորոշեցեք նրա լարը, յեթե աղեղը պարունակում է 1) 60°; 2) 90°; 3) 120°:

14. Վորոշեցեք շրջանագծի շառավիղը, յեթե շրջանագիծն իր տրամագծից 107 սմ-ով յերկար է:

15. 1) Ինչքանով կմեծանա շրջանագծի յերկարությունը, յեթե նրա շառավիղը մեծացնենք m-ով:

2) Յերևակայենք, թե յերկրագունդը հասարակածի վրայից պրկված է ողկապով և վոր նույն կերպ պրկված է նաև ֆուտբոլի գնդակն իր մեծ շրջանի վրայից: Այնուհետև յերևակայենք, թե յուրաքանչյուր ողկապի շրջանագիծը յերկարացված է 1 մ-ով: Այս դեպքում ողկապերը կհեռանան այն մարմինների մակերեսներից, վորոնց առաջ պրկում էյին, կառաջանա վորոշ բացակ (արանք): Վճր դեպքում այդ բացակը մեծ կլինի—չերկրագնդի՞, թե՞ գնդակի:

16. 1) Յերկաթյա խողովակի պատի հաստությունը հավասար է 6 սմ-ի, իսկ արտաքին շրջանագծի յերկարությունը՝ 22 սմ-ի: Գտեք ներքին շրջանագծի յերկարությունը:



Գծ. 60.

2) Յերկու համակենտրոն շրջանագրծերից մեկը հավասար է 167 սմ-ի, իսկ մյուսը՝ 117 սմ-ի: Վորոշեցեք ողակի լայնությունը:

17. Վորոշեցեք շրջանագծի յերկարությունը, յեթե նա ներգծած կանոնավոր 6-անկյան պարագծից 7 սմ-ով մեծ է:

18. Սեզմենտի աղեղի յերկարությունը հավասար է l-ի և պարունակում է 120°: Վորոշեցեք այդ սեզմենտին ներգծած շրջանագծի յերկարությունը:

19. 120° պարունակող ABC աղեղի յերկու ծայրերից տարված են շոշափողներ, վորոնք հատվում են D կետում և ստացված

ACBD պատկերին ներգծած է շրջանագիծ: Ապացուցեք, վոր այդ շրջանագծի յերկարությունը հավասար է ACB աղեղի յերկարությանը:

20. 60-րդ գծագրում տված է շոշափողների ծնկաձև խողովակի ձևն ու չափերը (սանտիմետրերով): Գտեք խողովակի յերկարությունը:

21. Գտեք այն շրջանագծի շառավիղը, վորի յերկարությունն ու շրջանի մակերեսն արտահայտվում են միևնույն թվով:

22. Վորոշեցեք հարաբերական սխալը, յերբ կիսաշրջանագծի $\frac{1}{2}C$ յերկարությունը՝ փոխարինում ենք $a_3 + a_4$ -ով (շրջանագիծը մոտավորապես ուղղելու համար):

23. Շրջանագծի մոտավոր ուղղումներից մեկը կաշանում է նրանում, վոր այն փոխարինում են ուղղանկյուն յեռանկյան պարագծով, վորի մեջ եչերից մեկը հավասար է տրամագծի $\frac{6}{5}$ -ին, իսկ մյուս եջը՝ $\frac{3}{5}$ -ին: Վորոշեցեք բացարձակ սխալը:

24. Վորոշեցեք շրջանի մակերեսը, յեթե շառավիղի յերկարությունը հավասար է 1) 19 մ; 2) 4 դմ; 3) 2,6 սմ:

25. Վորոշեցեք շրջանի շառավիղը, յեթե նրա մակերեսը հավասար է 1) 2 սմ², 2) 50 մ², 3) 17 դմ²:

26. Ձեռքի նունակը (1914 թ. սիստեմ) պայթեցնելիս՝ բեկորները հարվածում են պայթեցման տեղից 45 մ-ից վոշ հեռու: Վորոշեցեք հարվածի յենթակա վայրի մակերեսը:

27. Գտեք ողահան մեքենայի մխոցի մակերեսը, յեթե տրամագիծը հավասար է 10 սմ-ի:

28. Պոմպի մխոցի հատույթի մակերեսը հավասար է 12,56 սմ²-ի: Գտեք մխոցի տրամագիծը:

29. Ծառի բուրբոնն է 1,884 մ: Գտեք նրա լայնական հատույթի մակերեսը, յեթե նա (մոտավորապես) շրջանի ձև ունի:

30. Ի՞նչքան բև կպահե կանեփե ճուղանը, վոր տրամագիծը հավասար է 18 սմ-ի, յեթե նրա թույլատրելի բեռնավորումը հավասար է 100 կգ/սմ²-ի:


31. 1) Վորոշեցեք շրջանի մակերեսը, յեթե շրջանագծի յերկարությունը հավասար է 8 սմ-ի:

2) Վորոշեցեք շրջանագծի յերկարությունը, յեթե շրջանի մակերեսը հավասար է 18 սմ²-ի:

32. 1) (Գծ. 61) III խողովակի բաց թողի ունակությունն

այնքան է, վորքան I և II խողովակները միասին վերցրած: Կառուցելով վորոշեցեք x մեծությունը (չափերը արված են գծագրում):

2) Յերկու խողովակ, վորոնց տրամագծերը հավասար են 6 սմ-ի և 8 սմ-ի, պետք է փոխարինել նույն բաց թողի ունակությունն ունեցող մի խողովակով: Գտեք վերջին խողովակի տրամագիծը:



Գծ. 61.

33. Վորոշեցեք շրջանի մակերեսը, յեթե ներգծած քառակուսու մակերեսը հավասար է F-ի:

34. Հաշվեցեք շրջանի մակերեսը, յեթե նա արտադրած քառակուսու մակերեսից 4,3 անգամ փոքր է:

35. Գտեք ներգծած և արտադրած շրջանների մա-

կերեսների հարաբերությունը՝ 1) կանոնավոր յեռանկյան համար, 2) քառակուսու համար, 3) կանոնավոր վեցանկյան համար:

36. Ուղղանկյ կաթսայի տրամագիծը հավասար է 78 սմ-ի, կշիռը՝ 652 կգ-ի, նրա հատակի կլոր բացվածքի արտաքին տրամագիծը հավասար է 36 սմ-ի: Կաթսան իր հատակի սմբողջ մակերեսով հենված է պատվանդանի վրա: Վորոշեցեք կաթսայի ծանրությունից առաջացած ճնշումը պատվանդանի 1 սմ² մակերեսով վրա:

37. Յերկու համակենտրոն շրջանագծերից մեծի լարը շոշափում է փոքր շրջանագիծը և հավասար է a-ի: Վորոշեցեք ողակի մակերեսը:

ՅԵ. Շրջանը շոշափում են իրար հավասար 6 շրջաններ, վորոնք շոշափում են նաև իրար: Ստացված 7 շրջաններն ընդգրկված են մի համակենտրոն ողակի մեջ, վորը հավասարամեծ է նրանց գումարին: Ապացուցեք, վոր ողակի լայնությունը հավասար է շրջանների շառավղին:

Ողակի մակերես

հավասար է 78 սմ-ի, կշիռը՝ 652 կգ-ի, նրա հատակի կլոր բացվածքի արտաքին տրամագիծը հավասար է 36 սմ-ի:

Սեկտոր յեվ սեգմենտ


39. Վորոշեցեք սեկտորի մակերեսը, յեթե շառավղը հավասար է r-ի, իսկ աղեղը պարունակում է՝ 1) 67°30', 2) 15°45':

40. Վորոշեցեք սեկտորի շառավղը, յեթե նրա մակերեսը հավասար է Q-ի, իսկ կենտրոնական անկյունը՝ հավասար է՝ 1) 72°, 2) 36°:

41. Սեկտորի շառավղը հավասար է r-ի, իսկ մակերեսը՝ Q-ի: Վորոշեցեք կենտրոնական անկյան (կամ աղեղի) մեծությունը:

42. Վորոշեցեք սեգմենտի մակերեսը, յեթե շառավղը հավասար է R է, իսկ աղեղը պարունակում է՝ 1) 90°, 2) 60°, 3) 45°, 4) 30°:

43. Վորոշեցեք սեգմենտի մակերեսը, յեթե ըսրը հավասար է a-ի, իսկ աղեղը պարունակում է՝ 1) 120°, 2) 90°, 3) 60°:



Գծ. 62.

Ուղեղներով յեվ շրջանագծի աղեղներով սահմանափակված պատկերի մակերես

44. Վորոշեցեք ուղղանկյունածև պատուհանի մակերեսը (գծ. 62), վորի վերևի մասը կազմում է շրջանագծի 60°-ի աղեղ: Պատուհանի բարձրությունը հավասար է 2,4 մ-ի, հաշված հիմքից մինչև աղեղի միջնակետը, իսկ լայնությունը հավասար է 1,6 մ-ի:

45. 1) Կիսաշրջանագիծը, վորի շառավղը հավասար է r-ի, բաժանված է 3 հավասար մասերի, և բաժանման կետերը միացված են տրամագծի մի ծայրի հետ: Վորոշեցեք կիսաշրջանի միջին մասի մակերեսը:

2) CD աղեղի ծայրերը հավասարապես են հեռացած AB տրամագծի ծայրերից: Վորոշեցեք CD աղեղով և AC ու AD լարերով սահմանափակված մասի մակերեսը, յեթե շրջանի մակերեսը հավասար է Q-ի և CD աղեղը պարունակում է n°:

46. Շրջանի կենտրոնի մի կողմում տարված է յերկու զուգահեռ լար, վորոնցից մեկը ձգում է 120° աղեղ, իսկ մյուսը՝ 60°: Վորոշեցեք շրջանի լարերի միջև ընկած մասի մակերեսը, յեթե շառավղը հավասար է R-ի:

47. Յերկու իրար հատող շրջանագծերի ընդհանուր լարը հավասար է α -ի, վորը մի շրջանից ձգում է 60° աղեղ, իսկ մյուսից 90° : Վորոշեցեք շրջանների ընդհանուր մասի մակերեսը (յերկու դեպք):

48. Տված շրջանի մակերեսը հավասար է Q -ի: Վորոշեցեք այդ շրջանին ներգծած ուղղանկյան մակերեսը, յեթե նրա կողմերը հարաբերում են այնպես, ինչպես $m:n$:

49. R շառավիղն ունեցող շրջանին ներգծած ուղղանկյան մակերեսը հավասար է շրջանի մակերեսի կեսին: Վորոշեցեք այդ ուղղանկյան կողմերը:

50. Շրջանին արտագծված է շեղանկյուն, վորի անկյուններից մեկը հավասար է 30° -ի: Վորոշեցեք շեղանկյան մակերեսը, յեթե շրջանի մակերեսը հավասար է Q -ի:

51. Q մակերեսն ունեցող կանոնավոր յեռանկյան արտագծած է շրջանագիծ, և նույն այդ յեռանկյունը, ներգծած է շրջանագիծ: Վորոշեցեք այդ շրջանագծերի միջև գտնվող ողակի մակերեսը:

52. AMB աղեղը պարունակում է 120° : OA -ն և OB -ն շառավիղներ են, իսկ AC -ն և BC -ն շոշափողներ: C կետից, վորպես կենտրոնից, CA -ի և CB -ի միջև դձված է DME աղեղը, վորը շոշափում է AMB աղեղը: Գտեք $CDME$ և $OAMB$ սեկտորների մակերեսների հարաբերությունը:

53. ACB աղեղի յերկու ծայրերից տարված են շոշափողներ մինչև D կետում հատվելը: Վորոշեցեք յերկու շոշափողների և աղեղի միջև ընկած $DACB$ մակերեսը, յեթե շառավիղը հավասար է R -ի, իսկ աղեղը պարունակում է՝ 1) 90° ; 2) 120° ; 3) 60° :


54. Հավասարակողմ յեռանկյան կենտրոնից դձված է մի շրջանագիծ: Վերջինս յեռանկյան կողմերը հատում է այնպես, վոր արտաքին աղեղներից յուրաքանչյուրը պարունակում է 90° : Նշանակելով յեռանկյան կողմը a , վորոշեցեք ներքին աղեղներով և յեռանկյան կողմերի միջին հատվածներով սահմանափակված մակերեսը:

55. 1) Գտնի՛ք անգամ կմեծանա շրջանի մակերեսը, յեթե նրա արտագիծը մեծացնենք 3 անգամ: Գտնի՛ք անգամ կվորքրանա մակերեսը, յեթե շառավիղը փոքրացնենք 5 անգամ:


2) Գտնի՛ք անգամ պետք է փոքրացնել շրջանի շառավիղը, վորպեսզի շրջանի մակերեսը փոքրանա 4 անգամ: Գտնի՛ք անգամ

պետք է մեծացնել շրջանի արտագիծը, վոր մակերեսը մեծանա 5 անգամ:


56. Կարելի՛ է ջրմուղի 50 մ արտագիծ ունեցող խողովակը փոխարինել 25 մ արտագիծ ունեցող յերկու խողովակներով: Մեծ խողովակի հատույթի մակերեսը հավասար կլինի՛ յերկու փոքր խողովակների մակերեսների հատույթների գումարին:



Գծ. 63.



Գծ. 64.




Գծ. 65.


57. Հաշվեցեք 63-րդ դձագրում տրված ուղղանկյան շտրիխած մասի մակերեսը:

58. Վորոշեցեք 64—67 դձագրերում շտրիխած պատկերների մակերեսները տված չափերով:

59. Յերկու հավասար կիսաշրջաններ դասավորված են այնպես, վոր նրանց արտագծերը գուգահեռ են և մեկի կիսաշրջանագիծն անցնում է մյուսի կենտրոնով: Վորոշեցեք կիսաշրջան-



Գծ. 66.



Գծ. 67


ների ընդհանուր մասի մակերեսը, յեթե նրանց շառավիղը հավասար է R -ի:

60. Գառակուսու յուրաքանչյուր կողմի վրա, վոր


մազձերի, գծված են կիսաշրջանագծեր, վորոնք գտնվում են քառակուսու ներսում: Վորոշեցեք ստացված վարդակի (розетка) մակերեսը, յեթե քառակուսու կողմը հավասար է a -ի:

61. Շեղանկյան կողմերի վրա, վորպես տրամագծերի, գրծված են կիսաշրջանագծեր (ուղղված դեպի ներս): Վորոշեցեք ստացված վարդակի մակերեսը, յեթե շեղանկյան անկյունագծերը հախասար են a -ի և b -ի:

62. Ծրուագիծը բաժանված է հավասար մասերի և նրա լերկու ծայրերից տարված են բաժանման բոլոր կետերով անցնող կիսաշրջանագծեր այնպես, վոր մի ծայրից տարված կիսաշրջանագծերն ընկնում են տրամագծի մի կողմը, իսկ մյուս կողմից տարվածները՝ հակառակ կողմը: Ապացուցեք, վոր ստացված կոր դձերով շրջանը բաժանվում է հավասար մասերի, իսկ յուրաքանչյուր մասի պարագծի յերկարութունը հավասար է շրջանագծի յերկարությանը:



Գծ. 68.



Գծ. 69.


63. Հավասարակողմ յեռանկյան յուրաքանչյուր գույգ գաթներից տարված են աղեղներ, վորոնք անցնում են յեռանկյան կենտրոնով (գծ. 68): Վորոշեցեք ստացված վարդակի մակերեսը, յեթե յեռանկյան կողմը հավասար է a -ի:

64. A և B կետերի միջև տարված է յերկու աղեղ, վորոնք իրենց կորությունով ուղղված են միևնույն կողմ: AMB աղեղը պարունակում է 240° , իսկ ANB աղեղը՝ 120° : Այդ աղեղների միջնակետերի հեռավորությունը հավասար է a -ի: Վորոշեցեք լուսնյակի մակերեսը (գծ. 69):

65. AB-ն և CD-ն յերկու փոխադարձ ուղղահայաց տրա-

մազձեր են: D կետից, վորպես կենտրոնից, DA շառավղով գրծված է AMB աղեղը: Ապացուցեք, վոր AMBC լուսնյակը հավասարամեծ է ABD յեռանկյան:

66. Տված է կիսաշրջանագծի C կետից AB տրամագծի վրա իջնցրել են CD ուղղահայացը, և AB տրամագծի AD և DB հատվածների վրա կառուցված են նոր կիսաշրջանագծեր, վորոնք գտնվում են տված կիսաշրջանագծի մի կողմում: Ապացուցեք, վոր յերեք կիսաշրջանագծերի միջև գտնվող մակերեսը հավասար է CD տրամագիծն ունեցող շրջանի մակերեսին:




Գծ. 70.


67. Հաշվեցեք 70-րդ գծագրում շարիխած պատկերի մակերեսը: Չափերը տված են միլիմետրերով:

68. Հաշվեցեք 71-րդ գծագրի վրա պատկերված հատույթի մակերեսը: Չափերը տված են միլիմետրերով:

69. Վորոշեցեք 72-րդ գծագրի վրա պատկերված ձևավոր յերկաթի լայնական հատույթի մակերեսը:



Գծ. 71.



Գծ. 72.

70. Յերկու գուղգահեռ լարեր հավասար են 14 մ-ի և 40 մ-ի, իսկ նրանց հեռավորությունը հավասար է 39 մ-ի: Վորոշեցեք շրջանի մակերեսը:

71. Վորոշեցեք սեկտորին ներգծած շրջանի շառավիղը, յեթե սեկտորի շառավիղը հավասար է R-ի, իսկ աղեղը պարունակում է α աստիճան [$\alpha=1$) 60° ; 2) 90° ; 3) 120°]:


§ 16. ՀԱՆՐԱՀԱՇՎԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՅԵՐԿՐԱԶՍՓՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ԲԱԺԱՆՈՒՄ ՄԻՋԻՆ ՅԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՄԲ

Բաճառների կառուցումը

1. 1) Կառուցեք այն հատվածները, վորոնք հավասար են $\sqrt{6}$ -ի և $\sqrt{7}$ -ի:

2) 73-րդ դժադրում աված է՝ $OA=AB=BC=CD=DE=EF=FG=GH=HK=KL=1$: Ընդվորում $AB \perp AO, BC \perp BO, CD \perp CO$ և այլն, ձաղվեցեք $OB, OC, OD, OE, OF, OG, OH, OK, OL$ հատվածները:

3) Կառուցեք հատվածներ, վորոնք հավասար են՝ $\sqrt{11}, \sqrt{12}, 2\sqrt{3}, \frac{1}{2}\sqrt{5}, \frac{3}{5}\sqrt{6}$:



ԳՃ. 73.

2. Կառուցեք յեռանկյուն հետևյալ կողմերով՝ $\sqrt{2}, \sqrt{5}, \sqrt{7}$:

3. Ցույց ավեք հետևյալ արտահայտությունների չափումները, վորոնց մեջ յուրաքանչյուր տառ, բացի π -ից նշանակում է հատվածի յերկարություն:

1) $3,5a$, 2) $2\pi R$, 3) $RV\sqrt{3}$,

4) $\frac{bh}{2}$, 5) abc , 6) $\pi r^2 h$,

7) $\frac{abc}{d}$, 8) $\frac{3a}{2b+c-4d}$,

9) \sqrt{ab} , 10) $0,5\pi D$,

11) $\sqrt{a^2+b^2+c^2}$, 12) $\sqrt[3]{a^2h}$

13) $R\sqrt{2-\sqrt{2}}$, 14) $2\pi R^2+2\pi RH$, 15) $\frac{\pi D^3 H}{4}$,

16) $\frac{(a+b)h}{2}$, 17) $\frac{4}{3}\pi R^3$, 18) $\sqrt{p(p-a)(p-b)(p-c)}$:

4. Հետևյալ բանաձևերից վորոնք են անհամասեռ.

1) $x = \frac{ab}{c} + \frac{b^2}{d} - 3a$, 2) $x = \sqrt{c-2}$, 3) $x^2 = \frac{a^3-b^3}{a+b}$,

4) $x=2$, 5) $x=a+bc^2$, 6) $x = \frac{a}{b}$,

5. Վերականգնեցեք հետևյալ գծային բանաձևերի համասեռությունը.

1) $x=3$, 2) $x=a^2$, 3) $x=2km$, 4) $x = \frac{a}{b}$,

5) $x = \frac{1}{a}$, 6) $x = \sqrt{a}$, 7) $x=2\pi$, 8) $x = \sqrt{3}$,

9) $x = \sqrt{\frac{a}{b}}$, 10) $x = a\sqrt{b}$, 11) $x = \frac{a}{\sqrt{a+\sqrt{b}}}$,

12) $x = \frac{p + \sqrt{q^2 - 1 + 3}}{pr}$,

6. Կառուցեք հատվածներ, վորոնք արտահայտվեն հետևյալ ռացիոնալ բանաձևերով.

1) $x = 3\frac{1}{2}a$; 2) $x = a - (b+3d)$, 3) $x = 3c - (2m-n)$,

4) $x = \frac{2ab}{3c}$, 5) $x = \frac{ab}{c+d}$, 6) $x = \frac{a^2}{b}$, 7) $x = \pi r$,

8) $x = \frac{pqr}{st}$, 9) $x = \frac{ab}{c-d}$,

7. Կառուցեք հատվածներ, վորոնք արտահայտվեն հետևյալ իռացիոնալ բանաձևերով՝

1) $x = \sqrt{3ab}$, 2) $x = \sqrt{\frac{a^2b}{c}}$, 3) $x = \sqrt{a^2 \pm b^2}$,

4) $x = \sqrt{4a^2 - b^2}$, 5) $x = \sqrt{b^2 + 3c^2}$, 6) $x = a\sqrt{\frac{a+c}{b+d}}$,

Պատկերների կառուցումը

8. Կառուցեք մի քառակուսի, վորո հավասարամեծ է a կողմն ունեցող աված հավասարակողմ յեռանկյանը:

9. Կառուցեք մի շրջան, վորի մակերեսը 2 անգամ մեծ լիներ R շառավիղն ունեցող շրջանի մակերեսից:

